



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

612.6

Z-26

854

2.
3.

~~W 250~~

1003
10230

612.6

Нужно

2-26

Генерал

Рисование

2010


1916


~~1916~~

3474

~~6035~~

2002





610
120-20

Գ. Ա. Ղ. Տ. Ն. Ի. Բ. 1916

Բ Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

աՄ

612.6
2-26



ԿԱՄ
ՍԿԶԻՈՒՆՔ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԾՆՆԴԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒՐՈՊԻՈՅ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՅ ԱՐԴԻ ԴԲՈՒԹԵԱՆ
ՀԱՄԵՄԱՏ

1003
10230

ԱՐՄԵՆԱԿ ՀԱՅԿՈՒՆԻ



Կ. ՊՕԼԻՍ

Ա. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՊԱՐԱՆ

ԻՄԱՄ — ԱԱԼԻ ԽԱՆ, ԹԻԻ 15

16113



THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

1933

Այս գրգռոյլը՝ որ այսօր Հայ հասարակութեան կուտամք, հարկաւ շատ մը տարածայնութեանց պատճառ պիտի լինի, բայց որովհետեւ մենք աւելի սկզբունքի կը ծառայեմք քան թէ սովորութեան, եւ միանգամայն կը փափաքիմք որ ազգերնիս ամեն տեսակ ուսմանց, գիտութեանց եւ արհեստից մէջ յառաջանայ, չեմք կարող ամենեւին միտ դնել տարածայնութեանց, վասն զի գիտութիւն մը ուսմունք մը եւայլն ինչ նիւթի վրայ ալ կ'ուզէ թող լինի պէտք է հրատարակուի, այլ մանաւանդ այնպիսի գիտութիւններ որ ուղղակի մարդկային սեռին կը վերաբերին :

Պէտք է դիտնալ թէ բնութեան մէջ գտնուած ամեն օրէնք Տիեզերական է, եւ բնութիւնը չունի այնպիսի օրէնք մը որ մասնաւոր լինի, ամենաստորին ձրձիներէն սկսեալ մինչեւ մարդս միեւնոյն օրէնքներով կը ծնին, կ'ապրին, կը ծնանին եւ կ'այլափոխին կամ կը մեռնին, նմանապէս բուսականները, հանքայինք եւայլն միեւնոյն օրէնքներով կը գոյանան, կը գոյացնեն եւ կ'այլափոխին, եւ բոլոր տիեզերքին մէջ իր մը, շամանթազ մը, գոյացութիւն մը անգամ չիկայ որ զատ կամ մասնաւոր օրէնքի մը ազդեցութեան ներքեւ գտնուի :

Այս ըսածնիս ապացուցանելու համար հարկ է մեզ քանի մը օրինակներ տանք. Չերմութիւնը այնպիսի ասդեցութիւն մը կամ գոյութիւն մի է, առանց որոյ ամենեւին իր մը ոչ կրնայ գոյանալ եւ ոչ ալ ապրիլ. վերցուր Չերմութիւնը իրի մը մէջէն՝ ահաւասիկ նոյն իրը կանյայտանայ, վասն զի ամեն իրի կենսական զօրութիւնը Չերմութիւնէն կախումն ունի գլխովին : Տի-

եղերական Աշխարհաց բանակը միմիայն ջերմութեան շնորհիւն է որ գոյ է, նմանապէս նոյն ջերմութեան շնորհիւն է որ ամենաստորին ճճի մը, բոյս մը, հանք մը եւ այլն գոյացած են եւ կ'ապրին. եւ ինչպէս որ թէ որ այս ետքիներէս մէկուն ջերմութիւնը վերնալով ինքն ալ կ'անյայտանայ, նոյնպէս ալ բոլոր տիեզերքը կ'անյայտանայ՝ թէ որ ջերմութիւնը վերնայ նորա մէջէն: Իրաւ է որ մարդս դեռ չիկարողացաւ գիտնալ թէ ինչ են ջերմութիւնը եւ գոյութիւնը, եւ ասոնց վրայ լուսաբանելու անկարող գտնուեցաւ զատ զատ, այլ սակայն կարող եղաւ գիտնալու թէ գոյութիւնը ջերմութեան հետ անքակտելի է եւ թէ անով է միայն որ իր մը գոյ է. խիստ երեւելի բնագիներ թէ եւ շատ ջանացին՝ այլ սակայն ամենեւին չի կրցան միջոց մը գտնել որ իր մը զատէին ջերմութիւնէն եւ կամ թէ ուրիշ խօսքով ջերմութիւնը պակսեցնելին իրի մը մէջէն. բնութիւնը ծաղրեց մինչեւ այսօր մարդկային այս ջանքը եւ տարակոյս չիկայ որ յաւիտեանս ալ պիտի ծաղրէ: Ջերմութիւնէն ետքը լոյսն որ գոյացութեան կամ կենսականութեան մէկ գլխաւոր տարրը կը կազմէ, ինչպէս որ ընդհանուր Տիեզերքին նոյնպէս ալ մանանեխի հատէ մը բիւրաւոր անգամ փոքրիկ ճճիի մը վրայէն կամ մէջէն չիպակասիր, լոյսով է որ տիեզերքը եւ ստորին կենդանի մը միահաւասար կերպով երջանկութիւն կը վայելեն, կը գունաւորին եւ այլն:

Վերջապէս օրէնք մը բնութեան Պոցին մէջ չի կըրնար գտնուիլ՝ որ ընդհանուր չիլինի. ամեն իր մի եւ նոյն օրէնքով կը գոյանան, միեւնոյն օրէնքով կ'ապրին, միեւնոյն օրէնքով կը յղանան եւ կը յղացնեն եւ միեւնոյն օրէնքով կ'այլափոխին, եւ ինչպէս որ ջերմութեամբ կը գոյանան կը կենդանաւորին, լուսով կը գունաւորին, ուտելիքով եւ այլն կը սնանին, նոյնպէս ալ կը յղանան եւ կը յղացնեն, եւ բոլոր տիեզերքին մէջ բան մը չիկայ որ չի յղանայ կամ չի յղացնէ, ամեն իր երկու սկզբունքն

ունի, արական եւ իգական, յղացող եւ յղացող կամ արտադրող, օղը, ջուրը, հողը, հանքը, բոյսը, ճճիք, սողունք, թռչունք, ձկունք, չորքոտանիք եւ այլն երկասեռ են, մինչեւ անգամ լոյսն եւ ջերմութիւնը. միլիոնաւոր արեգները, աստղերը, մոլորակները, որոնք ամենքն ալ զանազան տեսակ գոյացումն, շարժում ունեցող աշխարհքներ են ամենքն ալ ուրիշներէ արտադրուած են, լուսինը այս աշխարհէս եւ մեր արեգակնային դրութեան մէջ գտնուած աշխարհքները արեգակէն արտադրուած եւ ծնած են, եւ մեր արեգակն անշուշտ ուրիշէ մը արտադրուած է, եւ օր պիտի գայ անտարակոյս երբ մեր երկիրն ալ ուրիշ երկիրներ արտադրէ եւ ինքը նոցա կեդրոն լինի, ինչպէս որ արեգակն է այսօր մեր դրութեան կեդրոն:

Ասոնց նման է նաեւս յղութեան օրէնքը, եւ Տիեզերքին մէջ բան մը չիկայ որ զուգաւորութեամբ չի յըզանայ եւ չի ծնի, եւ ամեն իր կամ գոյութիւն իւր արականը եւ իգականը ունենալով զուգաւորական օրէնքին հպատակ են առանց բացառութեան, եւ ինչպէս որ բիւրաւոր տիեզերաց մէջ կենդանութիւն չի գըտնուած կէտ մը չիկայ, նոյնպէս ալ զուգաւորութեան օրէնքով չի շարժող իր մը չիկայ եւ բոլոր տիեզերքները իւր մէջը առնող անհարկու տարածութիւնը շարունակ նոր աշխարհքներով, տիեզերքներով ճոխանալու վրայ է . . . Հոս մարդկային ամբարտաւանութիւնը պարտի խոնարհիլ ԱՆՈՐ առջեւ որ հրամայեց եւ սկսաւ ստեղծագործութիւնը. որքա՛ն տարապայման յիմարութիւն է բոլոր այս խորհրդաւոր տիեզերագործութեան մէջ Արարիչ մը չի տեսներ, խորհող Արարիչ մը . . . Երկրպագելի Արարիչ մը:

Գառնալով մեր բուն նպատակին խօսիմք մեր անձերուն վրայ, մեր վրայ՝ որ Արարչին ամենէն զարմանալի արարածներն եմք եւ սկսիմք խորհիլ թէ մենք ինչպէս վարուելու եմք այն տիեզերական մեծ օրէնք

քին նկատմամբ որ կը պատճառէ նոր գոյացութիւններ, մտածեմք մի անդամ թէ մենք ինչ պարտականութիւն ունիմք աճելու նկատմամբ, եւ թէ այս պարտաւորութիւններնիս ինչպէս պարտիմք կատարել . . . այլ սակայն մեր աշխատութիւնը Ազգերնուս արդի կացութեան աւելի օգտակար ընելու համար նախ բացատրեմք մարդկային ճննդականութեան սկզբունքը :

Չեղաւ զխտութիւն մը եւ կամ ուսում մը, որ առաջին անգամ ձայնը լսուելուն չի դաստատարուեցաւ, Գալիլէոս Հռովմայ Պապերէն մէկէն անիծուեցաւ եւ բանտարկուեցաւ՝ Աստեղաբաշխութեան մէջ իւր ըրած նոր գտումներուն համար, եւ ուրիշ քանի քանիներ այրուեցան աքսորուեցան տանջուեցան, նոր զխտութիւններու հեղինակ կամ հրատարակիչ լինելուն համար, ուստի մենք որ նոր գտում մը հրատարակելու ձեռք չեմք զարկած, այլ միայն մենէ շատ լուսաւորեալ եւ բարեկարգեալ ազգաց մէջ միլիոնաւորներով հրատարակուած, համալսարաններու մէջ դաստրուած եւ գրեթէ իւր կատարելութեանը հասած զխտութեան վրայ պիտի խօսիմք, ամենեւին վոյթ չեմք կրնար ընել թէ որ խել մը գլուխներ խոժոռին մեզ գէմ եւ դատապարտեն մեզ եւ մեր աշխատասիրութիւնը, մանաւանդ որ յոյսերնիս մեծ է ժամանակին եւ արդի երիտասարդութեան վրայ, որոնք մի միայն կան այսօր ամեն տեսակ զխտութեանց քաջալերութիւն կարգացող :

Սակայն չեմք ուզեր առանց քանի մը խօսք ըսելու անցնիլ մեր արդի հրատարակած Սկզբունք Մննդականութեան անուն զխտութեան վրայ, եւ չի յայտնել թէ ինչ օգուտներ ունի այս զխտութիւնը եւ թէ որքան վնասներ յառաջ կրնան դալ այս զխտութեան վրայ տգէտ լինելէն :

Ամէն բանէ առաջ սա յիշել օրինաւոր է թէ մարդկային ազգը օրէ օր լուսաւորելու, բարեկարգելու եւ

իւր կատարելութեանը հասնելու համար, պարտաւոր է աշխատիլ որ աշխարհիս վերաբերեալ ամեն գիտութեան եւ ուսման տեղեակ լինի, առանց ամենեւին նրկատելու թէ քաղաքականութիւնը եւ ժամանակի սովորութիւնը ինչ աչքով պիտի նային նոցա վերայ, ինչու որ գիտութիւններն են միայն որ մարդս իւր բնակելիք աշխարհին գաղտնիքներուն տեղեակ ընելով, զանի օրինաւորաբար վայելելու միջոցները կը դիւրացնեն: Արաբացիք թուագիտութեան շնորհիւր աստեղաբաշխութեան գիտութիւնը գտան եւ իրենց օրերուն չաբաթներուն, ամիսներուն եւ տարիներուն սահման դրին, աշխարհագրութեան շնորհիւր Քրիստափոր Գոլոմպոս Ամերիկան գտաւ, ուր հիմա 50 միլիոնի մօտ մարդկային բազմութիւն մը կը բնակի եւ կը բազմանայ, եւայլն եւայլն. իսկ անդամազննութեան գիտութեան շնորհիւն է որ մարդկային ազգը բնաջինջ ընող շատ մը հիւանդութիւններու դարմանները գտնուեցան հալածուեցան, վերջապէս զանազան տեսակ գիտութեանց շնորհիւն է որ աշխարհս իւր արդի երջանկութեան մերձ կացութեան հասաւ եւ օրէ օր պիտի աւելի երջանիկ եւ խաղաղ լինի, քանի որ մարդկային միտքը լուսաւորող գիտութիւնները կատարելագործուին:

Մեր այս դիտողութիւններնուս Աւրոսլիոյ եւ Ամերիկայի ամեն լուսաւորեալ ազգեր համոզուած լինելով՝ զգուշելով կը նախատեն այնպիսի Ազգ մը որ գիտութիւններէ խորչելով՝ յետադիմութեան մէջ կը մնայ եւ չ'օգնէր մարդկային Ազգին կատարելութեանը:

Ծննդականութեան գիտութեան օգուտները թէ որ մի առ մի յիշելու ելլեմք, կարող չեմք ամենեւին այսպիսի փոքրիկ գրկոյկի մը մէջ զանոնք ամփոփել, ուստի բաւական կը սեպենք սա չափս միայն ըսել թէ, թէ որ աղջիկ մը իւր ստամոքսին կազմութեանը եւ գործողութեանը տեղեակ լինելով կը զգուշանայ որ եւ իցէ կենաց մնասակար կերակուրներ ուտե-

լէ, եւ իւր կուրծքին եւ մէջքին կազմութեանը եւ ներքին գործարանաց տեղեակ լինելով՝ կը զգուշանայ +օրէի վտանգաւոր սովորութիւնէն, նոյնքան ալ նա իւր ծննական գործարանաց, այսինքն գլխաւորաբար իգութիւնը կազմող գործարանաց կազմութեանը եւ գործածութեանը վրայ տեղեկութիւն ստանալով՝ պիտի զգուշանայ բոլոր այն երկիւղակից գաղտնի սովորութիւններէն՝ որոնցմով աղջիկները շատ մը հիւանդութիւններու ենթակայ կը լինին. եւ դարձեալ ինչպէս որ իւր ստամոքսին շէնքին վրայ տգէտ եղող մը միշտ վտանգաւոր ընթացք մը ունի իւր կերութեամբն մէջ, նոյնպէս ալ իւր ծննդական գործարանաց շէնքին փափկութեանը վրայ տգէտ աղջիկ մը հարկաւ զոհ պիտի լինի իւր տգիտութեանը . . . Իսկ ասոնցմէ՝ ի զատ թէ որ ամեն ամուսնացող մարդ կատարեալ տեղեակ լինի իւր երջանկութեանը համար իրեն յանձնուած կոյսի մը ծննդական գործարանաց փափկութեանը՝ հարկաւ շատ մը չարիքներ պիտի վերնան աշխարհէս, որ յառաջ եկած են էրիկ մարդոց այս կէտիս վրայ ունեցած ցաւալի տգիտութենէն : Ահաւասիկ մեր աւագոյցները ծննդականութեան գիտութեան կարեւորութիւնը հաստատելու համար, որոնք թէ որ բաւական չեն մէկը համոզելու այս գիտութեան կարեւորութեանը, անանկին մենք ալ ուրիշ խօսք մը չեմք կարող ընել . . . ասկից ի զատ թէ խաբչիկ մը ճերմկեցնելը աւելի դիւրին է քան թէ այնպիսի մէկը ճշմարտութեան առջեւ խոնարհեցնելը :

Իսկ այսպիսի գիտութեան մը հրատարակումը թէ որ շատերուն աչաց գէշ կ'երեւայ, մեր մի միայն ըսելիքը սա է այսպիսիներուն՝ որ նախ Արարիչն համոզեն որ այսպիսի ամօթալից անդամներ ալ եւս չիտայ մարդկային սեռին՝ որոնց վրայ խօսիլն անգամ պարկեշտութեան դէմ է : Եղնակ որ մարդս իւր կրից ապօրինաւոր գործադրութիւնը արիարար չի կրնալ կարգադ-

րելովը՝ ծուռ աչքով կը նայի ամենագէտ Արարչին մեզի շնորհած այն երջանկարար սլարգեւներուն վրայ, որոնց օրինաւոր գործածութեամբը միայն հնարաւոր է խել մը թշուառացուցիչ սլատահարներէ ազատիլ եւ վայելել այն ամեն երանութիւնները՝ որ մարդկային ցեղին բազմանալուն մի միայն միջոց եղող գործարաններնիս մեզ կրնան մատակարարել. . . Եղճկ որ մեր այս գիտութեան վրայ տգէտ լինելովնիս կրած սպերջանկութիւննիս չկրնալով տեսնել՝ եւ նոյն գիտութեան վրայ հմտութիւն ունենալով վայելելիք օրհնութիւններնիս չկարենալով գուշակել՝ տեսակ մը ապուշ խաւարասիրութեամբ ամենախոնարհ հպատակ եւ թէ գերի եղած եմք մէկ սովորական նախապաշարման մը որով մարդկային սեռը օրէ օր տկարանալու եւ փճանալու ճամբուն մէջ մտած է : Արդ սիրելի ընթերցող, ով որ կ'ուզես եղիր, ինչ գաղափար կ'ուզես ունեցիր մի անգամ կարդայ այս գիրքը ուշի ուշով եւ տես թէ որքան մեծ օգուտներ պիտի քաղես անկից :

Արդի աշխատասիրութեանս կատարելութիւնը յայտնելու համար բաւական է կարծեմ թէ որ յիշեմ հոս որ թէեւ մենք տարիներէ հետէ այս գիտութեան ամեն մէկ ճիւղերուն մէջ բաւական հմտութիւն ստացած եմք, սակայն աւելի վստահելի ընելու համար մեր արդի աշխատութիւնը մեզ օգնական եւ առաջնորդ ըրած եմք Եւրոպիոյ ամենէն երեւելի բժշկականութեան, անդամազննութեան եւ դահեկութեան դասատուները որ ասոնք են. Նեկլ, Փ. Տըպօա, Ըսթօլճ, Վէլբէօ, Մօրիւ, Տէսէրմէօ, Տըկէօ, Կուլէմօ, Պըրնս, Քամֆէլ, Մէրրիմէն, Ռամսալօթամ, Տիուզ, Մէիքս, Րիկսլի, Բէօ, Տէլամօթ, Լիվրէթ, Ըսմէլի, Պօտելօք, Կարտիէն, Քէբրօն, Ժաքքիւմէր, Սիմբսըն, Թիլըր, Ըսմիթ, Տըբէօլ, Տը Վիլիէր, Մատամ Լաշաբել, Անտրէալ, Քավալէթ, Մ. Քօսթ Վ. Ռ. Պըլլօք, Փ. Քալօզ, Հան, Հալլօք, Թ. Լ. Նիքօլաս, Թէյլր եւայլն :

Արդ ընթերցողը կրնայ մակարերել թէ՛ որքան թանկագին աշխատասիրութիւն մի է այս , եւ հետեւաբար որքան անգթութիւն է այսպիսի գրքի մը վերայ ծուռ նայիլը , որոյ հեղինակը մի միայն իւր ազգակիցներուն օգտակար լինելու համար գիշերը ցորեկին հետ միացուցած այս աշխատութիւնս գլուխ հանած է :

Հարկ է հոս յիշել նաեւ որ մենք մեր կողմանէ որքան որ հնարաւոր էր հայերէն բառերով բացատրեցինք այն ամեն անդամագննական բառերը որոնք ամեն Եւրոպական ազգ Լատիններէնը կամ Հելլենականը կը գործածեն , իսկ այն բառերը , որոյ անուն մը դնել մեր լեզուն չէր ներեր՝ եղածին սլէս թողուցինք , մանաւանդ այն անունները որոնք անդամագննի մը անունովը կոչուած եւ այնպէս մնացած են : Իսկ բոլոր գործածած անդամագննական բառերնու բժշկական անունները գրքիս սկիզբն բացատրած եմք , միանգամայն պատկերները :

Ահաւասիկ մեր կողմանէ այսչափ յառաջաբանելնուս յետոյ կը նուիրեմք մեր աշխատութիւնը Հայ հասարակութեան , յուսալով որ արդի լուսաւորեալ մտքերը բաւական համարձակութիւն ունին Աստուծոյ՝ գերազնիւ արարածոց շնորհած մէկ ամենազարմանալի գործարանին վրայ տեղեկութիւն ստանալու :



ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ՆԻՒԹՈՅ

ԳԼ Ա .	Ծննդական գործարանաց վրայ ընդհանուր տեսութիւն	1
ԳԼ Բ .	Իգական ծննդական գործարաններ	5
ԳԼ Գ .	Իգական ներքին ծննդական գործարաններ	15
ԳԼ Դ .	Կանանց հաւկիթը	24
ԳԼ Ե .	Կանանց ամսական արեան հոսումն	26
ԳԼ Զ .	Արական ծննդական գործարաններ	55
ԳԼ Է .	Սերմնահեղուկ եւ սերմնորդք	41
ԳԼ Ը .	Սերական միաւորութիւն կամ զուգաւորութիւն	45
ԳԼ Թ .	Յղութիւն	48
ԳԼ Ժ .	Սաղմնական սնունդ	54
ԳԼ ԺԱ .	Սաղմնական շրջանառութեան մասնառարութիւնքը	57
ԳԼ ԺԲ .	Արգանդէն դուրս յղութիւն եւ անբնական դէպքեր	58
ԳԼ ԺԳ .	Երկուորեակ եւ կրկին յղութիւն	60
ԳԼ ԺԴ .	Տեւողութիւն յղութեան եւ մանկան ապրելու միջոցը	61
ԳԼ ԺԵ .	Հետաքրքրական եւ կարեւոր տեղեկութիւնք	65



- Արտաքին բացուածք . (Վլլվա , Փօսս մանկնա) :
- Արտաքին շրթունք . (Լապիա բուտենթի , Լապիա մա-
ժորա) :
- Անառակ մասնք . (Բրօսթէդ կլանտս) :
- Արտաքին մաշկ . (Սգրօթիւմ) :
- Ամորձիքներու վարիչ . (րէթէ թէսթիս) :
- Բուսական փամփուշտ . (Կէրմինէլ վէսիքլ) :
- Բազմաթել թաղանդ . (Ֆիպրիւզ թիւնիք)
- Բազմախորշ մարմին . (Քօրրիւս քավէրնօսիւմ) :
- Երկրորդ մաշկ . (Տարթօս) :
- Երրորդ մկանունք . (Քրէմասթր մոքլ)
- Թաղանդային սլարկ . (Թունիքա վաճինալիս) :
- Թաղանդամաշկեայ (Թունիքա ալալիւճինա) :
- Իգամուտք . (վաճինա) :
- Ծայր մաշկ . (Բրէբիւս) :
- Ծողք . (Բեւլիս) :
- Կղիթորիկ . (քլիթորիս) :
- Կրարեան խոռոչք . (Չրաֆիան վէսէքլ) :
- Կղկղանցք . (րէքթիւմ) :
- Կղիթոր կամ Արանդամ . (րէնիս) :
- Կապիճք . (Վիթէլիւս) :
- Հեշտական լուսին . (Մօնս վէներիս) :
- Հիմէն . (Հիմէն) :
- Հաւկիթ . (Օվա) :
- Չուարարք . (Օվարիսս)
- Ղենջակ . (Աբրօն) :
- Մասնք . (Կլանա) :
- Միզանցք . (Ուրէթրա) :
- Մասնքի աղօս . (Քարոնա կլանտիս) :

Յաւերժահարս կամ Ներքին շրթուներ . (նիմֆ . լապիս
մինօրս) :

Շտապող ծորակներ . (էփէքիւլէթօրի քանալս) :

Ստորակէտ . (Բերենիւմ) :

Սերմնատար անցք . (Վասա տիֆէրէնթիա) :

Սերմնական անօթք . (Սիմինէլ վէսիքլս) :

Սերմնատար անօթ . (Վասա տիֆէրէնս) :

Սերմնարար տաշտք . (Թիւպիւլի սէմինիֆէրի) :

Սերմնական լար : (Սբէրմաթիք քօրտ) :

Սերմնարարք . (Վէսիքքիւլէա սէմինալէս) :

Սպունգային մարմին . (Քօրբիւս սբօնկիօսիւմ) :

Սերմնորդք . (Սբէրմաթօզա , անիմալքիւլէս) :

Վիզ . (Նէք)

Վարիչ անօթ . (Մէտիաթինիւմ)

Վերնամաշկ . (էքիտիտիմիւս) :

Տուիչ անօթ . (Վասա տիֆէրէնթիա) :

Փալօպեան տաշտք . (Ֆալօբիան թըպս) :

Փուրքէթ . (Ֆուրկէթ) :

Փամփուշտ . (Պլէտր) :

Քօրէրեան մսանք . (Քօրրս կրանտս) :



- ՁԵԻ 1 . Ա , Հեշտական լուսին . Բ , Արտաքին շրթ-
թունք . Գ , Կղիթորիկ . Դ , Ե , Յաւերժա-
հարս . Ջ , Ը , Իգամուտք . Կ , Փուրքէթ :
- ՁԵԻ 2 . Ա , Կղիթորիկ . Բ , Արտաքին շրթունք . Գ ,
Դ , Յաւերժահարս , Ե , Ջ , Հիմէն . Ջ , Փուր-
քէթ . Կ , Ստորակէտ :
- ՁԵԻ 3 . Ա , Կղիթորիկ . Բ , Արտաքին շրթունք . Գ .
Դ , Յաւերժահարս . Ե , Ջ , Ջ , Մանիկաձեւ
Հիմէն . Կ , Ստորակէտ :
- ՁԵԻ 4 . Ա , Փամիսուշտ . Բ , Արգանդ . Գ , Կղկղանցք .
Ջ . Իգամուտք :
- ՁԵԻ 5 . Ա , Արգանդ . Բ , Արգանդի մուտք կամ վիզ .
Գ , Դ , Ե , Ջ փալօպեան տաշտք , Անցք եւ-
այլն . Կ , Իգամուտք . Ջ , Ջ , Յողակապք :
- ՁԵԻ 6 . Ա , Արգանդին գագաթը . Դ , Դ , Տաշտանցք .
Ե , Ե , փալօպեան տաշտք . Ջ , Ջ , Չուարարք .
Կ , Կ , Յողակապք . Բ , Արգանդին ներսը .
Ջ , Ջ , Արգանդի Յողակապք . 0 , Արգանդի
վիզ :
- ՁԵԻ 7 . Ա , Բ , Գ , Շրջապատ արգանդի . Դ , Արգան-
դին ներքին մուտքը :
- ՁԵԻ 8 . Ա . Արգանդին գագաթը . Բ , Բ , փալօպեան
տաշտք : Գ , Դ , Ե , Չուառուք . Ջ , Ջ , Կ , Յո-
ղակապք :
- ՁԵԻ 9 . Ա , Հաւկիթ կանանց . Բ , Գ , Դ , Չուանցք .
Ե . Չուառու :
- ՁԵԻ Ա 9 . Սաղմին առաջին վիճակը :
- ՁԵԻ 10 . Կանանց Հաւկիթին մէջը :
- ՁԵԻ 11 . Ա , Կանանց հաւկիթ . Բ , Գ , Դ , Կրապեան
անօթ :

ՁԵԻ 12 . կրօնական անօթ առանց հաւկիթի :

ՁԵԻ 13 . Ա , Արգանդին մուտքը . Բ , Գ , Դ , Ե , Զ ,
Արգանդի շրջապատ :

ՁԵԻ 14 : Չուանցք վիրաւորեալ :

ՊԱՏԿ . Ա . Ա , Փամփուշտ . Բ , կղկղացք , 1 , Ամորձիք .
2 , 2 Սերմնատար տաշտք . 3 Սերմնական ա-
նօթք , 5 Անառակ մասնք . 4 Շտապող ծօ-
րակներ 7 , 7 Միզանցք . 8 կղիթոր կամ ա-
րանդամ . 9 Գնտակ , 10 Մասնք :


ՊԱՏԿ . Բ . 1 Սերմնորդին առաջին վիճակը դեռ հաւկի-
թի մէջ . 2 Սերմնորդերուն իրենց հաւկիթէն
ազատելին . 3 Սերմնորդի ընթացքը Իգա-
մուտքի մէջ . 4 Ուղիղ սերմնորդ Ա . գլուխ
սերմնորդի . 5 Որ եւ իցէ պատճառաւ կոտրած
սերմնորդերուն վիճակը :

ՊԱՏԿ . Գ . Ա , Առողջ ամորձիք . Բ , Ախտացեալ ամոր-
ձիք . Գ , Հաստացած եւ բորբոքեալ անօթ-
ներ : Այս հիւանդութիւնը գլխաւորաբար գի-
ճութիւնէ յառաջ կուգայ . կարգայ Գերեզ-
մանք երիտասարդաց տետրակին 11 երրորդ
երեսը :



« Երկնից մարդկային սեռին շնորհաց ամենէն
գլխաւոր եւ ամենէն ընտիր պարգեւը կեանքն է,
որոյ յարգը չի ճանաչողը մարդկային ընկերու-
թեան մէջ մնալու արժանի չէ »:

ԹԵԼԸՐ



H. Vankerspeke

ՍԿԶԻՈՒՆՔ ԾՆՆԴԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Գ Լ Ո Ւ Խ Ա.

ԾՆՆԴԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԱՅ ՎՐԱՅ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԻ

Ծննդական գործարանները՝ միւս ամեն գործարաններէն զատ, որոշ եւ ամբողջ դրութիւն մի կը կազմեն, եւ իւրեանց գործունելութիւնը եւ կամ անգործունելութիւնը միայն համակրաբար կամ անուղղակի կերպով ազդեցութիւն ունին ուրիշ գործարանաց վրայ. այլ սակայն այս ազդեցութիւնն խիստ զարմանալի եւ հետաքրքրական է մարդկային ամբողջ կազմուածքին վրայ, այնպէս որ ամեն ուրիշ գործարաններ առնց նայելով կատարեալ կամ պակասաւոր կը լինին:

Թէ կենդանեաց եւ թէ բուսականաց մէջ՝ մէկդի առնելով հազուադիւտ եւ անկարեւոր զանազանութիւնները՝ որ երբեմն տեղի կ'ունենան, ծննդականութեան եղանակը միշտ մի եւ նոյն կերպով կը ներգործուի:

Ընդհանուր առմամբ ամեն էակի բնական դրութեան կապակցութեան հետ երկու մասնաւոր նիւթեր կան, որք արու եւ էգ եւ կամ սերական սկզբունք կը կոչուին, որոնց միաւորութիւնը այն ինչ պարագայից տակ՝ նոր էակի մը ծնունդ կուտայ. թէեւ երկու սկզբունքներն զատ զատ առանձին բան մը չեն կարող արդիւնաւորել:

Այս երկու սկզբունքները, այս կամ այն եղանակաւ միշտ կան, եւ թէեւ տարբեր կացութեամբ եւ տարբեր եղանակներով, սակայն միշտ միաւորեալ են:

Մեզի ամենէն աւելի ծանօթ եղող էակները՝ ինչպէս մարդս երկու սկզբունքները միշտ զատ ունի, եւ այս պատճառաւ արու սկզբունք ունեցողը արական, եւ էգ սկզբունք ունեցողը իգական կը կոչեմք. արու անունը կուտամք սերմ ունեցողին եւ էգ անունը հակիթ ունեցողին, որոնք նոր էակներու գոյութեան երկու գլխաւոր պատճառներն են:

Նրկասեռ անունը կուտամք ստորին կարգի կենդանեաց այն մէկ քանիներուն, որոնց մէջ երկու սկզբունքները մէկ անհատի մը վրայ կը գտնուին, ինչպէս են հասարակ հողի որդերը, տզրուկները եւ այլն. եւ ասոնցմէ ոմանք այնքան կատարեալ երկասեռ են որ՝ առանց երկրորդի մը օժանդակութեանը առանձին կը միաւորին, կը յղանան եւ կ'ածեն կամ կը ծնին. իսկ ուրիշներ՝ ինչպէս տզրուկներն թէեւ երկու սկզբունքներն եւ երկու տեսակ գործարաններն ալ ունին, սակայն իրենց կազմական բնութենէն առանձին կարող չեն յղանալ, այլ միշտ երկու հատ պէտք է որ մէկը մէկ յղացնեն, եւ մէկը մէկով յղանան. աւելի կատարեալ կազմուածք ունեցող էակներու մէջ ամենեւին երկասեռ չի գտնուիր:

Ուր որ սկզբունքները զատ դրութիւն ունին՝ հոն մասնաւոր զանազանութիւններ ալ կան, այսինքն թէ սկզբունքներուն զետեղումը եւ թէ իւրեանց միաւորութեան ներգործութիւնը տարբեր են: Չուկերէն շատը որոնց կազմութիւնը ստորին է, մերձաւորական միութեան գործողութիւնը չունին, էգը հակիթները ջուրին մէջ կը թափէ եւ արուն բնական ազդումով մը իւր սերմը անոնց վրայ կը հոսէ, եւ ասանկով կը միանան հակիթն ու սերմը՝ առանց արուին եւ էգին մերձաւորութեանը:

Թուչունները՝ որոնք աստիճան մը բարձր են ձուկերէն, թէեւ անկատար կերպով, սակայն միշտ երկու այլատեռ անհատները մէկը մէկու կուգան եւ երկու

սկզբունքները այնպէս կը միացնեն՝ որ յղութիւնը ներքին կերպով, այսինքն էգին մարմնոյն մէջ տեղի կ'ունենայ, բայց որովհետեւ թռչուններուն հակիթները մարմինէ դուրս ելլալով կը կատարելագործուին, յղութիւնը ներքին իսկ կատարելագործութիւնը արտաքին լինելով Ածող կը կոչուին. իսկ այն էակները որոնց երկու սկզբունքները էգին մարմնոյն մէջ միանալէն եւ յղութիւնը ներքին լինելէն՝ ի զատ հոն կը կատարելագործեն նոր էակը՝ Մնող կը կոչուին. ինչու որ ասոնք իրենց ձագերը կենդանի դուրս կուտան, փոխանակ լսկ հակիթը տալու:

Ինչպէս որ յայտնի կը տեսնուի, բոլոր վերոյիշեալ պարագաներուն տակ ալ գործողութիւնը միշտ մի եւ նոյն է. երկու սկզբունքները, այսինքն արական սերմը եւ իգական հակիթը միշտ կան, եւ ասոնց միաւորութիւնը՝ որ յղութեան գործ կը կոչուին, միշտ տեղի կ'ունենայ նոր էակ մը կատարելագործուելու սկսելէն առաջ, յղութիւնը եւ կատարելագործութիւնը կ'ուզէ ներքին լինի կ'ուզէ արտաքին:

Կան էակներ որ երկու տեսակ միաւորութիւն ունին, որոնց հակիթը կը ձաթի մարմնոյն մէջէն անցնելու ժամանակ, եւ նոր էակը թէեւ հակիթէն կ'ելլէ ինչպէս թռչունները, սակայն կենդանի կը ծնի:

Այս տեսակ կենդանիները Ախսածող կը կոչուին, միաւորութեան երկու եղանակն յայտնելու համար: Կան այնպիսի էակներ ալ՝ որոնց ձագը ներքին կերպով կը ձեւակերպի, սակայն կատարելագործուելէն առաջ դուրս կ'ելլէ, եւ մինչեւ որ բաւական մեծնայ եւ ինքնին ապրելու կարող լինի՝ կերպով մը իւր մօրը հետ միացած կը մնայ. այս տեսակներն ալ Ախսածին կենդանիներ կը կոչուին. օրինակի համար Ախրգինիայի քսակաւոր մեծ մուկը:

Այս համառօտ դիտողութիւններէն յայտնի կը տեսնուի թէ ինչ գործարաններ պէտք են սերական դրու-

Թեան երկու սեռին մէջ, էգը անշուշտ հաւկիթը արտադրող գործարան մը ունենալու է, որ կը կոչուի Չուարարք, ինչպէս որ իրողութիւնն այսպէս է, եւ անհատ մը թէեւ լինի որ ամեն ուրիշ իգական մասերէն զուրկ լինի, սակայն թէ որ Չուարարք ունի անիկայ՝ անշուշտ էգ է եւ էգ կը կոչուի. իսկ ընդհակառակը՝ անհատ մը առանց Չուարարքի էգ չի սեպուիր. թէեւ լինի որ ամեն ուրիշ իգական գործարաններ ամբողջապէս ունենայ, վասն զի իգութիւնը կազմող մի միայն գործարանն Չուարարքն է, որմէ կ'արտադրուի հաւկիթը:

Չուարարքէն ՚ի զատ ընդհանրապէս տեսակ մը ուրիշ գործարաններ կան, որոնցմով հաւկիթը մարմինէն դուրս կ'ելլէ երբոր հասուննայ, եւ կամ արական սերմը անոնց մէջէն կ'անցնի յղութիւն պատճառելու համար: Ծնող կենդանիները մասնաւոր գործարան մը ունին որ կը կոչուի Արգանդ, ասիկայ ծակ գործարան մի է՝ ուսկից կ'անցնի հաւկիթը հասուննալէն վերջը, եւ որուն մէջ թէ որ յղութիւն պատահի՝ նոր էակի մը կատարելագործութիւնը տեղի կ'ունենայ. ասոնցմէ ՚ի զատ ուրիշ գործարաններ կան՝ որոնք Արգանդը Չուարարքին հետ կը կապեն, եւ որոնց միջոցաւ հաւկիթը Չուարարքէն Արգանդին մէջ կ'անցնի:

Կան կենդանիներ՝ որոնց արգանդը անկատար լինելով ձագը հոն չի կրնար կատարելագործուիլ, եւ անոր համար դուրս կ'ելլէ եւ արտաքին կերպով կը կատարելագործուի:

Արու դրութեան մէջ նախնական գործարանը անշուշտ արու սկզբունքը կամ սերմը արտադրող գործարանն է՝ որ Ամորձիք կը կոչուի, որոյ հետ կան ուրիշ գործարաններ ալ՝ որոնք արական հեղուկին փոխադրութեանը եւ ուղղութեանը կ'օժանդակեն. սակայն արու սկզբունքը զվսաւորաբար Ամորձիքը լինելով, առանց անոր միւս գործարանները՝ անհատ մը արու չեն կա-

բող ընել եւ անհատ մը որ թէեւ զուրկ լինի ամեն ուրիշ գործարաններէն եւ մի միայն Ամորձիք ունենայ՝ արու կը կոչուի :

Բարձրագոյն աստիճանի կենդանեաց մէջ բնաւ այնպիսի անհատ մը տեսնուած չէ՝ որ թէ Չուարարք եւ թէ Ամորձիք ունենայ, եւ երկու գործողութիւններն ալ կատարելապէս կատարէ, թէեւ ինչպէս որ վերը յիշեցինք՝ ստորին կարգի կենդանեաց մէջ կը գտնուի :

Մարդս սերական գործարաններու կազմութեան կողմանէ ամենէն կատարեալն է՝ թէ էգ լինի եւ թէ արու :

Կը վերջացնենք արտադրական գործարանաց վրայ ըրած համառօտ դիտողութիւննիս, եւ կ'սկսիմք առաջին անգամ բացատրել իգական արտադրական գործարանները :

Գ Լ Ո Ւ Խ Բ.

ԻՓԱԿԱՆ ԾՆՆԴԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ

Կնիկ մարդու ծննդական կազմուածքը էրիկ մարդունէն աւելի հաւաքեալ է. եւ կը բաղկանայ արգանդին ստորին մասին ներքին եւ արտաքին կողմերը զետեղուած գործարաններէն : Ներքին գործարանները ասոնք են : Չուարարք, Փալօպեան Տաշտք, Արգանդ եւ Իգամուտք : Իսկ արտաքինները ասոնք են. Հեշտական Լուսին, Արտաքին Բացուածք եւ Ստորակէտ :

1. ՀԵՇՏԱԿԱՆ ԼՈՒՍԻՆԸ, կը որ բարձրութիւն մը կամ գեղեցիկ կանգուն մի է անհատին ընդհանուր կազմութեան համեմատ, եւ զետեղուած է կողքին առջեւը. այս կանգնումը մասամբ մը ոսկորներով եւ մասամբ մը մորթապատ ճարսլալից շինուածքով մը բարձրացած է, ասիկայ ծածկող մորթը՝ հաստ եւ առածգական է,

բայց քիչ մը անտարածելի լինելով՝ արտաքին բացուած քին մեծութեանը չի նպաստեր տղայաբերութեան միջոցին . չափազաս կանանց այս դործարանը մազով ծածկուած է :

Արտաքին բացուածքը , երկայնութեանը բացուած կամ ճեղքուած մի է , Բունին Փակարանին մէջ տեղի գծին վրայ զետեղուած վերէն Հեշտական Ղուսինին , վարէն Ստորաշրջանին եւ կողմերէն Արտաքին շրթունքներուն հետ կապուած՝ որուն մանրամասն բացատրութիւնը սխարտիմք ընել :

Արտաքին Շրթունքները , երկու մորթային ծալքեր են , խոտորնակի տափակ եւ առջեւի կողմը ետեւի կողմէն աւելի հաստ է , ուր կը կապուի Արտաքին Բացուածքը արտաքնապէս , ասոնք Հեշտական Ղուսինէն սկսելով եւ դէպ 'ի ետեւ երթալով , աստիճանաբար մէկզմէկէ կը զատուին , մինչեւ որ ճիշդ մէջ տեղերնին հասնելով դարձեալ մէկզմէկու կը դալչին , եւ ասանկով յետակողմեան ծայրերը միացնելով տեսակ մը յօդուած կը կազմեն՝ որ կը կոչուի Փուրքէթ , եւ որն որ առաջին մերձաւորութեամբ կը բացուի : Արտաքին Շրթունքները մէկ արտաքին կամ մորթային մակերեւոյթ մը կը ներկայացնեն , որն որ չափազասութենէն ետքը մազով կը ծածկուի , ասոնց ներքին կողմերը թաց , ողորկ եւ վարդագոյն են : Գեռազաս աղջիկներուն Արտաքին Շրթունքներուն վերի կողմերն աւելի հաստ եւ մէկզմէկու կցուած են . բայց տղայ բերող կանանցը մէկզմէկէ զատուած եւ իրենց կանոնաւորութիւնը կորսուած են . ասոնք մորթային եւ ճարպային նիւթերէ կը բաղկանան՝ որոնց մէջ տեղը բազմաթեւ անջրպետ մը կայ , իբր Ստորաշրջանին արտաքին երիզներուն շարունակութիւնը . Թաղանդին այս ջղային տարածման եւ ներքին մակերեւոյթին մէջ տեղը մէկ հաստ ճարպային եւ բազմախորշ բարունակ մը կայ մէկ մասնաւոր սխարկի մը մէջ լեցուած : Արտաքին Շրթունք

ները թէ շնչերական եւ թէ ջղային ընդունարաններ
ունին . իսկ Աւշկեան անօթները դէպ 'ի Արանաց Մը-
սանքը կը յառաջանան :

2. ՅԱԽԵՐԺԱՆՆԵՐԸ, կամ ներքին շրթունքները ,
արտաքին շրթունքները բաժնելով երեւան կ'ելլեն ,
երկու մածուցիկ ծալքերու կերպարանքով՝ փոքրիկ ա-
քաղաղի մը կատարին նման , եւ ամփոփեալ են արտա-
քին շրթունքներուն ներքին մակերեւոյթին վրայ . ա-
տոնք մէկզմէկու դարձ կէտերնուն դուրս ցցուած են :
Այս շրթունքները հաղիւ թէ արտաքիններուն մինչեւ
մէջ տեղը կ'իջնան , բայց մինչեւ Աղիթորիկ վեր կ'ել-
լեն , եւ հոն կ'երկճղին . այս երկճղման ներքին ճիւղը
Աղիթորիկի մէջ կը կորսուի , բայց միւսը Աղիթորիկի
երկու կողմին վրայ կ'ելլէ եւ երկու ծայրերը միանա-
լով կամար մը կը կազմէ Աղիթորիկին վրայ , որ կը կո-
չուի Աղիթորիկեան կամար :

Ծննդեան ժամանակ , ներքին շրթունքները արտա-
քիններէն դուրս ցցուած կը լինին , բայց չափահասու-
թեան ժամանակ արտաքիններուն մէջ կը ծածկուին .
դարձեալ տղայ բերող կանանցը դուրս կը ցցուին , բայց
այս աւելի արտաքին շրթունքներուն բացուելէն կը
պատճառի քան թէ նոցա բարձրութենէն :

Ամեն անհատի ներքին շրթունքները միատեսակ
չեն , նաեւս կլիմայից տարբեր աստիճանի մէջ գտնուող
ներունը . ինչպէս Ափրիկէի մէկ քանի երկիրներուն
կանանց ներքին շրթունքները շատ երկայն են , եւ
Հօթթենդացի կանանց ներքին շրթունքները Ղենջակ
անունը ստացած է : Ասկէց 'ի զատ Աւստրալիոյ ըսածին
նայելով՝ կանանց այս գործարանը շարունակական ճրգ-
մամբ շատ կ'երկնայ : « Ես դեռահաս կլին մը տեսայ ,
կ'ըսէ հռչակաւորն Աազոզ , որուն արտաքին բացուած-
քը մարմաչում մը ստացած էր իւր յղութեան սկիզբէն ,
նա այս նեղիչ մարմաչումէն ազատելու համար շարու-
նակ կը մարմաչէր , եւ այս միջոցիս շատ անգամ իւր

ներքին շրթունքներն ալ մարմաչելով՝ տասն եւ հինգ
օր վերջը գտաւ որ նոքա արտաքին շրթունքներուն
կրկինը եղած էին» : Ներքին շրթունքները մէկ թա-
քուն յօրինամամբ մը պատրաստուած են՝ որ կարելի է
տեսնել, ուսկից առատ հիւթ մը կը հոսի որ միշտ գըր-
գռում կը պատճառէ :

3. ԿՂԻԹՈՐԻԿԸ, որ մէկ փոքրիկ եւ հաստատուն
խաղաւարտ մի է, Աղիթորին կը նմանի զգայարար եւ
կերպիւ մըն ալ կազմարար, որոյ ազատ ծայրը արտա-
քին բացուածքին առջեւի մասէն կ'երեւնայ արտաքին
շրթունքներուն ներքին յօդուածէն կէս մատնաչափ
ետեւ, ասոր մարմինը Ստորա—կողքին բաժանման
երկու բարձերուն կցուած է, որոյ արմատները կըց-
ուելով եւ միանալով կ'իջնան յեռման տափարակ տե-
ղին վրայ, ուր միանալով մի բազմախոռոչ մարմին մը
կը ձեւացընեն երկու կողմանէ ապիակ, եւ ասկէց քիչ
մը առաջ երթալով մինչեւ յեռման առջեւի երկու կամ
երեք գիծերուն առջեւը կը զատուին մէկզմէկէ եւ
կորանալով դէպ 'ի առաջ վրաներնուն եւ առջեւնուն
կորնթիք մը կը ներկայացընեն եւ կամաց կամաց մեծ-
նալով կամ յառաջանալով ազատ ծայրը կը հասնին որ
կը կոչուի Աղիթորիկեան Մասնք :

Յղութեան առջի ամիսներուն մէջ շատ դժուար է
մանկան սեռը որոշել՝ որովհետեւ Աղիթորիկը Աղիթորին
չափ երկայն կը լինի, այն միջոցին եւ մինչեւ անգամ
դոյութեան կանուխ վիճակին մէջ, բայց ասկէց ան-
դին կը դադարի աճելէ, եւ շատ կանանց Աղիթորիկը
նաեւ կը փոքրիկնան : Կանայք եղած են՝ որ Աղիթո-
րիկնին խիստ երկայն լինի, օրինակի համար՝ Պ. Քրու-
վէլըր կնկան մը Աղիթորիկը տեսած է երկու մատնա-
չափ երկայնութեամբ, եւ ուրիշ մը չորս եւ մէկ քա-
ռորդ մատնաչափ երկայնութեամբ : Մարդկային սեռին
մէջ համբաւաւորեալ երկասեռները այս տեսակին վե-
րաբերեալ կնիկներն են :

Աղիթորիկը , Աղիթորին նման մէկ կախուած յօդա-
կապ մը եւ կանգնեցնող ջիղ մը ունի : Էգին ալ միզա-
նոցին խողովակը բազմախորշ մարմնոյ երկու ճիւղերուն
մէջ տեղէն կ'անցնի արուին նման :

Աղիթորիկը , ներքին շինուածքին կողմանէ գրգը-
ռող մածուցիկէն կը բաղկանայ , եւ ուստի մերձաւո-
րութեան ժամանակ արիւն կը լեցուի հոն՝ կ'ուռեցնէ
զայն եւ կը կանգնեցնէ . եւ ֆոպէլի ըսածին նայե-
լով՝ Աղիթորիկեան Մսանքը՝ Աղիթորեան Մսանքէն ա-
ւելի առատ ջիղ ունի . եւ ամեն Հեղինակներ միարան
են հաստատելու թէ , Աղիթորիկն է կանանց տուփա-
կան զգացման գլխաւոր կէտը :

4. ԳԼԻԹԻԹԸ , արտաքին բացուածքին վերի կողմը
զետեղուած եռանկիւն միջոցն է , ասիկայ վրայէն Աղի-
թորիկին՝ վարէն Միզանոցին՝ եւ կողմերէն Յաւերժա-
հարսին հետ միացած է :

5. ՄԻԶԱՆՈՅԸ , Գաւիթին ճիշդ տակը Աղիթորիկէն
մատնաչափ մը վար զետեղուած է . եւ Իզամուտքին
առջևի մասին ամենամեծ տեղին ճիշդ վրան . ասոր
բերանը ընդհանրապէս խողովակներէ աւելի ամփոփ-
եալ է : Ամեն կանանց Միզանոցը մէկզմէկէ կրնայ տար-
բերիլ՝ մէկէն մինչեւ մէկ ու կէս մատնաչափ երկայ-
նութեամբ , ասիկայ մեծ՝ Աոնոնեան եւ կոր է , իր ներ-
քին մասը խառնաշփոթ եւ կամ բոլորովին մէլզմէկու-
կցուած . ներքին սլատերը եւ մասերը որ կողքին առ-
ջև մէկզմէկէ կը բաժանին , յեռման հետ ստափարակ
տեղի վրայ զետեղուած են Աղիթորիկին երկու բարձե-
րուն միաւորութեան ներքեւ :

Միզանոցին անցքը ջղային է եւ հաստատուն՝ ջղա-
յին մանրաթելներով դրուագեալ . որոնք կ'երեւնայ
թէ Փամփուշտէն շարունակեալ են , ասոր նման մէկ
սպունգային հիւսուածք մը մածուցիկ մաշկին տակը կը
գտնուի :

Երբեմն Միզանոցին բերանը արտաքոյ կարգի կեր-

պով կ'ընդարձակի , Տէմանտ մէկ կին մը կը պատմէ որոյ Միզանոցին անցքին մէջ մատ մը կը մտնէ եղեր , եւ Մէյր՝ կին մը կը յիշէ որ այս գործարանով կրնայ մերձաւորիլ եղեր :

6 . ՀԻՄԷՆ . Իգամուտքը որ անկանոն բացուածք մի է , եւ զետեղուած է Միզական մարմնոյն ներքեւ , մերձաւորութենէն վերջը զանազան մեծութեանց ենթակայ կը լինի , մանաւանդ մէկ քանի անգամ՝ զաւակ ունեցող կանանցը , սակայն կոյսերունը այնպիսի մաշկով մը պատրաստուած է որով բերանը փոքրիկ մնայ . այս մաշկը Հիմէն կը կոչուի , որ ինքնին զատ մաս մի է ներքին գործարանաց՝ արտաքին ճննդական շէնքին՝ եւ Միզանցքին մէջ տեղը զետեղուած , ասիկայ Մահեկի ձեւ ունի ներքին կողմէն գոգաւոր : Երբեմն Մահեկին եղջիւրները մէկըմէկու միանալու չափ երկայն կը լինին եւ կ'երրոնը ծակ ամբողջ մանեակ մը կը ձեւացընեն : Հիմէնին ազատ շուրթը բարակ եւ գոգաւոր է եւ կ'որնթիքը արտաքին բացուածքին մաշկերուն շարունակութիւնն է , եւ որովհետեւ ասիկայ է որ կը փակէ Իգամուտքին յետակողմեան եւ կողմնակի մասերը՝ նշանաւոր տարբերութիւն մը կ'ընէ մուտքին տարածութեանը մէջ , Հիմէնին մեծութենէն կամ փոքրութենէն կախում ունենալով : Հիմէնը՝ երբեմն գրեթէ կատարեալ անծակ մաշկ մը կը լինի , եւ թէեւ միշտ բարակ թափանցիկ եւ շատ դիւրաբեկ՝ սակայն երբեմն ալ հաստ եւ դիմացկուն է :

Հիմէնը բազադրեալ է մէկ մածուցիկ մաշկի ծալքէ մը . իւր շէնքին մէջ քանի մը անօթներ եւ բացողական հիւսուածքներ պարունակելով : Այս գործարանը առաջին մերձաւորութեամբ կը պատառի եւ իւր երկու երեք փոքրիկ մասերը կը կոչուին Մրտածեւ Մսիկներ : Հիմէնը իր կուսութեան որոշ նշան մը համարուած է , սակայն պէտք է գիտնալ որ մերձաւորութենէ՝ ի զատ ուրիշ պատճառներով ալ կրնայ եղծուիլ :

7. ՄՐՏԱԶԵՒ ԵՍԻԿՆԵՐԸ, փոքրիկ տաշտեր են, եւ միայն կանանց վրայ կը գտնուին. ըստ որում ինչպէս որ ըսինք, ասոնք եղծուած Հիմէնին կոտորներն են:

8. ԸՆՑՈՒԿ ԽՐԱՄԸ, կէս մատնաչափ տարածութեամբ փոքրիկ խորութիւն մի է, ետեւէն Փուրքէթով եւ առջեւէն Հիմէնին դոգաւոր եզրերէն կապուած՝ որ առաջին տղայաբերութեամբ կը եղծուի:

Արտաքին ծննդական գործարանաց զարդանքիւ հաշմանածք:

Արտաքին բացուածքին եւ Իգանդամին բերանին Մսանիկ գործարանները երկու դասերու կը բաժնուի այսպէս: Շորթող Պարուտակներ, եւ Մածուցիկ Գործարաններ:

Ա. ԱՐԹՈՂ, ՊԱՐՈՒՏԱԿՆԵՐԸ խիստ բազմաթիւ են, որ կը գտնուին արտաքին շրթունքներուն եւ ծննդական բարձից ծալքերուն վրայ, եւ կը ծառայեն արտաքին ծննդական գործարանաց կակղութեանը՝ խոնաւութեանը՝ զգացողութեանը եւ մասնաւորաբար զանոնք մէզին գրգռիչ ազդեցութենէն եւ քրտինքէն պաշտպանելու համար՝ մէկ պարարտ հիւթ մը դուրս տալու:

Բ. ՄԱԾՈՒՑԻԿ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ, Շորթող Պարուտակներէն գլխաւորաբար իրենց դիրքովը եւ դուրս տուած հեղուկովնին կը տարբերին, ասոնց կարգադրութեան եղանակը եւ Իգամուտքը իրենց արտադրած հեղուկովը թանալնուն կերպը իրենց երկու որոշ զանազանութիւն կուտայ. առջինները Իգամուտքին որոշ մէկ կէտին վրայ մէկզմէկու քով զետեղուած են. իսկ ետքինները մէկզմէկու վրայ:

ԻԳԱՄՈՒՏՔԻ ՄՍԱՆՔ: Ասոնք երկու հատ են, որք Իգամուտքին մէկը մէկ կողմը, եւ միւսը մէկալ կողմը, Հիմէնէն իբր երեք ութերորդ մատնաչափ վեր, եւ Արտաքին շրթունքէն մէկ քառորդ մատնաչափ խոր զետեղուած են: Ասոնց ձեւը ծիրանի սերմին կը նմանի, բայց քանի մը տղայ բերած կնկանը սուելի տափակ

կը լինին : Անտուակ կանանցը շատ մեծ , չափահասութեան հասած աղջիկներունը շատ փոքրիկ , իսկ ծեր կնիկներունը գրեթէ կորսուած են :

ՁՏՈՂ ԽՈՂՈՎԱԿՆԵՐ : Մսանքը կազմող ամեն մէկ հատերը մէկ մէկ փոքրիկ խողովակներ ունին , եւ իրենց քովի հատերուն կցուելովնին երեք խողովակներ կ'ունենան : Երրորդ խողովակը սլարզ անցք մի է որ Մսանքին ներքին մակերեւոյթէն եւ Իգամուտքի եզրէն կը յառաջանայ եւ կը բացուի Հիմէնին նոր եղծուած ներքին անկիւնին մէջ :

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ : Մսանքային շինուածքը բաց կապուտի գոյն ունի , եւ բաղկացեալ է բլթակներէ ; որուն ներքին մասին վրայ եղած մաշկին հաստութիւնը եւ թափանցկութիւնը ամեն անհաստինը միօրինակ չէ . մաշկին ներքին մակերեւոյթէն թեւեր կ'երկննան Մսանքը փակելու եւ բաժանելու համար :

ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆՔ ԵՎ ՊԱՇՏՕՆՔ : Իգամուտքի Մսանքը ամբողջ ծննդական գործարանաց նման արբունքի ժամանակ իւր կատարելութեանը կը հասնի , եւ այս միայն բաւական է մեզ համոզելու թէ՛ անկից արտադրուած հեղուկը ծննդական գործողութեան կ'օժանդակէ :

Արտադրուած հեղուկին քանակութիւնը զանազան է . մերձաւորութեան , ապօրինաւոր շօշափման , հեշտական եւ վաւաշոտ խորհուրդներու , փափազներու եւ երազներու ատեն կը շատնայ . մերձաւորութեան կէտին երբ Ստորաշրջանին ջիղերը եւ Իգամուտքին արտաքին բացուածքը կը գրգռուի , արուին սերմին նման ձայթմամբ կը հոսի եւ կը նպաստէ գործարանաց խոնաւութիւնը եւ զգացողութիւնը սլահապանելու :

9 • ՍՏՈՐԱՇՐԶԱՆԸ կամ ՍՏՈՐԱԿԵՏԸ բոլորովին մորթէ բաղկացեալ՝ հազիւ մէկէն մինչեւ մէկ ու կէս մատնաչափ երկայնութեամբ կամուրջ մի է որ արտաքին բացուածքը Նիստրնկերէն կը զատէ :

Գ Լ Ո Ւ Խ Գ .

ԻՔԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ԾՆՆԴԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ

Իգական ներքին ծննդական գործարանները ասոնք են . Չուարարք , Փալօպեան Տաշտք , Արգանդ եւ իւր Յօդակապները եւ Իգամուտք :

ՁՈՒՆԻՄՔ

Ասոնք կողքին կողմերը դրուած երկու մարմիններ են , անմիջապէս ազդրներուն վարի եղրը եւ արտաքին պատերուն ներքեւ . մեծութեամբ արական ամորձիքներու չափ են , եւ ձեւով նուշի ընկուղ կը նմանին . գոյներնին դեղին եւ կարմիր է եւ ծածկուած են փոքրիկ ուռոյցքներով եւ մատաձեւ դծերով . դեռահաս աղջիկներունը փոքրիկ են , եւ մեծնալ կ'սկսին արբունքի ժամանակ . միանգամայն զօրաւոր ներգործութիւն մը կ'ունենան բոլոր կազմութեան վրայ : Ասոնց պաշտօնը հաւկիթներ արտադրել է՝ որոնցմէ ծնունդ կ'առնուն ամեն նոր էակները : Չուարարքներուն ամեն մէկին մէջ քսանէն մինչեւ երեսուն ուռանի չափ խոռոչներ կան , (որոնք Արամիեան Խոռոչք կը կոչուին) որոնք ձերմակ հեղուկով մը լեցուած են , մէջերնին մէկ մէկ հաւկիթ սլարունակեալ , հազիւ գնդասեղի մը գըլխու մեծութեամբ . . . թէեւ տեսնուած խոռոչները քրսանէն մինչեւ երեսուն են , սակայն ուրիշ շատ խոռոչներ ալ կան որ աչքով չեն տեսնուիր , մինչեւ որ չի կատարելագործուին եւ չի հասուննան : Չուարարքներու մէջի ոչ խոռոչները եւ ոչ ալ իրենց պարունակած հաւկիթները , հաւասարապէս կատարելագործուած են , երբ որ կը տեսնեմք զանոնք . այլ մէջերնին մէկը ամենէն աւելի կատարեալ՝ եւ միւսները իրարմէ նուազ կատարեալ են աստիճանաբար , եւ յիրաւի ասոնք արբունքի ժամանակէն սկսեալ կատարելագործուելու կը սկսին մէկզմէկու ետեւէ , մինչեւ որ հասնին եւ ուստ

ճատեն Աենաց Գարձ : Չուերէն մէկը հասուննալուն պէս , Չուարարքէն դուրս կ'ելլէ եւ Արգանդը կը մտնէ եւ քիչ մը ժամանակ կը մնայ հոն . այս միջոցիս թէ որ յղութիւն տեղի չունենայ , մարմինէն դուրս կ'ելլէ եւ կը կորսուի . բայց թէ որ յղութիւն պատահի , կը մնայ հոն եւ նոր էակ մը կը կատարելագործէ : Հաւկիթին հասուննալը ամենեւին չ'սպասեր սերական գրգռման կամ զուգաւորութեան . եւ ամեն Իգական սեռին մէջ մի եւ նոյն կերպով կը պատահի արբունքէն վերջը , թէ ամուսնացեալ լինին՝ եւ թէ կոյս . բայց պէտք է յիշել թէ հաւկիթը ինքնին անկատար է՝ եւ ինքնին աւելի կատարելագործուելու յարմար չէ . ինքը միայն սերական սկզբունքներէն մին է . եւ նոր էակի մը ծնունդ տալու համար արական սկզբունքին՝ այսինքն սերմին կարօտ է : Կգը առանց ամենեւին արուէն կախում մը ունենալու հաւկիթը կ'արտադրէ , ինչպէս որ արուն ալ սերմը , որոնց միաւորութիւնը միայն նոր էակ մը կ'արդիւնաւորեն :

Յղութիւն տեղի ունենալու համար արգանդին մէջ պատրաստ հաւկիթ գտնուելու է զուգաւորութեան միջոցին , եւ կենդանիները ան ատեն միայն զուգաւորելու փափագ կ'ունենան՝ երբ հաւկիթը պատրաստ է : Աանանց հաւկիթին հասուննալը ամսէ ամիս տեղի կ'ունենայ արբունքի ժամանակէն սկսեալ մինչեւ Աենաց Գարձը : Աին մը շի կրնար յղանալ՝ մինչեւ որ մէկ հասուն հաւկիթ մը չունենայ արգանդին մէջ : Աանանց հաւկիթին հասուննալը կենդանիներէն քիչ մը տարբեր երեւոյթներով տեղի կ'ունենայ . կենդանիները նոյն միջոցին զուգաւորութեան տենջանք մը կ'ունենան , եւ իւրեանց ծննդական գործարաններէն բարակ եւ անպոյն հեղուկ մը կը հոսի : Իսկ կանայք այս միջոցին ամուսական սովորութիւննին կը կատարեն . որ է իւրեանց արեան հոսումը , եւ մերձաւորութեան նկատմամբ շատ զգայուն կը լինին :

Հաւկիթին՝ Չուարարքէն Արգանդին մէջ անցնիլը շատ հետաքրքրական է . Չուարարք կարճ եւ հաստատուն լարով մը Արգանդին հետ կապուած են , ուսկից վար անցք մը կայ : Չուարարքին վրայ մէկ գործարան մը կայ՝ որ Փալօպեան Տաշտ կը կոչուի , սրոյ շէնքը Չուարարքին շէնքէն մեծ է . ասի ձեւով փողահարի կը նմանի , եւ մեծ ծայրը սր թուլ է՝ Չուարարքին մօտ է , իսկ միւս ծայրը Արգանդին հետ կապակցեալ է . այս Տաշտին Չուարարքին քովի բաց ծայրը շատ մը փոքրիկ մատաձեւ յերկարումներու բաժանեալ է . այս լայն բացուածքին մէջ անցք մը կայ Տաշտին ներսի կողմէն մինչեւ Արգանդին մէջը , եւ ասանկով կապակցութիւն կայ Չուարարքին եւ Արգանդին մէջ :

Հաւկիթը Չուարարքի մէջ հասուննալուն պէս Տաշտին բաց ծայրը դէպ 'ի հոն կ'ուղղուի եւ մատաձեւ ծայրերը կը բռնեն հաւկիթը եւ կ'առնուն եւ Տաշտին մէջ թող տալով դայն Տաշտանցքին մէջ կը դնեն , որուն մէջէն մինչեւ Արգանդը կ'իջնայ :

Հաւկիթը Չուարարքէն ձիշդ ան ատենը կը փախչի , երբ ամսական արեան հոսումը կը դադարի , սրմէ գրեթէ վեց օր ետքը Տաշտին մէջէն կ'իջնայ . երբ հաւկիթը Արգանդը կը հասնի , հոն մէկ բարակ մաշկ մը որ արեան հոսման վերջին միջոցին կը գոյանայ , եւ որն որ գրեթէ ներքին բոլոր խոռոչը կը շրջապատէ , անոր ընթացքը կ'արգիլէ . հաւկիթը երբ Տաշտին վերջին ծայրէն դուրս կ'ելլէ , այս մաշկին վրայ կը մղուի եւ հոն կը մնայ . եւ ահա այս միջոցիս յղութիւն տեղի կրնայ ունենալ . բայց երբ քիչ մը ատեն հոն մնալէն ետքը զուգաւորութիւն չի պատահի , մաշկը կը թուլնայ , եւ հաւկիթը կը փախչի . ալ յղութիւն չի կրնար լինիլ , վասն զի արգանդին մէջ պատրաստ հաւկիթ չի կայ . եւ ասկէց յայտնի կը տեսնուի որ կանայք ամեն ամիս որոշ օրեր ունին յղի մնալու : Արբոր հաւկիթը արգանդին մէջ գտնուած ատենը յղութիւն պատահի ,

Հաւկիթը փոխանակ դուրս նետուելու Արդանդին պատարուն կը կցուի եւ կը մնայ հոն նոր էակ մը կատարելագործելու . իսկ մաշկը նորա ծածկոց կը լինի :

Թէ՛ ամուսնացեալ կանայք եւ թէ՛ աղջիկներ , ամեն ամիս հաւկիթ մը կ'արտադրեն՝ քանի որ շեն յղանար . բայց յղութեան եւ ծիծմայրութեան միջոցին , Չուարարքին մէջ հաւկիթները հասուննալէ կը դադարին այնպիսի պատճառներով՝ որ պիտի յայտնեմք կանանց ամուսկան արեան հոսման վրայ խօսած ժամանակնիս : Այնանց կենաց Գարձէն վերջը հաւկիթներնին բոլորովին հատած կը լինի :

Ընդհանրապէս ամեն ամիս մէկ հաւկիթ մը կը հասուննայ , բայց երբեմն երբ երկու երեք կամ աւելին մէկէն հասուննան եւ բնականաբար Արդանդին մէջ իջնան , եւ նոյն միջոցին զուգաւորութիւն պատահի եւ յղութիւն տեղի ունենայ , հարկաւ այս գործողութեանց ենթակայ եղած կիներ երկու երեք եւ կամ աւելի զաւակներ մէկէն կը ծնանի : Չուարարքներուն երկուքնալ մի եւ նոյն ժամանակ շեն գործեր , այլ փոփոխակի կը գործեն՝ մէկ ամիսը մէկը եւ մէկ ամիսը միւսը , բայց երբեմն ալ կը պատահի որ մէկը լիովին անգործ կը մընայ եւ միայն մէկը կը գործէ : Հաւկիթներու խոռոչները ընդհանրապէս մէյմէկ հաւկիթ կը պարունակեն , բայց երբեմն երկու եւ աւելի ունեցողներ կը գտնուին : Ուստի երկու կամ աւելի զաւակ մէկէն ծնանելուն պատճառը կամ քանի մը անօթներուն մի եւ նոյն միջոցին մէկ մէկ հաւկիթ հասցնելնին է եւ կամ մէկ անօթին առանձին քանի մը հատ հասցնելն է : Չուարարքը ամենէն առաջ կազմուած գործարանն է :

Հաւկիթին Չուարարքէն դուրս մղուելուն անմիջական պատճառը շատ հետաքրքրական է , եւ որով կը տեսնուի թէ այս մասերուն մէջ մէկ մասնաւոր կենդանական գործողութիւն մը կայ որն որ իւր զօրութիւնը պարբերական ժամանակով կը հաւաքէ :

Արափեան անօթները քննելով կը տեսնուի որ, անոնք շատ մը որոշ մաշկերով շրջապատեալ են, որոնց երկու ներքին ծայրերուն վրայ հակիթը դրուած է անօթին յատակը, բոլոր մաշկերուն ամենէն ներքին կողմը՝ ուր ձերմակի մօտ գոյն ունեցող հեղուկը կը պարունակուի. երկու ներքիններուն դուրսի մաշկերուն մէջէն ամենաբարակ արեան երակներ կ'անցնին՝ որոնք թէեւ միշտ կ'որոշուին, սակայն ամեն ամսական ընթացքէն երեք շաբաթ առաջ աս երակներէն ոմանք կ'ընդարձակին եւ արեամբ կ'ուռին. այս երակաց արեամբ ունեցումը այնքան կը շարունակուի եւ կ'աճի՝ որ նոյն երակներէն մէկ քանին կը պատառին, եւ ասանկով արիւնը երկու մաշկերուն մէջ տեղը կը լեցուի ճիշդ հակիթին տակը՝ որ կը բարձրանայ եւ Արափեան անօթին մինչեւ բերանը կ'ելլէ. երբ արիւնը կը շատնայ եւ անօթը կը լեցնէ, այս միջոցիս ձերմակ հեղուկը բոլորովին կը ծծուի եւ տեղը հոսուած արիւնը կը բռնէ՝ որն որ իւր շարունակական աճելովը անօթը կ'ընդարձակէ եւ հակիթին տեղ կը բանայ փախչելու. այս Արափեան անօթներուն մէջ բղխած արիւնը կանանց ամսական արեան հոսման հետ խիստ վերաբերութիւն ունի:

10930

Հակիթը ելլելէն ետքը երբ Զուարարը քննուի, (անշուշտ ամսական արեան հոսման դադարելէն ետքը) կը տեսնուի որ մակերեւոյթը մէկ փոքրիկ մաս մը բորբոքեալ է, որոյ մէջ տեղը փոքրիկ ձեղքուած մը կ'երեւայ, ահա այս ան տեղն է՝ ուր անօթը կը բացուի եւ հակիթին ճամբայ կուտայ:

Հակիթը ելլելէն ետքը, անօթը աստիճանաբար կ'ամփոփի, լոկ սպի մը կը մնայ՝ որ կապտագոյն է եւ վերջապէս բոլորովին կ'աներեւութանայ:

Գրեթէ ամեն կանանց հակիթները կանոնաւորապէս կը հասունանան, երեսինները առաջ մէջ տակերները ետքը եւ ամենեւին տակը գոնուողները ամենէն ետքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
 ԵՐԵՎԱՆ, ՄԱՐՏՈՒՍԻ ԿՈՆՍՏԱՆԻ
 1922

եւ երբ ամենքն ալ կը հատնին , ան ատենը Չուարարք կ'ամփոփուին եւ կը կորնչին . բայց երբեմն կը պատահի որ քանի մը հաւկիթը շատ խորը գտնուելով մինչեւ կենաց Գարձը չեն հասուննար , եւ վերջը Չուարարքը առողջ թէ լինի՝ կը տեսնուին եւ մինչեւ անգամ կը յղանան . երբ այս հետաքրքրական դէպքը տեղի կ'ունենայ , ահաւասիկ ամսական արեան հոսումն ալ կ'ըսկըսի ան կնկան վրայ՝ որ դուցէ եօթանասուն տարեկան եղած է՝ որոնցմէ ոմանք յղացած եւ զաւակ ալ ծնած են :

Կանանց ոմանց Չուարարքը տկար եւ ոմանց ալ հիււանդոտ կը լինին , որոնք կատարեալ հասուն հաւկիթ չեն կրնար արտադրել , եւ այսպիսի կանանց կամ աղջկանց ամսական արեան հոսումը միշտ անկանոն կը լինի . ան կիները ամուլ կը լինին՝ որոնք հաւկիթ ամենեւին չունին , եւ կամ թէ հաւկիթնին անկատար է . անանկ կը կարծուի նաեւ որ շատ մանկանց տծեւութիւնը անկատար հաւկիթներուն արգասիքն է , որոնք թէեւ կենդանականութիւն ունին յղութիւն պատճառելու , սակայն բաւական չեն յղութիւնը կատարելագործելու . տգեղ եւ տծեւ զաւակ ունեցող կանայք թէ որ հմուտ բժշկի մը խնամատարութեան յանձնուին՝ այս դժբաղդութենէն կրնան ազատիլ :

Բայց պէտք չէ անանկ կարծուիլ՝ թէ հաւկիթին կացութիւնը միայն ներգործութիւն ունի որ եւ է էակին վրայ . վասն զի հաւկիթին չափ արական սկզբունքն ալ այսինքն սերմն ալ կատարեալ լինելու է :

ՓԱԼՕՊԵԱՆ ՏԱՇՏՔ

Փալօպեան Տաշտերը , ինչպէս որ ըսինք Չուարարքին եւ Արդանդին մէջ տեղի ունեցած հաղորդակցութեան միջոցն են . այս գործարաններուն շէնքը մասնաւոր է , եւ ծննդականութեան վրայ ունեցած ներգործութիւններուն չափ՝ առողջութեան ալ մեծապէս

կարեւորութիւն ունին . ասոնց մէջ եղած անցքը մա-
զանման թելերով լեցուն է , որոնք դէպ 'ի Արգանդը
ուղղուած միշտ կ'երկննան , կը կարճանան , եւ որոնց
հետ Փալօպեան Տաշտն ալ կ'երկննայ կը կարճանայ Չու-
արարքէն մինչեւ միզանցքը . այս գործարանին ամե-
նէն մեծ պաշտօնը հասուցած հաւկիթը Չուարարքէն
ընդունիլ եւ Արգանդին մէջ տանիլն է , սակայն ասկէց
'ի զատ ուրիշ կարեւոր պաշտօննին ալ սա է թէ որ եւ
իցէ հոսում մը որ Չուարարքին վրայ տեղի կ'ունենայ
եւ կրնայ մեծամեծ յնասներ հասցնել՝ կ'առնուն եւ
Արգանդը կը բերեն . եւ Իգամուտքին բերնին մէջ տե-
ղի ունեցած կամ լեցուած հոսումներուն մեծագոյն մա-
սը Փալօպեան Տաշտին միջոցաւ Չուարարքէն եղած
հոսումներն են :

Շատ պատճառներ կան՝ որոնցմով Փալօպեան Տաշ-
տերը կը տկարանան եւ շատ մը հիւանդութեանց պատ-
ճառ կը լինին . օրինակի համար Չուարարքի բորբո-
քումը , Չրգողութիւն , այտերու ուռոյցք եւ սլալարներ .
եւ ասոնցմէ 'ի զատ յղութեան անկարողութիւն : Ամանց
այս գործարանը բոլորովին թմրեալ կը լինի զուգաւո-
րական զգացում չունենալնուն համար . եւ ասկէց յայտ-
նի կը տեսնուի թէ յիշեալ զգացումը որ ընդհանրա-
պէս տգէտները կը դատապարտեն , շատ հիւանդու-
թեանց դարման եւ մարդկային առողջութեան խիստ
նպաստող է . ասոր հակառակ զուգաւորական անասնչ եւ
սպիւնաւոր զգացումը եւ մոլութիւնը այնքան կը տկա-
րացնէ այս գործարանները՝ որ բոլորովին կը կորսնցը-
նեն իրենց շարժական զօրութիւնը , եւ կ'արգասաւորեն
հիւանդութիւնք եւ ամլութիւնք . եւ ահա այս է այն
գլխաւոր պատճառը որ անառակ կանայք ամուսնաց-
եալ կանանց շափ չեն կրնար յղանալ , եւ իրենց շարու-
նակական գրգռումն այս գործարաններուն անդամա-
լուծութիւն կը պատճառէ :

Արգանդը այն տեղն է, ուր հասուն հակիթը քիչ մը ժամանակ կը մնայ Չուարարքէն իջնալէն ետքը, եւ ուր նոր էակ մը կը կազմէ թէ որ յղութիւն պատահի. այս գործարանը կողքի ոսկորներուն վարի ծայրի մէջ տեղի ճամբուն վրայ զետեղուած է. վերի մասը՝ անմիջապէս փամփուշտին վրայ, որն որ անոր առջեւը կ'իյնայ, եւ ետեւը՝ կղկղանցքը. Արգանդը մինչեւ վար չիյնար, այլ իրեն կցեալ խողովակ մը ունի որ իգամուտք կը կոչուի որ իջնալով կը հասնի Արտաքին շրթունքներուն մինչեւ Արտաքին բացուածքը, երբ արտաքնապէս նայուի Արգանդը եւ իգամուտքը՝ մէկ գործարան մը կը տեսնուի, բայց ներքնապէս տարբերութիւննին դիւրութեամբ կ'որոշուի:

Արգանդը տանձի ձեւ ունի՝ լայն ծայրը պագաթը լինելով, սակայն լայն կողմերէն մարմնոյն մէկ կողմէն միւս կողմը տարածեալ է. որ կոր կողմը դէպ 'ի ետեւ քիչ մը ծռած է. ասոր վարի մասը որ Ախլ կը կոչուի՝ իգամուտքին մէջ կը կախուի. եւ վերի ծայրերուն ամեն մէկին վրայ Փալօպեան Տաշտերը կան, եւ տակը Չուարարքը. Տաշտերը երեքէն չորս, Չուարարքին յօդակապները երկուքէն երեք մատնաչափ երկայն են. որոնց տակը Արգանդին վարի կողմերէն քիչ մը հեռու երկու կողմերէն մէկ մէկ կ'ըլլոր լարեր կան հաստատուն եւ զօրաւոր, որոնք Արգանդի Յօդակապը կը կոչուին. ասոնք կ'ըլլոր մը ծռած եւ միւս ծայրերնուն կողքի ոսկորներուն կցուած են. եւ Յենարաններու պէս Արգանդը մարմնոյն կեդրոնը կը պահեն՝ փամփուշտին կ'ըլլոր գագաթին վրայ. ասոնցմէ 'ի զատ լայն յօդակապներ ալ կան՝ լայն եւ զօրաւոր մաշկեր. որոնք Արգանդը, կ'ըլլոր Յօդակապները, Փալօպեան Տաշտերը, Չուարարքի Յօդակապները բոլորովին կը ծածկեն: Կան նաեւ ուրիշ երկու Յօդակապներ, Արգանդը առջեւի փամփուշտին հետ կապող եւ երկու ուրիշներ ալ ետեւի

Արդարեւ Կապուղ . Արգանդի անկումը Յօդակապու-
 ներուն տարածումէն , ջղերուն թուլնալէն , Արգանդի
 պատերուն եւ Իգամուտքի կակղութենէն յառաջ կու-
 գայ : Արգանդի երկայնութիւնը 2—2 ու կէս մատ-
 նաչափ է , վերի կողմէն լայնքը մինչեւ կէս մատնա-
 չափ , վարի կողմէն հազիւ մէկ մատնաչափ , եւ հաս-
 տութիւնը գրեթէ մէկ մատնաչափ է . պատերը լայն
 լինելով ներսի միջոցը հարկաւ փոքրիկ կը լինի , եւ
 ձեւով ալ դուրսի ձեւէն կը տարբերի . ներքին միջոցին
 վերի մասը եռանկիւն ձեւ ունի , որուն երկու ծայրե-
 րէն Փալօսպեան Տաշտերը կը մտնեն , եւ միւս մասը
 խողովակի սլէս վար կ'իյնայ եւ կը հասնի արտաքին
 բերանը Իգամուտքին մէջ , որն սր ձեւքով կարելի է
 շօշափել . ասոր երկու շրթունքները կատարեալ ո-
 ղորկ եւ կլոր կը լինին՝ քանի որ յղութեան չեն ենթա-
 կայացած . բայց երբ քանի մը անգամ յղութեան են-
 թակայանան՝ կը բացուին , կլորութիւննին եւ ողոր-
 կութիւննին կը կորսնցնեն . աղջիկներուն Արգանդը
 փոքրիկ եւ սլափերը նեղ , իսկ Անանց Արգանդը մեծ
 եւ բաց կը լինի : Բոլոր Արգանդը երեք մասերու կը
 բաժնուի . այսինքն Փալօսպեան Տաշտերէն վեր եղած
 մասը , Հիմը , Հիմին եւ Վզին մէջ տեղը . կոյսերուն
 Արգանդը կանանց Արգանդէն շիտակ , աւելի բարձր
 եւ Վիզը աւելի հաստ է . ոմանց Արգանդը բնականա-
 բար միւսներէն վար եւ աւելի փոքրիկ կը լինի . ամեն
 կանանց Արգանդը փոփոխութիւն չի կրեր զաւակ ծը-
 նանելով :

Արգանդին նիւթը ջղային է եւ մեծ զօրութեան կը
 դիմադրէ . խիստ զարմանալի է յղութեան միջոցին ա-
 սոր արտաքոյ կարգի տարածուիլը . իսկ աւելի զար-
 մանալի է տղայարերութենէն ետքը փոքրիկնալը . ինն
 ամսու յղի կնկան մը Արգանդը որ մէկ ոսնաչափ մե-
 ծութիւն կ'ունենայ , տղայարերութենէն քանի մը օր
 ետքը իւր բնական փոքրութեան կը դառնայ : Ար-

դանդը շնչերակներով եւ ջղերով առատացեալ է, շատ
անուեղ կ'ընդունի եւ խիստ զգայուն է. եւ մարմնոյ
մէջ բաց 'ի Չուարարքէն' Արգանդէն 'ի զատ ուրիշ
գործարան մը չի կայ, որ այսքան տարածութեան եւ
աճման կարող լինի :

Արգանդը բոլորովին Չուարարքէն կախումն ունի.
Թէ կատարելութեան կողմանէ եւ թէ գործողութեան
կողմանէ. եւ թէ որ Չուարարք չլինի՝ Արգանդը լոկ
անպիտան գործարան մը կը սեպուի. եւ թէ որ Չուա-
րարք դադարին գործելէ, Արգանդն ալ կը դադարի :
Արգանդին Վիզը որ Իգամուտքին մէջ կ'երկննայ շատ
զգայուն է, եւ ոմանց զուգաւորական զգացման կեդ-
րոնը եղած է Աղիթորիկէն աւելի. եւ յիրաւի Աղիթու-
րիկը եւ Յաւերժահարսը այնքան չի պիտի կրնային
քաղցրութիւն տալ թէ որ Վիզը չի լինէր :

Երբ զուգաւորութեան միջոցին կնկան մը զգաց-
մունքը սաստիկ կը լինի, Արգանդը մարմնոյն մէջ վեր
վար կը շարժի արագութեամբ եւ ասանկով Վիզը Աղի-
թորեան Մսանին դալչելով կը շտապէ սերմին հոսու-
մը եւ կրից կատարումը :

Արգանդը երբեմն շատ վտ.քրիկ եւ անկատար կը
լինի, որոյ պատճառն է ամսական արեան հոսման ուշ
սկըսիլը :

Թէեւ քիչ, բայց երկու Արգանդ ունեցող կիներ ե-
ղած են, որոնց Վիզերը զատ զատ Իգամուտքին մէջ
կախուած կը լինին. այսպիսի սլարագայից տակ Ար-
գանդին մին՝ մէկ Չուարարքին կցուած է, եւ միւսը՝
միւս Չուարարքին, որով յղութիւնը կրնայ մէկուն մէջ
լինել առանց միւսին մէջ լինելու. եւ մինչեւ անգամ
այսպիսի կանայք կրնան կրկին յղութեան պատահիլ,
այսինքն մէկ Արգանդով քանի որ քանի մը ամսուան
յղի են, միւս Արգանդով նոր յղութեան կրնան սկսիլ :

Իգամուտքը՝ վարէն վեր Արգանդը գացող ճամբան է, վարի եզրը՝ արտաքին բացուածքն է շրթունքներուն մէջ, եւ վերինը՝ Արգանդին վիզն է. ասիկայ խողովակի մը կը նմանի՝ շատ հաստատուն շրջապատով միանգամայն լայննալու եւ նեղնալու սաստիկ ընդունակ. երկայնութիւնը չորսէն մինչեւ վեց մատնաչափ է ընդհանրապէս, թէեւ ութը եւ երեք մատնաչափ երկայն կամ կարճ ալ կը գտնուին. տրամագիծը մէկ ու կէս մատնաչափէն մինչեւ երկուք ու կէս մատնաչափ կրնայ լինիլ. ասիկայ ծուռ է՝ կոր կողմը փամփուշտին ետեւը առջեւի կողմէն, եւ գոգաւոր կողմը Վղկղանցքին ետեւն է:

Իգամուտքին բոլոր անցքը մի եւ նոյն տրամագիծը չունի, այլ մէջ տեղը նեղ է. ասիկայ մածուցիկ մաշկով մը պատեալ է. կոյսերունը ողորկ չէ, այլ ծալքերով լեցուն. որոնք զուգաւորութենէ, մանաւանդ տըղայաբերութենէ ետքը կ'անհետանան. այս մաշկին տակը բազմախորշ հաստ մաշկ մի կայ, եւ անոր տակն ալ սպունգային իգական մարմինը կայ, որն որ Վղթորեան սպունգային մարմինին պէս գրգռման միջոցին արիւնով կը լեցուի եւ կը կանգնի. եւ այս կարողութիւնն է որ զուգաւորական յագենումի միջոցին Արգանդը վար կը քաշէ, եւ կը սեղմէ արանդամը: Ան կիները՝ որ պակասաւոր են այս կողմանէ, թուլ Իգամուտք կ'ունենան, եւ որոնց Արգանդը իյնալու վտանգին մէջ կը լինի միշտ:

Իգամուտքին բերանը զօրաւոր ջղային մանեակ մը կայ՝ բերանի կամ աչքի մանեակի պէս, որ Իգամուտքին բերանը միշտ գոց կը պահէ. այս ջիղը մեծ կարեւորութիւն ունի Իգամուտքին վարի շրջապատը մէկգմէկու կցելու համար, եւ կանայք կան՝ որոնց այս մանեակին ազդեցութիւնը այնքան զօրաւոր կը լինի, որ հազիւ մուտքը կ'որոշուի:

Իգամուտքն ալ ուրիշ մասերու նման զանազան ձե-
ւեր կրնայ ունենալ, ոմանցը փոքրիկ կը լինի, ուրիշ-
ներունը մեծ, ոմանց անցքը լայն կը լինի եւ ուրիշնե-
րունը նեղ. եւ այս վերջի իրողութիւնը շատ անգամ
մեծամեծ չարեաց պատճառ եղած է նոր ամուսնաց-
եալներու մէջ, որոնք թէ որ տեղեկութիւն ունենային
իգական դրութեան գիտութեան վրայ, անշուշտ հմուտ
դահեակի մը կամ բժշկի մը խորհրդովը շուտով պիտի
ազատէին իրենց դժբաղդութենէն: Երկու իգամուտք
ունեցող կիներ ալ գտնուած են:

Յ Լ Ո Ւ Խ Գ .

— Կ Ա Ն Ա Ն Յ . Հ Ա Ի Կ Ի Թ Ը

Կանանց հակիթը ուրիշ կենդանիներուն հակիթ-
ներէն էապէս չի տարբերիր, եւ բաղադրեալ է գլխա-
ւորաբար դեղին հատերու մասնիկներէ, որոնք կը կո-
չուին Կապիճք, եւ բարակ ճերմակ շրջապատ մը ու-
նին: Այս դեղին հատերուն մէջ կը որ կանանչագոյն
մարմին մը կը տեսնուի՝ որ Բուսական Փամփուշտ կը
կոչուի. ասոր տարբեր մասերն ալ որ միատեղ են, զա-
նազան մաշկերով զատուած են մէկզմէկէ: Կանանց
ամենահասուն եւ կատարեալ հակիթը գնդասեղի մը
գունտէն մեծ չէ, եւ սակայն ասով է որ նոր էակ մը
կը գոյանայ. որն որ երբ յղանայ՝ սնունդ առնելու հա-
մար մօրը մարմինին կը փակչի: Բուսական Փամփուշտը
Կապիճին կեղրոնին մէջ դրուած է, բայց ետքը կը փո-
խէ իւր դիրքը, որոյ կեղրոնը սեւ կէտ մը կ'երեւայ,
որ Բուսական կէտ կը կոչուի:

Կապիճը փոքրիկ եւ կը որ Փամփուշտներէ բաղկա-
ցեալ է, որոնք պարապ եւ փոքրիկ հատերով լեցուն

ին . եւ ամեն մէկ Փամփուշտը շրջապատող մաշկ նմա-
նապէս հատալից են :

Բուսական Փամփուշտը որ Ապալիճէն մեծ է՝ նմա-
նապէս հատալից է ինքնին եւ շրջապատեալ է հատա-
լից մաշկերով :

Ապալիճէն է՝ որմէ նոր էակը նախ կը գոյանայ , եւ
որն որ նոյնն է թէ աղջկանց մէջ եւ թէ կանանց : Ապ-
ալիճին կատարեալ ձեւակերպութիւնը հաւկիթին հա-
տուննալը կը կատարէ , որ լիննալուն պէս Չուարարքէն
կը փախչի : Յիրաւի շատ զարմանալի եւ հետաքրքրա-
կան փոփոխութիւններու ենթակայ կը լինի այս նիւթս՝
հաւկիթը Տաշտին մէջ մտնելէն վերջը : Հաւկիթին Չու-
արարքէն ելլելէն վերջը , ներքին հատերը սաստիկ եւ
կլոր շարժման մը կ'սկսին շատ մը կեդրոններու շուր-
ջը , եւ կը շարունակեն այս շարժումնին մինչեւ որ Ապ-
ալիճը բոլորովին կը կոտորի . ան ատեն տարրեր ընթացք
կը բռնեն նոր էակի մը կենդանական գործարաններուն
սկզբունքները կազմելու համար : Ուրիշ մէկ նշանաւոր
փոփոխութիւնն ալ՝ հաւկիթին Տաշտը մտնելէն ետքը
Բուսական Փամփուշտին փախչիլն է , որն որ Ապալիճին
վերի կողմը կ'անցնի եւ մաշկը պատառելով դուրս կ'ել-
լէ եւ պարապ տեղ կը թողու հաւկիթին մէջ՝ որ յղու-
թեան համար կարեւոր է :

Դեղին Փամփուշտները որ Ապալիճը կը ձեւակերպեն՝
մէկզմէկու այնպիսի կերպով կցուած են , որ բեթակի
ձեւ կ'առնուն :

Շատ պատճառներ կան հաւատալու՝ թէ օտառնի
էակին շրջագիծը արդէն կայ հաւկիթին մէջ յղութիւ-
նէն առաջ , բայց նորա կեանք տալու համար հարկաւ
արու սկզբունքը կարեւոր է : Շատ աղջիկներու հաւ-
կիթները քննուելով այս իրողութիւնը ստուգուած է :

Գ Լ Ո Ւ Խ Ե

ԿԱՆԱՆՅ ԱՄՍԱԿԱՆ ԱՐԵԱՆ ՀՈՍՈՒՄՆ՝

Գիտցուած քան է թէ առողջ եւ բարեկազմ աղջիկներ երբ շափահաս կը լինին, արբունքի կը հասնին եւ ամեն ամիս արեան հոսում մը կ'ունենան իգամուտքէն՝ որ կը տեւէ երկու օրէն մինչեւ չորս օր. այս արեան հոսումը ամսական սովորութիւն կանանց կը կոչուի, որն որ կապակցութիւն ունի իգական առողջութեան եւ յղութեան յառաջատուութեան հետ:

Կանանց այս սովորութեան էական պատճառին եւ ընութեան վրայ իմաստասիրաց եւ կազմարանից մէջ միշտ վիճարանութեան տեղի ունեցած է, եւ միայն մօտ ժամանակներս բուն ճշմարտութիւնը երեւան ելաւ, թէ եւ մինչեւ այսօր շատ տգէտներ կան, մինչեւ անգամ բժիշկներու մէջ՝ որ դեռ անտեղեակ են այս անդամազննական կէտին վրայ, եւ հետեւաբար շատ անգամ իւրեանց սխալ սկզբունքին համեմատ վարուելով կանանց հետ՝ մեծամեծ չարիքներու եւ հիւանդութեանց պատճառ կը լինին:

Մարդկային կազմութեան վրայ մէկ քանի ամենահետաքրքրական եւ կարեւոր գտումները՝ կենդանեաց վրայ քննութիւն եղած ժամանակ գտնուած են. ըստ որում զանոնք քննութեան տակ ձգելը մարդէս աւելի դիւրին եւ գոհացուցիչ է. եւ քանի որ նոյն ընդհանուր օրէնքները կը կանոնաւորեն թէ՛ մարդկային եւ թէ՛ կենդանեաց բնական կարողութիւնները: Կանանց ամ-

* Արդի բժիշկներուն մեծագոյն մասը կը հաստատեն թէ ամսական արեան հոսումը արգանդին ներքին շրջապատէն դուրս ելած հեղուկ մի է արեան գոյնով, ասիկայ հաւանական կարծիք մի է. ոմանք ալ կ'ըսեն թէ արգանդին ներքին շրջապատէն հասած հեղուկին հետ կը միանայ նաև իգամուտքին ներքին շրջապատէն հոսած հեղուկն ալ:

սական արեան հոսման վրայ աղէկ տեղեկութիւն ստա-
նալու համար, նախ կանանց Չուարարութեան եւ
Չուարարքին կարողութեանցը վրայ համառօտ բացատ-
րութիւն մը տալ կարեւոր է: Անանց հակիթ ունե-
նալնին՝ դեռ քիչ ժամանակ է որ դիտցուեցաւ. եւ մի-
անգամայն սա իրողութիւնն ալ թէ՛ մի եւ նոյն օրէնքն
է որ կը կանոնաւորէ թէ կանանց եւ թէ ստորին կեն-
դանեաց այս կարողութիւնը:

Ինչպէս որ Չուարարքի վրայ խօսած ժամանակնիս
ըսինք, Չուարարք ՚ի սկզբանէ իրենց մէջ հակիթ ու-
նին, որոնք արբունքի ժամանակէն կ'սկսին հասուն-
նալ եւ կատարելագործուիլ. ամեն ամիս մէկիկ մէկիկ
իրարու ետեւէ մինչեւ որ հատնին եւ Աենաց Դարծը
պատճառեն, որ ընդհանուր հաշով քառասուն եւ հինգ
տարեկան հասնելուն կը լինի: Ամեն ամիս հակիթ-
ներուն հասուննալը եւ արտաքսումիլը շատ հետաքրք-
րական եւ կարեւոր երեւոյթ մը ունի. միանգամայն
զօրաւոր եւ յատուկ ներգործութիւն մը թէ՛ մարմինին
եւ թէ՛ մտքին վրայ, էապէս տարբեր ընելով էզը ա-
րուէն՝ թէ՛ կարօտութեանց եւ թէ՛ կարողութեանց
կողմանէ, եւ մինչեւ անգամ ջղային դրութեան վրայ:

Անտարակուսելի ճշմարտութիւն մի է թէ՛ կանանց
հակիթներուն ամսական հասուննալը եւ արտաքսումը
եւ յղութեան ժամանակ նոցա մէջ նոր էակի մը կատա-
րելագործուիլը՝ կանանց կազմական դրութեան ամենէն
մեծ եւ սկզբնական գործողութիւնն է, որն որ ուրիշ
կազմական գործողութիւններէ աւելի թէ՛ ջղային զօ-
րութիւն եւ թէ՛ բնական ոյժ կը սլահանջէ, եւ կամ
թէ ուրիշ խօսքով՝ կանանց առողջութիւնը եւ կազմա-
կան ամեն կատարելութիւնները, այս գործողութենէն
կախումն ունին գլխաւորաբար:

Անանց ամսական Չուարարութիւնը բացառութիւն
սեպուած դիպուած մը եւ կամ անբնական գրգռում մը
չէ, այլ իւր սեփական կազմութեան կարեւոր եւ ան-

հրաժեշտ արդասիքն է, որմէ բնաւ չի կրնար ազատիլ ենթակայ եղող աղջիկը կամ կիներ: Չափահասութենէն եւ կամ արբունքի ժամանակէն սկսեալ մինչեւ կենաց դարձը բնութիւնը յարատեւ այս գործողութիւնը կը կատարէ, անանկ որ կարծես թէ կիներ գլխաւորաբար այս նպատակիս համար կ'ապրի: Ահաւասիկ այս է իզական հանգամանքին մէջ տեսնուած մասնաւորութեանց ճշմարիտ բացատրութիւնը, մանաւանդ նոցա անչափ համակրութիւնը, զգայնութիւնը եւ զրգուելիութիւնը՝ որոնք հիւանդ ժամանակնին առաւել սեփականութիւն մը կ'ունենան նոցա վրայ:

Չուարարքին անդադար գործողութիւնը, ջղային դրութիւնը շարունակական զրգուման մէջ կը պահէ, եւ բոլոր կազմական կարողութիւնները վրիպման կ'ենթակայացնէ, այնպէս որ անհնար է կնկան մը կամ աղջկան մը՝ որ պահէ մտաց այն հանդարտութիւնը, եւ բնաւորութեան այն անխռովութիւնը եւ կանոնաւորութիւնը, որոնք արականաց համար դիւրին է ունենալ: Յիրաւի կին մը կամ աղջիկ մը այն մարդուն կը նմանի, որուն շուրջը շատ մը իրեն նեղութիւն տուողներ դիզուած են, քանի որ ինքը ստիպեալ է նոցա տուած նեղութիւնները բանի տեղ չի դնելու եւ անտարբեր մնալու: Էգին կացութիւնը շատ կողմանէ խիստ գէշ է, որովհետեւ իւր անհանգստութիւնը իրեն ժառանգ եղած է, որմէ ոչ կրնայ ազատիլ, եւ ոչ ալ ինչ լինելուն տեղեակ լինել, քանի որ իւր մօտ գտնուողները չգիտնալով նորա կացութիւնը, ոչ կարեկցութիւն կ'ունենան վրան, եւ ոչ ալ նորա կացութիւնը հասկընալու փոյթ կ'ընեն:

Շատ աղջիկներ այս կողմանէ խիստ ապերժանիկ են, ոմանք հոգիի սաստիկ նեղութիւն կ'ունենան եւ կամ տխրագին մեղամաղձութեան ենթակայ կը լինին, ոմանք զրգուեալ կամ դաժան եւ կամ ամենայնաբարական գուարթութեան եռանդին ենթակայ կը լինին, եւ ոչ

մանք ալ մէկ հաճոյքէն ուրիշի մը կը դիմեն շարունակ ,
 առանց այս ըրածնուն պատճառը գիտնալու . տգէտ
 մարդիկ՝ կանանց վրայ այս տեսնուած երեւոյթները
 լոկ երեւակայութեան կամ այլանդակ մտածութեան ,
 եւ որ եւ իշէ ուրիշ պատճառի մը կուտան՝ որ կանայք
 ունենալու ենթակայ սեպուած են : Շատ անգամ կի-
 ներ կամ աղջիկներ կը նախատուին եւ կը յանդիման-
 ուին այս պատճառաւ , եւ իրենք անգամ իրաւունք
 կուտան կրած նախատինքներնուն եւ յանդիմանու-
 թիւններնուն . սակայն թէ որ մարդիկ կանանց կազ-
 մութեան ճշմարիտ բնութեան վրայ տեղեկութիւն ու-
 նենային , հարկաւ պիտի տեսնէին թէ իգական սեռը
 ամենեւին նախատուելու արժանի չէ այս պատճառնե-
 րով , այլ ընդհակառակը արժանի են կարեկցութեան
 եւ մխիթարութեան :

Չուարարք եւ ջղային դրութիւնը այնպիսի փոխա-
 դարձ գործողութիւն մը ունին՝ որ մէկզմէկու վրայ մեծ
 ներգործութիւն կ'ընեն , եւ որն որ կանանց մտաց մէջ
 տեղի ունեցած հիւանդութեանց եւ զգացմանց մէկ ու-
 թոշ աստիճանին պատճառ կրնան լինիլ եւ կամ կրնան
 արտաքսել հիւանդութիւնները . շատ օրինակներով
 հաստատուած ամենաանհերքելի ճշմարիտ իրողութիւն
 մի է թէ՛ աղջիկներ կամ կանայք շատ անգամ մէկ
 հիւանդութիւնէ մը ազատած են մտքերնուն եւ կամ
 զգացումներուն վրայ հաճելի ազդեցութիւն մը ընդու-
 նելով . եւ մինչեւ անգամ այնպիսի հիւանդութիւննե-
 րէ՛ որոնց բժշկական գիտութիւնը եւ դարմանները ա-
 մենեւին օգուտ մը չեն ունեցած . ես ինքս այնպիսի
 կանանց հանդիպած եմ՝ որ սաստիկ տկարութիւնէն
 անմիջապէս ազատած են մէկ փոքրիկ յոյս մը ընդու-
 նելով , եւ ուրիշներ անկողիններնուն ելած են մէկ մը-
 խիթարական եւ քաղցր համակրական խօսուածքով մը .
 այսպիսի դէպքերու մէջ տգէտ մարդիկ անանկ կ'են-
 թադրեն թէ կեղծ հիւանդութիւն մի էր տեսնուածը ,

վասն զի ամենեւին չեն կրնար համուզուիլ թէ հիւանդութիւնք առանց դեղի կ'անցնին, սակայն մէկը որ լաւ տեղեկութիւն կ'ստանայ այս նիւթիս վրայ, դիւրաւ կը համուզուի թէ բժշկական դեղերէն աւելի շատ անգամ բարոյական կամ մտաւորական դեղերը մեծ ազդեցութիւն ունին, եւ ուստի մենք կը կրկնեմք թէ՛ թէ որ կանանց ջղային դրութիւնը միշտ պրզուած կացութեան մէջ մնայ, զգացումները եւ համակրութիւնները սովորականի դասնան, շատ դժուար կը լինի ան ժամանակը խեղճերը կանոնաւոր կացութեան մը մէջ մտցնելը. վերջապէս իմ մասնաւոր կարծիքս սա է թէ՛ բժիշկներուն դեղերէն աւելի զօրաւոր են հիւանդի մը քով պտնուողներուն բռնած ընթացքը, բայց ցաւալի է որ շատ մարդիկ իրենց կանանց դէմ այնպիսի ընթացք մը կը բռնեն տգիտաբար՝ որ նոցա հիւանդութիւնը անբուժելի կ'ընեն. այսպիսի մարդիկ կնիկներն իրենց համեմատ կը նկատեն, եւ կարծելով թէ կանայք երբ որ ուզեն բնաւորութիւննին կը թողուն, բնաւ փոյթ չեն ըներ իրենց սխալմունքը շիտկելու եւ իրենց խեղճ կիներն ազատելու: Իսկ կանայք տեսնելով որ իրենց կացութիւնը հասկցող մը եւ իրենց վրայ կարեկցութիւն ունեցող մը չունին, կ'սկսին անկրելի բնաւորութիւն մը ունենալ, ներսէն ինքզինքնին կործանելով եւ դուրսէն ամեն մարդէ հեռու փախչելով:

Իմ սիրելի ընթերցողս՝ թէ որ կնկան մը էրիկ՝ եւ աղջիկներու հայր ես, եւ կամ թէ՛ թէ որ նալատակ ունիս ամուսնանալու, հաւատա՛ իմ խօսքիս թէ՛ քու ամուսնոյդ եւ աղջիկներուդ առողջութիւնը, քաղցրաբարոյութիւնը եւ երջանկութիւնը մի միայն քու քաղցրարան լինելէդ կախում ունի. իսկ ասոր հակառակը թէ որ կ'ուզես քու կիներ եւ աղջիկներդ շարունակ հիւանդ սլահել, զանոնք գէշ բնաւորութեանց տէր ընել եւ քու ընտանեկան ամբողջ երջանկութիւնդ վրդովել, ուրիշ բան մի ըներ, բայց միայն միշտ խոժոռադէմ

կերպարանք մը եւ լեղի խօսքերով բերան մը ունեցիր :
 Հաւկիթին հասուննալը եւ արտաքսումը իրական բոր-
 բոքումով մը տեղի կ'ունենայ , որն որ վերոյիշեալ կա-
 նանց անհանգստութեան գլխաւոր պատճառն է : Այս
 բորբոքումը ամսոյն սկիզբները թեթեւ է , բայց ամսոյն
 մինչեւ վերջը աստիճանաբար կը շատնայ , երբ Չուա-
 րարք խիստ սեղմուած եւ արեան անօթները թէ նոցա
 մէջ եւ թէ միզանոցին մէջ սաստիկ ուռած են . երբ որ
 հաւկիթը կ'արտաքսուի , բորբոքումը իւր ամենաբարձր
 աստիճանին կը հասնի , եւ անօթները այս բորբոքումը
 կը մեղմացնեն շատ մը արիւն եւ մածուցիկ հոսելով .
 ահաւասիկ այս է ամսական արեան հոսման պատճառը ,
 եւ կանայք որ Չուարարք չունին , եւ կամ անգործ
 Չուարարք ունին , ամսական արեան հոսում չունին :

Աղջիկներուն ոմանց ամսական արեան հոսումը , ա-
 ոանց նախազգացողութեան յանկարծ տեղի կ'ունենան
 առաջին անգամ , եւ միշտ ալ այս կերպով կը շարու-
 նակեն իրենց ընթացքը , բայց ընդհանրապէս աղջիկ-
 ները ամսական սովորութիւննին տեսնուելէն առաջ
 շատ մը անհանգստութիւններու ենթակայ կը լինին .
 ոմանց գլուխը կը ծանրանայ , ոմանց վրայ թեթեւ ջեր-
 մութիւն մը կուգայ , եւ ոմանց ալ կունակը եւ փորը
 կը ցաւի , եւ ոմանց ալ այս ամեն նեղութիւնները միա-
 տեղ կուգան , եւ շատ անգամ ծանր ցաւեր կը պատ-
 ճառեն եւ մինչեւ անգամ երբեմն այնքան սաստիկ կը
 լինին որ կատարելապէս հիւանդութիւն կը պատճա-
 ոեն . միայն քիչեր կան որ հանգստութեամբ ամսական
 սովորութիւննին կը կատարեն . բայց ասոնք բացառու-
 թիւններ են . ուստի մեծ ներողամտութիւն պէտք է
 ունենալ իգական սեռին վրայ այս միջոցներու իրենց
 վարքին եւ կերպերուն նկատմամբ :

Առաջին քսան եւ չորս ժամուսն մէջ հոսումը տեղայն
 եւ թեթեւ կը լինի , բայց ետքը կը ծանրանայ եւ կը
 կարմրի ճիշդ արեան նման , եւ բոլորը երկու օրէն մինչ

չեւ չորս օր կը տեւէ . թէեւ ոմանց մինչեւ շաբաթ մը կամ աւելի , եւ ոմանց ալ միայն մէկ օր կը տեւէ , եւ մինչեւ անգամ քանի մը ժամուան մէջ իրենց ամսական սովորութիւնը կատարողներ եղած են : Այս անկանոնաւորութիւններուն մէկ քանին բնական են , բայց կան ալ որ անբնական են եւ հետեւաբար կանոնաւորուելու կարօտ : Ամսական հոսումը եթէ շարունակ մնայ , հիււանդութիւն մի է դարմանուելու կարօտ : Ընդհանրապէս ամսական արեան հոսումը հարիւր տրամի մօտ կը լինի , սակայն ասոր մէջ ալ տարբերութիւններ շատ կը լինին կլիմայից տարբերութեամբ եւ ուրիշ սրատճառներով :

Ամսական արեան հոսումը զանազան սրատճառներով ոմանց տասն եւ երկու տարեկան եղած ժամանակներին կը հանդալի , ոմանց տասն եւ վեց , ոմանց ինը , ոմանց քսան , եւայլն եւայլն : Աենաց դարձն ալ ասոր համեմատ կը տարբերի , ոմանք քառասուն տարեկան եղած ժամանակներին Աենաց դարձը կը մտնեն , ոմանք երեսուն եւ ոմանք յիսուն . եւ երբեմն ալ անգամ մը դադարելէն տարիներ վերջը նորէն կ'սկսի :

Կանուխ ամսական արեան հոսումը ամեն ուրիշ սրատճառներէ աւելի ցանկական կրից եւ զգացմանց տեղի ունենալէն կը սրատճառի , եւ ասոր համար է որ մեծամեծ քաղաքներու մէջ եղող աղջիկները գլուղացի աղջիկներէն կանուխ իրենց ամսական սովորութիւնը կ'սկսին : Այս սովորութիւնը որքան կանուխ որ սկսի՝ Աենաց դարձը նոյնքան շուտ կը հասնի :

Տարարազդ զոհեր են այն աղջիկները՝ որոնք իրենց ամսական սովորութիւնէն դօնէ եօթը տարի չանցած կ'ամուսնանան . եւ իսկ մը մարդկային ընկերական կազմութեան անյարմար զաւակներ կը ծնանին :

Հին ժամանակները կին մը անմաքուր կը սեպուէր ամսական սովորութեան միջոցին , եւ հին բնագիտները շատ առասպելներ ունէին այս նիւթիս նկատմամբ , եւ

Նիկիոյ ժողովը արդիւած էր կիները նոյն օրերնին եկեղեցի մտնելէ : Բայց այս կարծիքները հին դարերու միայն ծնունդ են , եւ շատ ուրախ եմ յիշելու որ հիմա այնպիսի կարծիքներ չի կան , եւ կամ թէ վերնալու վրայ են :

Պէտք է գիտնալ որ իգական սեռը շատ անհանգիստ կացութիւն մը կ'ունենան իրենց ամսական արեան հոսման ժամանակ , մանաւանդ դեռահաս աղջիկները , որոնց օտար է դիպուածը եւ հետաքրքրական , եւ այն նոր զգացումները որ այս պարագայիս կ'արթըննան իւր մէջը՝ մեծ ներգործութիւն կ'ընեն վրան , մանաւանդ երբ աղջիկը առաջուց այս բնական գործողութեան վրայ անտեղեակ մնացած է : Աղջիկները երբ այս սովորութեան վրայ օրինաւոր տեղեկութիւն չունին , երեւակայութիւննին սաստիկ կ'աշխատի , հետաքրքրութիւնը կը շարժի , եւ միտքը խել մը երեւակայական եւ հեշտական երազներով կը լեցուի , որոնք շատ անգամ տխուր արգասաւորութիւններ կ'ունենան . իսկ ասոր հակառակ թէ որ աղջիկները օրինաւոր ճամբով ժամանակին այս իրողութեան վրայ տեղեկութիւն ստանան , շատ տեսակ հիւանդութեանց եւ ապերջանկութեանց առջեւը կ'առնուի : Իմաստասիրաց աչքին քիչ շահաւէտ սեպուող առարկաներ կան , բայց 'ի դեռահաս աղջիկներէն՝ որ իրենց ամսական սովորութեան սկսած են , երբ մարմինը իւր բնական ձեւը եւ զեղեցկութիւնը կ'ստանայ , եւ իւր զարմանալի հանգամանքին կը յարմարի , եւ երբ միտքը իւր բուն պաշտօնին առաջին լոյսը կ'ընդունի : Աղջկան մը բնական կազմութիւնը գլխաւորաբար իւր Չուարարքին գործողութենէն կախումն ունի , արգանդին ստորին մասը կ'ընդարձակի , կերպարանքը կը փոխուի , միտքը բոլոր տղայական բաներէն երես կը դարձնէ , եւ բոլոր ընթացքը լիովին կը փոխուի . վերջապէս աղջիկը կին կը լինի եւ ինքզինքը կը ձանձնայ . բոլոր այս փոփոխութիւնները

Չուարարքին գործողութենէն առաջ կուգան, որոնք թէ որ անգործ լինին՝ այս փոփոխութիւններն ալ տեղի չունենար եւ աղջիկը դեռ մանուկ կը մնայ: Բնութիւնը կարծես թէ ամենեւին չի նպաստեր աղջկան մը կազմութեան որ եւ իցէ մասին, մինչեւ որ նախ Յնրնդական գործարանները չի կատարելագործին. եւ կնութիւնը՝ այսինքն ամսական արեան հոսումը չ'սկսի:

Աղջկանց ամուսնանալու ամենէն յարմար ժամանակը, ամսական արեան հոսման սկսելէն դոնէ եօթը տարի վերջը լինելէն՝ ի դատ պէտք է նկատուի, որ ծնրնդական գործարանները իրենց կատարելութեանը հասած լինին. եթէ ոչ՝ խեղճ աղջիկը անշուշտ հիւանդոտ, կարճ եւ ասպերջանիկ կեանք մը պիտի ունենայ:

Ընդհանրապէս ծիծմայրութեան միջոցին ամսական սովորութիւնը կը դադարի. (թէեւ երբեմն ամենեւին չի դադարիր) որովհետեւ արիւնը եւ կենսական կարողութիւնը որ հաւկիթներուն հասուննալուն կ'օժանդակեն, այս միջոցիս կաթ գոյացնելու կը նպաստեն. իսկ երբ ծիծմայրութեան հետ ամսական հոսումն ալ կը շարունակուի, կամ ան է որ կինը զօրաւոր կենդանութիւն ունի, եւ կամ թէ Չուարարք հիւանդ են փոխանակ հանգիստ լինելու: Առաջին պարագային մէջ մնաս մը չի կայ, բայց ետքինին մէջ շատ վտանգ կայ, վասն զի անշուշտ մայրը տկարանալով կաթը անսնունդ կը լինի եւ ծծող մանուկը սնունդ չի կրնար ստնուլ:

Յղութեան միջոցին ալ ամսական արեան հոսումը կը դադարի, ինչու որ նոր գոյանալիք էակին կատարելագործութիւնը կարօտ է այն զօրութեանց՝ որ ամսական հոսման կը նպաստեն. ասկից ի դատ յղութեան ժամանակ արգանդի սաղմը չըջապատող մաշկով կը ծածկուի միանգամայն Փալօպեան Տաշտին բերանը եւ Արգանդը գոցելով: Տարածամ ծնունդը այս մաշկին թուլնալէն եւ արեան տեղի տալէն կը սլատճսուի: Յղութեան միջոցին զուգաւորութեան մէջ մեծ զգուշութիւն կարե-

ւոր է, վասն զի այս ալ տարածամ ծնունդ կրնայ պատ-
 ճառել: Ամսական արեան հոսման միջոցին զուգաւո-
 րութիւնը, բոլորովին ցաւալից եւ ապօրինաւոր է: Զու-
 գաւորութեան ամենէն յարմար ժամանակը այն է՝ երբ
 երկու կողման ծննդական գործարանները առողջ եւ
 զգայուն են, մաքուր եւ պատրաստ են:

Կին մը կենաց դարձի հասնելէն վերջը շատ զգու-
 շութիւն ունենալու է, վասն զի ամսական արեան հո-
 սումը որ անկից առաջ մարմնոյ շատ մը հիւանդացու-
 ցիչ նիւթերը կը հանէր դուրս, ալ դադարած լինելովը
 նոյն նիւթերը մարմնոյն մէջ կը մնան եւ շատ հիւան-
 դութիւններու առիթ կրնան լինիլ:

Գ Լ Ո Ւ Խ Զ.

ԱՐԱԿԱՆ ԾՆՆԴԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ X

Արական ծննդական գործարանները իգական ծը-
 նընդական գործարանաց համապատասխան դիրքով
 մէկ մասամբ մարմնոյ մէջ եւ մէկ մասամբ ալ դուրս են.
 եւ կը բաղկանան երկու գործարաններէ որ կը կոչուին
 Ամորձիքներ, որոնք արական սկզբունքը կամ սերմը
 կը գոյացնեն, ասոնք իգական Զուարարքի համապա-
 տասխանողք են. երկու տաշտերէ որք կը կոչուին
 Սերմնատար անցք, որոնք սերմը կը տանին Ամորձիք-
 ներէն, ուրիշ գործարաններէ, որոնք այս տաշտերուն
 հետ կապուած են, որք կը կոչուին Սերմնական Անօթք,
 Անարակ Մսանք եւ Շտապող Ծորակներ, եւ մէկ քանի
 ալ ուրիշ գործարաններէ, որոնք թէ՛ սերմին եւ թէ՛
 մէզին միանգամայն կը ծառայեն եւ կը կոչուին Ծնըն-
 դամիզական գործարաններ, ինչպէս՝ արանդամը եւ
 նորա անցքը:

Ամորձիքները երկու փոքրիկ հաւկթաձեւ մասնք են, ընդհանրապէս ծանրութիւննին տասն եւ վեց տըրամ, եւ երկայնութիւննին մէկ ու կէս մատնաչափէն մինչեւ երկու մատնաչափ. աղդերց մէկզմէկու կցուած ատեն Ամորձիքները մէկմէկու դէմ չի ճզմուելու համար ձախը աջէն աւելի վարօք կախուած է: Ամորձիքները հինգ ծածկոյթներ ունին՝ որոնք կը կոչուին Ա. Արտաքին մաշկ. Բ. Երկրորդ մաշկ. Գ. Երրորդ մկանունք. Դ. Բազմաթել թաղանդ, եւ Ե. Թաղանդային պարկ:

Ա. Արտաքին մաշկը իւր առողջ կացութեան մէջ կարճ եւ կնճռեալ է, իսկ թուլ եւ կախուած կը լինի երբ առողջ չէ. ձմեռ ատեն աւելի ամփոփեալ կը լինի իսկ ամառը թուլ. օդին բարեխառնութիւնը մեծ ազդեցութիւն ունի այս մաշկին վրայ. ասիկայ փափուկ է, եւ գոյնը թուխ. զանազան ծալքեր՝ եւ մէկ բարձրացեալ ակօս մը ունի միջագծին մէջ, արանդամէն ըսկըսեալ մինչեւ նիստընկերը:

Բ. Երկրորդ մաշկը մէկ մասնաւոր խառնուրդէ մը բաղկացեալ բազմախորշ հիւսուածք մի է, եւ երկու պարկերու ձեւով արտաքին մաշկին տակը զետեղուած է. ասոր պաշտօնը արտաքին մաշկը կծկած պահել եւ Ամորձիքներուն շարժմանը օգնել է. մաշկին բաղադրութիւնը թուլ լինելով, հիւանդութեանց ժամանակ շատ կ'ընդարձակի:

Գ. Երրորդ մկանունքը ծրար մը մային մանրաթելներէ կը բաղկանայ, որոնք Երանաց ծորակին երկու կողմերէն կ'իջնան, եւ պաշտօննին է Ամորձիքը վեր բռնել:

Դ. Բազմաթել թաղանդը փայլուն ձերմակ գոյնով զօրաւոր, բարակ եւ թափանցիկ մաշկ մի է, եւ Ամորձիքներուն համար երկու պարկ լինելէն ՚ի զատ երրորդ մկանունքը վեր բռնելու պաշտօնն ունի:

Ե . Թաղանդին պարկը կապուտ ձերմակ գոյնով մաշկային պարկ մի է , որոյ մէջ կը բովանդակին Ամորձիքները :

Ասոնցմէ 'ի զատ Թաղանդամաշկեայ կոչուած ծածկոյթ մի ալ կայ որն որ կը կազմէ Ամորձիքները եւ նոցա ձեւը կը սլահէ , ասիկայ փայլուն ձերմակ գոյնով խիտ մաշկ մի է , որն որ երկու մասերու բաժնուելով՝ մէկը մինչեւ Սերմնատար անօթը կ'երթայ եւ միւսը նման ճամբով դիմացի կողմէն մասնին նիւթին մէջ կ'անցնի եւ Ամորձիքներուն միզանցքը կը ձեւակերպէ :

Ամորձիքներուն մասնիկ շէնքը բլթակներէ կազմեալ կակուղ կանանչ կամ կապուտ մսուտ զանգուածի մը կերպարանքը ունի , ասիկայ Սերմնարար տաշտք կոչուած փոքրիկ գալարեալ տաշտերէ եւ ծրարներէ շինուած է , որոնց սրամագիծը մատնաչափի մը գրեթէ 1,200 երրորդ մասն է , ասոնց ամեն մէկին երկայնութիւնը տասն եւ վեց ոտք է , եւ թուով երեք հարիւրէն աւելի են : Այս տաշտերուն ամեն մէկը Ամորձիքին բազմաթեւ ծածկոցին , ներքին մակերեւոյթին մօտէն գոց ծայրէ մը կ'սկսին , եւ կ'երկննան կամ կ'երթան մինչեւ Ամորձիքներուն անցքը ուր գալարումնին կը նուազի , եւ բազմաթեւներէն մէկ քանին զանգուածէն անցնելով կը կազմեն քսան հատ մեծ եւ աւելի քիչ գալարեալ անօթներ , որոնք զուգահեռական գծով մասնքին ետեւի կողմը , կ'անցնին եւ կը զետեղուին Թաղանդամաշկեային անցքին մէջ որ կը կոչուի Վարիչ անօթ . հոս ասոնք արեան անօթները ետեւնին թողլով առջեւի կողմը կը բռնեն , եւ հոս ասոնց հաւաքումը Ամորձիքներու վարիչ կը կոչուին եւ կ'ամփոփին տասն եւ չորս մեծ անօթներու , եւ ուսկից ոլորտապըտոյտ կերպով խոտորնակի դէպ 'ի Ամորձիքներէն դուրս կ'իջնան եւ կը հասնին արտաքին մաշկին գլուխը որ կը կոչուի Տուիչ անօթ :

Սերմնական հեղուկը գոյանալէն ետքը , կ'սկսի կա-

տարեւազործուիլ մինչեւ որ մարմինէն դուրս ելլելու
ատենը հասնի , ասիկայ խիստ կարեւոր փոփոխութիւն-
ներու ենթակայ կը լինի Սերմնարարին եւ մասամբ մըն
ալ ամորձիքի մասնիկ մասին մէջ :

Վերնամաշի : Ասիկայ սերմնական հեղուկը Տուող ա-
նօթէն Տանող անօթը տանող՝ Ամորձիքներուն վերի
եւ ետեւի կողմերը զետեղուած կծկուած տաշտ մի է :

Սերմնական շար . Ասիկայ տուող անօթը , սերմնական
չնչերակը , երակը եւ ջիղը պարունակող անօթ մի է ,
որն որ Ամորձիքի ետեւի կողմէն սկսեալ գրեթէ դա-
ւաթնահայեաց կերպով 'կ'ելլէ մինչեւ որ որովայնին
ստորին մասին արտաքին մանեակին հասնի , ուսկից
ներս մտնելով՝ կամաց մը ընթացքը դէպ 'ի դուրս եւ
դէպ 'ի վեր փոփոխելով ստորին որովայնի ներքին
մանեակը կը հասնի եւ ուսկից որովայնի խողովին մէջ
անցնելով իւր բաղադրիչ մասերը կը բաժանի , բաց 'ի
արեան անօթէն եւ ջիղէն՝ որք իւրեանց ընթացքը կը
չարունակեն , իսկ տուող անօթը կողքին մէջ ընկղմե-
լով՝ եւ փամփուշտին քովէն անցնելով՝ Սերմնարարին
մէջ կը դադարի , Սերմնական լարն է որ Ամորձիքները
վեր կը բռնէ :

Տուող անօթ : Ասիկայ վերնամաշկին շարունակութիւնն
է , ինչու որ անոր ոլորտապտոյտ կացութիւնը ասոր
մէջ բոլորովին կը կորսուի : Ասիկայ ճերմակ գոյնով ,
հաստ եւ խիտ նիւթէ շինուած է եւ դիւրաւ կ'որոշուի
Սերմնական լարին մէջի արեան անօթներէն , ասոր ծա-
կը հազիւ թէ մազ մը կը սեղմի , ընթացքը արդէն յի-
շած եմք . ասիկայ վերնամաշկէն սկսելով Սերմնարար
անօթին մէջ կը վերջանայ , եւ պաշտօնն է սերմնհե-
ղուկը առջինէն ետքինին տանիլ :

Սերմնարար : Շէնքի կողմանէ սերմնատուին կը նմա-
նին , եւ թէեւ երկուք ու կէս մատնաչափ երկայնու-
թիւն ունին , սակայն կծկուած լինելնուն համար կարճ
կ'երեւան , ասոնք փամփուշտի ետեւը զետեղուած են ,

Եւ այն մաշկերը որ զանոնք կը պատեն , ծալք ծալք լինելով խոռոչներ կը կազմեն . հոս է որ սերմը կը պատ-
րաստուի կամ կը հաւաքուի , որոյ շտեմարան եղած են
այն տաշտերը . ամեն մէկ անօթ ներքին կերպով Սերմ-
նատուին հետ միացած կը վերջանան կը որ սլարիկ մը
մէջ , նոյն կողմէն Շտապող խողովակը ձեւացնելով :

Շտապող խողովակներ : Ստոնք հասարակ սերմնական խո-
ղովակներ են , որ Սերմնատարին եւ Սերմնարարին միա-
ւորութեան երկու կողմերէն յառաջ կուգան . երկայ-
նութիւննին մէկ մէկ մատնաչափ է , իսկ ծակերնին
Սերմնարարին ծակէն մեծ է եւ ընդարձակելի . ասոնք
զուգահեռական ընթացքով յառաջ ուղղուելով՝ կ'անց-
նին գրգռիչ մասնքին մէջէն , եւ կը բացուին միզանց-
քին մէջ երկու փոքրիկ ծակերու բերանը :

Գրգռիչ կամ անարակ ճատն : Փամփուշտին վզին մէկ մասը
եւ միզանցքին սկզբնաւորութիւնը շրջապատող շագա-
նակի մեծութեամբ մարմին մի է , առջեւէն մինչեւ ե-
տեւը մէկ մատնաչափ , մէկ քովէն միւս քովը քիչ մը
աւելի , իսկ հաստութիւնը մէկ ու կէս մատնաչափ է .
թէեւ ասոր մեծ մասը միզանցքին տակը զետեղ-
ուած է , սակայն երեք լերդաբոյթներէ բաղկացեալ է ,
որոնց երկուքը կողմնակի եւ մէկը երկուքին ետեւը եւ
մէջ տեղը դրուած է . ասիկայ մէկ ճերմակ բարակ հե-
ղուկ մի դուրս կուտայ , միզանցքը կակղցնելու համար .
խառնուրդը մասնաւոր է , բարձր աստիճան առածգա-
կանութիւն ունի , եւ վիրաբուժական գործողութեան
մէջ մեծ համարում ստացած է : Մերերուն այս գոր-
ծարանը շատ անգամ կը մեծնայ :

Բօբերէան ճատն : Միզանցքին բազմաթեւ մասին գըն-
տակին մօտ զետեղուած ոլոռնի մեծութեամբ փոքրիկ
մարմիններ են . գոյութիւննին միօրինակ չէ , երբեմն
միայն մէկը կը գտնուի եւ երբեմն ամենեւին չեն գըտ-
նուիր . արուններն ալ կ'ունենան էգերն ալ մի եւ նոյն
մեծութեամբ :

ԿԷԻՆԻ: Ասիկայ է գին կղիթորիկին համապատասխան արական գործարան մի է, եւ գլխաւորաբար կը բազկանայ բազմախորշ մարմինէ, սպունգային մարմինէ, միզանցքէ եւ ծածկոյթէ. ասոր մաշկը մարմինին ուրիշ կողմերուն մաշկերէն բարակ է, որն որ բազմախորշ մարմինին վրայէն առաջ գալով՝ Յայր մաշկ կոչուած թուլ ծալք մը կը կազմէ, եւ ասկից շրթունքի մաշկը մածուցիկ բազմաթելին հետ շարունակելով, ներքին կողմը կը պատէ, եւ անկէց դառնալով մսանը կը ծածկէ, որոյ յատակը միզանցքին ծակին մօտ է. ուր այդ անցքը ծածկելու համար ծալք մը կը կազմէ: Ամեն մարդու Յայր մաշկը միօրինակ չէ:

Յայր մաշկին տակի կողմէն շողիք կոչուած ճերմակի մօտ գոյն ունեցող հեղուկ մի դուրս կ'ելլէ: Բազմախորշ մարմինը արանդամին երկու երրորդ մասը կը բռնէ, ձեւը գլանաձեւ տաշտերու երկայն հարուածին կը նմանի, քովէ քով դրուած եւ մեծ մասամբ երկայնութիւններնուն մէկզմէկու միացած, իսկ մնացեալ մասը այս ձեւով (Y) երկու բարձերու կամ սրունքներու կը բաժանի վերի մասը կողքին վրայ զետեղուած եւ վարի մասը Աղիթորեան մսանին: Բազմախորշ մսին գոյնը ընդհանրապէս ճերմակ է եւ զետեղուած է արանդամին վերին մասին վրայ, շէնքը քիչ մը առաձգական խիտ եւ բազմաթել է, որոյ մէջէն դրզուած ժամանակնին՝ արանդամին ընդարձակութիւն պատճառող շատ մը արեան անօթներ կ'անցնին. բազմախորշ միտը արանդամին մինչեւ ծայրը շիտարածուիր եւ մսանքը անոր մասը չեն: Արանդամին վարի մասը սպունգային մտով կը կազմուի, որ շէնքի կողմանէ բազմախորշ մսին կը նմանի: Միզանցքը երկու բազմախորշ մսերէն կը բաղկանայ մնացեալ մասը սպունգային մտով շրջապատեալ, եւ կը տարածի փամփուշտի վզէն մինչեւ արանդամին ծայրը. ասոր սլաշտօնը փամփուշտէն մէզը եւ սերմնատարէն սերմը առ-

նուլ եւ դուրս տալ է, եւ երկայնութիւնն է ութէն մինչեւ տասը մատնաչափ, ասիկայ մէկ մատնաչափ երկայնութեամբ գրգռիչ մաս մը ունի, որոյ մէջ Շտապող խողովակները եւ գրգռիչ մասնին մածուցիկ սլարուտակներուն բերանը կը բացուին՝ գրգռիչին եւ գնտակին մէջ տեղի միջոցը մէկ բազմաթեւ մաս մը պարունակելով: Ասոնցմէ 'ի զատ մէկ մատնաչափ երկայնութեամբ ուրիշ մաս մը, եւ սպունգային ուրիշ մաս մըն ալ վեց կամ եօթը մատնաչափ երկայնութեամբ, որոց առաջինը անցքին ամենէն նեղ մասին մէջ է, եւ երկրորդը՝ գնտակէն մինչեւ մասնը կը տարածուի, ուր անցքի մը մեծ տարածութիւնը կայ որ ընդհանրապէս միզանցքաբորբոքման ախտին տեղն է: Մասնքը արանդամին ծայրը կոնոնաձեւ բարձրութիւն մի է, որոյ հիմը շրջանաւոր ակօս մի կայ մասնքի ալօս կոչուած:

ԳԼՈՒԽ Է.

ՍԵՐՄՆՀԵՂՈՒԿ ԵՒ ՍԵՐՄՆՈՐԴԻՔ

Արական ամորձիքներէն հոսուող կենդանագործ սկզբունքը ձերմակի մօտ գոյնով, մասնաւոր հոտով կէս հեղուկ նիւթ մի է, քիչ մը մածուցիկ եւ աղահամ է երբ թարմ լինի: Այս հեղուկը երկու որոշ մասերէ կը բաղկանայ, մէկ մասը հեղուկ եւ միւս մասը կէսլոյծ օսլայի նման նիւթ մը, որոնց երկուքն ալ մէկըզմէկու կը խառնուին քիչ մը ատեն օդի մէջ մնալով: Սերմին մասնաւոր հոտը իւր անցած տեղերէն կ'ընդունի եւ ինքնին ամենեւին հոտ չունի: Այս հեղուկին 1000 մասին 900ը ջուր է, 60ը կենդանական խժային հիւթ, 10ը աղ, եւ 30ը կրոյ փոսփատ մէկ մասնաւոր կենդանի սկզբունքով մը, որոյ բաղադրութիւնը դեռ սրոշ գիտցուած չէ:

Սերճնորդ : Սերմին ամենէն հետաքրքրական եւ շատ կողմանէ ամենակարեւոր մէկ մասն է այս : Այս էակները թէեւ շատոնց գիտցուած էին , սակայն դեռ նոր որոշուեցաւ ինչ լինելնին եւ ինչ հանգամանքներ ունենալնին : Ստուգուած է որ այս որդերը տեսակ մը հաւկիթի մէջ կը կատարելագործուին , որոնք իզական հաւկիթին ենթակայ եղած կացութեանց կ'ենթակայանան . ասոնք կլոր են եւ մէջերնին շատ մը հատեր կը պարունակեն , որ եւ սերմնորդերուն նախնական վիճակն են , որոնք փոքրիկ սերմնորդներ դուրս կուտան երբ կ'երկննան , եւ վերջապէս երբ կը կոտորին՝ սերմնորդերը դուրս կ'ելլեն եւ կ'սկսին մեծնալ : Ամեն մէկ սերմնական հաւկիթ երեսուն սերմնորդ կը պարունակէ : Սերմնորդերուն երկայնութիւնը հասարակ մազի մը մէկ տասը հազարերորդին չափ է , եւ ծանրութիւննին ցորենի մը մէկ հարիւր քառասուն հազար միլիոներորդին չափ , մանանեխի մէկ սերմին մէջ այս որդերէն յիսուն հազարէն աւելին կ'ամփոփուին :

Սերմնորդերուն այսքան զարմանալի մանրութիւննին բանի տեղ չի դրուելով , անոնց կազմութեանը շատ լաւ ծանօթութիւն ստացուած է՝ մինչեւ անգամ նոցա բնաւորութեանց : Ասոնք շատ անգամ իրենց մորթը կը փոխեն օձերու նման , որոնք նաեւս քննուած են . ամենէն զարմանալին ան է որ այս որդերուն մէջ սերական տարրերութիւն կայ : Ասոնք ընդհանրապէս առոյգ եւ գործունեայ են իրենց շարժմանց մէջ եւ կանոնաւոր . երբեմն ասոնք ամենքը գլուխնին մէկ կողմ բերելով՝ մանեակ մը կը կազմեն եւ երկար ատեն կ'ըսկրսին դառնալ . շատ անգամ ասոնք կը պատերազմին մէկզմէկու հետ՝ մինչեւ որ մէկ հատ մը կը մնայ կենդանի : Ասոնք քանի մը ժամ միայն կրնան ապրիլ օդի մէջ՝ մանաւանդ տաք ջուրի մէջ , ուր իրենց շարժումը դիւրաւ կը տեսնուի :

Սերմնորդերը ոչ արբունքէն առաջ՝ եւ ոչ ալ խիտ

ծերութեան ժամանակ կը գտնուին . շատ հիւանդութիւններով եւ մէկ քանի բժշկական դեղերով կը վիճանան . եւ ասոնք սերմին մէջ ինչ պատճառաւ ալ թէ չի գտնուելու լինին՝ սերմը չի կրնար յղացնել : Այս որդերուն ուղիղ շարժման վրայ տեղեկութիւն ստանալով՝ կրնանք պարզաբար տեսնել թէ նոքա ինչպէս իզամուտքէն արգանդը կը մտնեն , եւ հոն գտնուող հաւկիթին մէջ մտնելով կը յղացնեն :

Հոս յիշել հարկ է թէ՛ ոգելից ըմպելիքները մեծ ազդեցութիւն ունին այս որդերուն վրայ , որոնք անմիջապէս կը կատարին , մէկմէկու հետ կը պատերազմին , իրար կը ջարդեն եւ մեծ ջանք մը ունին դուրս թափելու . ահա՛ ասոր համար է որ զինովութեան ժամանակ ցանկութիւնը կը գրգռի մարդու :

Գինովութեան ժամանակ յղացած մանուկը գինովութեան հակամիտ , դաժան եւ մարդկային ընկերական շէնքին անյարմար արարած մը կը լինի ընդհանրապէս , մանաւանդ թէ որ կլիթութեան փրկարար ձեռքը չի հասնի դայն զսպելու եւ բարի քաղաքացի մը ընելու համար :

Ք Լ Ո Ւ Խ Ը .

ՍԵՐԱԿԱՆ ՄԻԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԿՍՄ ԶՈՒԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ

Երբոր արական սկզբունքը հաւկիթին հետ կը միաւորի եւ սաղմական գործողութիւնը կ'սկսի , հաւկիթը յղացած է կ'ըսեմք եւ կամ թէ կիներ յղացած է . ուստի յղութիւնը երկու սկզբունքներուն միացումն է եւ սաղմական գործողութիւնը նոյն միութեան արգասիքը :

Ամենազարմանալի մէկ իրողութիւն մի է տեսնել թէ հոգատար բնութիւնը լարտադրութիւնը շարունակելի ընելու համար զուգաւորելու փափագ մը ամեն կենդանի արարածներուն տալէն՝ ի զատ՝ կ'առաջնորդէ

զանոնք այն անձնական միաւորութիւնը գործադրելու , որով միայն բաղձանքը կը յագենայ . եւ այս զգացումը ան ատեն էապէս ներգործութիւն կ'ստանայ երբ հակիրթները էգին ձուարարքին մէջ կը հասունանան , եւ երբ սերմնորդերը արական ամորձիքին մէջ կը գոյանան , եւ որոնք կ'սկսին մէկզմէկու ընկերութիւնը փնտռել :

Բնականաբար երկու տարասեռ անհատներու գործնապէս անձնական միաւորութեան առաջնորդող անմիջական պատճառները , երբ դեռ մէկզմէկ չեն տեսած , իմաստասիրաց քննութեանը շատ ենթակայացած են , որոնք շատ հետաքրքրաշարժ փորձեր ըրած են այս իրողութիւնը ստուգելու , սերական միաւորութեամբ գործնական յառաջատուութեան եւ մարմնոյ կազմական ձեւին վրայ լաւ տեղեկութիւն ստանալով՝ այս խնդիրը կարելի է լուծել , ըստ որում ասով յայտնի կը տեսնուի թէ այս ինչ բնական կարօտութիւնները եւ պասսիւաճութիւնները անշուշտ կ'առաջնորդեն այն ինչ մասնաւոր շարժումներու , ինչպէս նոր ծնած մանուկը անմիջապէս ծիծիկն կը փարի իւր սնունդը ստանալու համար , վասն զի նորա շրթունքներուն եւ լեզուին ջղերուն մէկ մասնաւոր զգայուն կացութիւնը որ ծծելու յարմարութիւն կուտայ , այս բնական շարժման պատճառ կը լինի . նմանապէս արբունքէն ետքը ծնընդական գործարանաց ջղերուն մէկ մասնաւոր զգայնութիւնը կ'առաջնորդէ այն մասնաւոր գործողութեան որով կը յագենայ :

Շատ պարագաներ կան որ ամեն մէկ անհատ ուրիշ անհատի մը հրապուրիչ կամ ցանկացուցիչ կ'ընեն եւ զանոնք մէկզմէկու կը քաշեն . ասոնցմէ ոմանք զգացողութեան հեշտնկալ գրգռութիւններէն կը բաղկանան , եւ ոմանք՝ որոց ներգործութիւնը թէ եւ առջիններուն հաւասար է , սակայն գործողութիւննին գաղտնի է : Ստորին կենդանեաց մէջ էգը մէկ մասնաւոր հոտ

մը կ'արձակէ իւր ջերմութեան ժամանակ որն որ աւրուին հոտոտելեաց հասնելուն պէս նորա ցանկութիւնը կը գրգռէ, եւ զայն էգին կը քաշէ անդիմադրելի զօրութեամբ մը. ուրեմն այս իրողութեան մէջ հոտոտելեաց զգացողութիւնը մէկ կարեւոր միջոց մի է շատ կենդանեաց համար, իսկ դատող եւ բաղդատող էակները տեսողական զգացողութեան օգնութեամբը կ'օժանդակուին կազմութեան տարբերութիւնները նկատելով, եւ զուգորդական յարմարութիւննին խորհելով. ասոնցմէ 'ի զատ ուրիշ որոշ ներգործութիւններ կան հրապուրիչ կոչուած, որոյ հանգամանաց վրայ թէ եւ չեմք կարող լուսաբանել, սակայն կարողութիւննին յայտնի է: Բոլոր ասոնք իրապէս հաղորդակցութիւն ունին սերական գործարանաց հետ, որ փորձառութեան կ'սկսին երբ կատարեալ գործողութեան մէջ լինին, եւ միայն գործին հակառակ սեռին համեմատ: Քիտցուած է թէ այս փոխադարձ հրապոյրքը իրական կենդանի մազնիսականութեան մէկ տեսակն է, արուն դրական եւ էգը բացասական լինելով, այնպէս որ ասոնք անդիմադրապէս մէկզմէկու կը քաշուին:

Մարդկային սեռը կենաց այս միջոցիս մասնաւոր բարոյական համակրութիւններ եւ իմացական կարօտութիւններ ունի, որ կ'առաջնորդէ զանոնք փոխադարձ զգուանաց եւ քաղցր գրկախառնութեանց, մինչեւ անգամ ցանկական զգացումը արթննալէն առաջ, եւ այս է եղանակը՝ որով նոր տենջանքները կը յազենան եւ երկու կողման մասնաւոր զգացողութիւնները կ'ըսփոփին. հաւանական է թէ մարդկային սերական միաւորութեան գործողութիւնը բնականաբար բարոյական համակրութենէն եւ իմացականութենէն յառաջ կուգայ՝ քան թէ պարզ զգացողութենէն, թէ եւ անուրանալի է թէ մասնաւորաբար տեսողականութիւնը եւ շօշափման կարողութիւնը շատ ազդեցութիւն ունին այս կէտիս մէջ:

Փորձը յայտնած է թէ երկու կողման ծննդական գործարանները երբ իրենց յարմար եւ կատարեալ վիճակին հասած են, անանկ փոխադարձ ազդեցութիւն մը ունին մէկզմէկու վրայ, որ ուրիշ մարմին մը ամենեւին չի կրնար ունենալ, եւ ասոր փորձերը շատ անգամ եղած է կոյրերու վրայ, նոցա ծննդական գործարանաց մօտ զանազան մարմիններ բերելով. այս իրողութիւնը ծննդական գործարանաց մէկզմէկ գրգռելու համար ունեցած մէկ մասնաւոր ազդեցութեան արդիւնքն է, որ ելեքտրականութեան նման ցնցիւն սլատճառող ազդեցութիւն մի է: Ասկից յայտնի կը տեսնուի որ պարզ գգուանքի ժամանակ ինչպէս այս մասերուն մէկզմէկու մօտ գալովը իրենց փոխադարձ սլատճառողութիւնը կը յառաջանայ եւ զանոնք գործնական ընկերութեան կ'առաջնորդէ:

Ասոնցմէ 'ի զատ հաւասարապէս կարեւոր եւ հաւասարապէս հետաքրքրական սլատճառներ ալ կան. ինչպէս ջղային գգացողութիւնը այնպէս դրուած է որ այս ինչ ջիղերը կը ներգործէ, որոնց գործողութիւնը մարմնոյ շարժում կը սլատճառէ որ կարեւոր է գործնական ընկերութեան միջոցին: Երկու սեռէ ալ եղող դեռահաս պատանիք շատ անգամ դեռ գործնական միաւորութեան խորհուրդը ունենալնուն առաջ այս տեսակ շարժումներ կ'ընեն, յայտնելու թէ նոքա ակամայ ծագումն կ'ընեն. այս է իրողութիւնը երկու սեռին մէջ ալ որոնց մասնաւոր շարժումները գործնական միաւորութեան համար կարեւոր են: Սակայն մարդ կային սեռը որ ընկերական կազմութիւն հաստատած է, քիչ անգամ այս մասին իրենց զիտութիւնը բնութեան կամաց եւ համակրական գասերէն կ'ուսանին, այլ շատ անգամ ուրիշներու կանխահաս եւ անարգ միջնորդութեամբը կ'ուսանին, ասիկայ գուցէ անփախչելի սեպուած է, սակայն շատ անգամ ալ ճշմարիտ հրահողութեան սլակասութեան արդիւնքն է, որ ճշմարիտ

բարոյականութեան դէմ լինելէն 'ի զատ մարդկային
երջանկութեան մնասակար է . հիմակուան ժամանակ
տղայոց մէջ այս զգացողութիւնը մղման եւ քաջալերու-
թեան մէջ է , շատ քիչերը կան որ բնական ազդամամբ
կ'արթննան : Զուգաւորութեան միջոցին տեղի ունեցած
զգացումը , եւ բնական ազդումը որ անոր կ'առաջնոր-
դէ՝ մէկզմէկէ շատ կը տարբերին . ամեն բարձր աս-
տիճանի կենդանեաց միաւորելու փափագը՝ ծննդա-
կան գործարանաց մէկ մասնաւոր գրգռումէն կը ծագի
այս ինչ բարոյական համակրութեամբ եւ իմացական
ճանաչումով . եւ երբ միաւորութիւնը յարմար եղա-
նակաւ եւ յարմար սլարագայից մէջ տեղի կ'ունենայ ,
երկու կողման մեծ հաճութիւն կը պատճառէ : Այն
մասնաւոր գրգռումը որ նախ միաւորութեան փափագ
մը կուտայ , իգական Աղիթորիկին եւ արանդամին կա-
տարելագործուելէն կը յառաջանայ :

Մարդս որ ամեն ուրիշ կենդանիներէն աւելի կա-
տարեալ ծննդական գործարաններ ունի , ամենէն ա-
ւելի հաճութիւն կ'զգայ միաւորութենէ . ստորին կեն-
դանեաց գործարաններուն դիրքը եւ միաւորութեան
կերպը շատ անգամ անյարմար են եւ ցաւալից , բայց
մարդկային սեռը այս կողմանէ այնքան կատարեալ է որ ,
արտադրական գործողութիւնը յարմարութեամբ կա-
տարեւէն 'ի զատ՝ շատ հաճութիւն ալ կը վայելէ :

Այս միջոցիս մէջ չի կայ մարդէս 'ի զատ ուրիշ էակ
մը՝ որ մէկզմէկու աչք տեսնեն , հոգւոյն այն սլատու-
հանները՝ որոնց հայեցուածքովը տենջանքը կ'արթըն-
նայ եւ գրգիւրը կը յաղթուի . եւ բռնաւորք շատ ան-
գամ յաղթուած են իրենց ճիրաններուն մատնուած
անմեղ որսի մը տխրահայեաց աչուրներէն . եւ օրինա-
ւոր սամուսնութեան մէջ անգամ անհամբեր մարդ
մը իւր կիներ անպատեհ ժամանակ նեղելէն եւ մնասե-
լէն կ'արգելու այն բնութեան ամենաազնիւ գործա-
րանը՝ որ Ամենագիտի մը շնորհիւը տրուած է մեզ .

եւ որոյ վրայ օրինաւոր գիտութիւն ստանալը մերժելով՝ այն սուրբ եւ ահեղ Աստուծոյ դէմ կը մեղանշեմք՝ որ ամենեւին մեղանշական եւ ամօթալից բան մը չ'ըստեղծեր : Այս գործարանաց վրայ գիտութիւն ստանալով միայն հնարաւոր է մեզ նոքա օրինաւորաբար եւ վայելչաբար գործածել, եւ ազատիլ շատ մը ապերջանկութիւններէ, որ այս մասիս մէջ մեր տգիտութեամբը կը ճաշակեմք :

Գ Լ Ո Ւ Խ Թ .

ՅՂՈՒԹԻՒՆ

Յղութեան եղանակը հասկնալու համար սերմնահղուկին վրայ խօսածնիս յիշելու է, ուր ցուցուեցաւ թէ այս սկզբունքին էական մասը սերմնորդ կոչուած փոքրիկ կենդանիներն են, որոնք թէ որ ջնջուած եւ կամ որ եւ իցէ պատճառաւ մը փճացած կամ չի գոյացած վիճին՝ յղութիւնը անկարելի է ըստ որում առանց սերմնորդի՝ սերմը իգական հաւկիթին վրայ ամենեւին ազդեցութիւն մը չի կրնար ընել : Յիշուեցաւ նաեւ թէ կանանց հաւկիթը Փալօպեան տաշտին մէջ մտնելէն ետքը, իւր Բուսական անօթ կոչուած մասը հաւկիթին վրայի մաշկը պատառելով դուրս կ'ելլէ . արդ պէտք է գիտնալ որ սերմնորդը հաւկիթին այս պատառուածքէն ներս կը մտնէ, եւ ինքզինքը անոր մէջ կը թաղէ, ուր ապառնի էակի մը մէկ մասը կը կազմէ . եւ ահա այս եղանակաւ է որ երկու սկզբունքները կը միաւորին, թէեւ մէկզմէկէ անձնիշխան, սակայն սաղմը ձեւակերպելու համար կը միանան : Հոս յիշել պէտք է նաեւ որ սերմնորդը իւր ուղղաչարժ ընթացքովը Իգամուտքէն որովայնը կ'անցնի, եւ այսպիսով հաւկիթին կը հասնի : Թէեւ յղութիւն չի պատահելու համար

ամեն ամիս մասնաւոր ժամանակներ կամ օրեր կան ,
 տակայն մենք չենք ուզեր հոս հրատարակել , վասն զի
 շատ անձնասէր մարդիկ կան՝ որ այս բանս ուսանելով
 պիտի կարենան իրենց կինը չի յղացնել , եւ մարդկա-
 յին սեռին մնաս հասցնել . ուստի այս կէտիս վրայ կը
 խնդրեմ որ ընթերցողներս ներողամիտ լինին ինձ :

Յղութենէ ետքը հաւկիթին մէջ տեղի ունեցած ա-
 ուաջին փոփոխութիւնները խիստ զարմանալի են , եւ
 կ'երեւայ թէ նոր կազմութեան յօդուածները տեսակ
 մը ձգողութեամբ կը կազմուին՝ որն որ կենդանական
 կորիզի մը շուրջը եզող տունկի նման հաւկիթին նիւթը
 էր համախմբեն :

Հաւկիթին Չուարարքէն ելած ընթացքին զանազան
 աստիճանները քննելով կը գտնամք՝ որ ամենէն առա-
 ջի փոփոխութիւնը հաւկիթին Փալօպեանի մէջ անցնե-
 լուն պէս՝ Բուսական անօթին փախչիլն է . եւ ետքը
 երբ որովայնը կ'իջնայ սերմնորդին (թէ որ զուգաւ-
 րութիւն լինի) նորա մէջ մտնելը . սակայն հաւկիթը
 Բուսական անօթէն ազատելէն մինչեւ որովայն գալը
 կը մեծնայ եւ կը սեւնայ :

Սերմնորդը հաւկիթին հետ միանալէն անմիջապէս
 վերջը , թէ որ սերմնորդը արու է՝ ամենէն առաջ նոր
 էակին Ամորձիքները . եւ թէ էգ է՝ Չուարարքը կը
 կազմակերպին , որոնց բոլորովին մաշկ մը կը պատի եւ
 միւս գործարանները կ'սկսին յաջորդել , ինչպէս որ
 պիտի բացատրեմք : Շատ գործարաններու դիրքը կազ-
 մուկնուն առաջ կը նշմարուին հատերու հաւաքման
 մէջ՝ որոնք շարունակ եւ երազ շարժման մէջ են միշտ ,
 իբր թէ ինքզինքնին կարգադրելու համար . ուստի ա-
 ուաջին կազմակերպութիւնը հատերով կ'սկսի , որոնք
 կեղրոնական կորիզի մը շուրջը կը հաւաքուին եւ շատ
 կը նմանին բուսականաց խոռոչաւոր շէնքին . եւ յիրա-
 ւի հաւկիթը կրնայ ընդհանուր կազմական շէնքը կա-
 տարելագործել առանց Սերմնորդին , բայց սահմանա-

ւոր ատօիճանաւ . վասն զի նա բնաւ չի կրնար ջղային դրութիւնը կազմել առանձին , վասն զի այս մասը կամ թէ նորա կեդրոնական մասը , այսինքն՝ ուղեղը եւ ողնահարին ծուծը Սերմնորդը կը ձեւակերպէ : Սերմնորդին ձեւը քննելով կը տեսնեմք որ ան մեծ ջղային կեդրոններուն նման է . մեծ մասը ուղեղէ կազմեալ եւ մնացեալը ողնայարի ծուծէ , եւ սաղմը անգամ մը իւր առաջին վիճակին մէջ նոյն ձեւը ունի գլուխը մեծ եւ վարի մասը երկայն ծայր մը որ ետքը կը կարծնայ , եւ յիրաւի նոր էակին առաջինը ասանեւհինգ օրուան ձեւը սերմնորդի ձեւին նման է :

Այս տեսութեան նկատմամբ հաւկիթը բաց 'ի ջղային դրութենէն բոլոր մարմինին շէնքը կրնայ կազմել , եւ կամ թէ արդէն ունի իւր մէջը յղանալէն առաջ , որոյ մէջ կենդանի սերմնորդը կը մտնէ եւ կը հաղորդէ անոր ջղային դրութիւնը , որով կենդանական զօրութիւն կ'առնու նա , եւ ետքը երկուքն 'ի միասին կ'աճին , կը սնանին եւ կատարեալ մարդկային էակ մը առաջ կը բերեն , որոնք առանց մէկզմէկու փոխադարձ օժանդակութեան բոլորովին անօգուտ են :

Թէ որ սերմնորդը տկար լինի կամ տձեւ՝ նոր էակն ալ տկար կը լինի եւ տձեւ . նմանապէս հաւկիթն ալ թէ որ տկար կամ տձեւ լինի՝ նոյն ազդեցութիւնը կ'ունենայ ծնանելիք էակին մարմնոյն վրայ :

Նոր կազմութեան առաջին շրջագիծը ձեւանալուն պէս՝ մէկ ուրիշ երեւոյթ մը յառաջ կուգայ , որն որ թէ եւ մենք անոր բացատրութիւն մը չեմք կրնար տալ , սակայն չեմք կրնար ալ չըսել թէ խիստ նկատման արժանի եւ հետաքրքրական է : Սաղմը որ սերմնորդին շատ կը նմանի՝ սաստկութեամբ հեղուկներուն եւ մաշկերուն հետ կը կռուի , որոնցմով շրջապատուած է՝ մինչեւ որ ինքզինքն ազատէ , որմէ ետքը կ'սկսի կլոր դառնալ՝ առաջ կամաց կամաց եւ կանոնաւոր , բայց ետքը խիստ երուզ եւ անկանոն կերպով :

Սերմնորդին եւ հաւկիթին միաւորութենէն տասն
 եւ երկու օր վերջը նոր կազմութիւնը եւ անոր ծած-
 կոյթները որոշապէս կ'երեւան, որն որ ամենը ոլորնի
 չափ է, եւ հաւկիթին դեղինը տակաւին կը տեսնուի :
 Սաղմը այս միջոցիս երկու ծածկոյթով շրջապատեալ է
 արտաքին եւ ներքին, որոնց մէջ տեղը մածուցիկ նիւթ-
 մը կայ, եւ ներքին ծածկոյթին մէջ ուրիշ նիւթ մը կայ
 որ կը կոչուի աղտոյ հեղուկ կամ անմիջական թաղանդ .
 երկու մաշկերը, աղտոյ հեղուկը եւ գոց հաւկիթը ջու-
 ական կը կոչուի : Յղութիւնէն անմիջապէս ետքը ար-
 գանդն ալ կ'սկսի իւր ներքին շրջապատէն թօթափա-
 կանը հոսել՝ եւ անով բոլոր խոռոչը լեցնելով, որով
 երբ հաւկիթը տաշտէն անցնելուն պէս, արգանդին մէջ
 մտնելէն կ'արգիլուի : Հաւկիթականին բոլոր ծանրու-
 թիւնը մէկ ցորեն է, երբ սաղմը բուսականին մէջ կը
 սկսի՝ հազիւ գնդասեղի մը գունտին մեծութեամբ, եւ
 կենսականը կը զատուի անկից միայն թելով մը հաղոր-
 դակցութիւն պահելով, որ կամենայ սնունդ մատակա-
 րարել աստիճանաբար : Հազիւ նշմարելի մէկ փոքրիկ
 ճերմակ թել մը կը գոյանայ այս միջոցիս, որն որ ուղե-
 դին եւ ողնայարին ծուծին սկզբնաւորութիւնն է . տասն
 եւ երկու օրէն մինչեւ քսաներորդ օրը բերանը կը
 տեսնուի . եւ շատ անգամ ալ աչքերը՝ որոնք նախ գըլ-
 խուն կողմերը կը զետեղուին եւ ետքը կամաց կամաց
 առջեւ կուգան :

Քսան եւ հինգերորդ օրը սաղմը թէ մեծութեամբ
 եւ թէ նմանութեամբ մեծ մրջիւնի չափ կը լինի, եւ
 կ'սկսի քիչ մը աւելի ամրութիւն ունենալ, եւ ոսկոր-
 ները աճառի կամ շիղծի նման կ'երեւան, մէկ փոքրիկ
 բաւիղ մը մարմինին վիզէն բաժնուիլը կը ցուցնէ . ծան-
 րութիւնը երեք կամ չորս ցորենի չափ կը լինի :

Առաջին ամիսը անցնելէն ետքը մեղուի չափ կը
 լինի, ծուած որդի մը նմանութիւն կ'առնու . երկու
 փոքրիկ կոծիճներու նման բազուկները կը տեսնուին .

որոնք նախ մաշկին սակ կը ձեւակերպին, եւ յետոյ դուրս կ'ելլեն շիտակ եւ վերջը հետաքրքրական կերպով մը կուրծքին վրայ կը ծռին: Այս միջոցիս զլուխը ամբողջ մարմինին հաւասար է՝ որուն վրայ աչքերը երկու սեւ կէտերու նման, բերանը սփռի նման եւ քիթը կը տեսնուին որոշաբար. իսկ վարի մասը պոչի նման երկայն է. ծանրութիւնն է տասը ցորեն:

Երեւոյտ «Բ»: Այլ ամեն մասերը բաւական կատարելագործուած կը լինին եւ ընդհանուր ձեւը մարդկային է, նախնական անդամները կ'երկննան եւ ստորինները կ'որոշուին. մասերը մաշկով մը մէկզմէկու կցուած են, կողքերուն ալուաներուն եւ ծնոտի ոսկորներուն տեղը մէկ քանի ոսկորային կէտեր կ'երեւան, աճառայինք կ'սկսին կարծրանալ, առաջին ալուային յօդակապերն ալ կ'երեւան, ծանրութիւնը մէկ տրամ եւ երկայնութիւնը մէկ մատնաչափ կը լինի:

Եթեանասուներորդ օրը արտեւանունքները տեսանելի կը լինին, քիթը կը բարձրանայ, բերանը կը մեծնայ եւ արտաքին ալանջը կը տեսնուի. ալ վիզը որոշ, ուղեղը կակուղ եւ մսոտ, իսկ սիրտը կատարելագործուած է: Առանց արիւնի կամ արեան երակներու ամեն գործարան ընդհանրապէս կազմուած են, անոնց մէջ ետքը եղած չրջանակութիւնը պարզապէս իրենց սուելի կատարելագործուելէն կը յառաջանայ, սիրտը ամեն մասերով կատարեալ է, եւ թէ եւ արիւն չունի սակայն փոքրիկ շարժում մը ընել կ'սկսի:

Երեւոյտ «Բ»: Բոլոր էական մասերը լաւ մը որոշուած կամ սահմանուած են, արտեւանունքները թէ եւ գոց բայց որոշ են, պրկունքները թէ եւ քիչ մը մէկզմէկու քով քաշուած սակայն կատարեալ են, սիրտը սաստիկ կը նետէ, եւ մեծ երակներուն մէջ արիւն կը տեսնուի, ձեռքին եւ ոտքին մասերը որոշուած են եւ մկանունք կ'սկսին երեւնալ՝ ճննդականութեան գործարանները մեծ են, թէ եւ դեռ սեռը չի որոշուիր՝

ձեւերնին այս միջոցիս միօրինակ լինելուն համար, սակայն գլխէն բակեղէթի ողնայարէն, լանջաց կրծոցներէն եւ փորէն կարելի է որոշել. հիմա ծանրութիւնը քառասուն տրամ եւ երկայնութիւնը հինգ մատնաչափ է:

Չորրորդ «Գ» : Կատարելագործութիւնը շատ առաջ գացած է, ուղեղը եւ ողնայարի ծուծը քիչ մը ամբրութիւն ստացած է, մկանունք որոշուած են եւ մէկ փոքրիկ բազմախորշ շինուածք մը ձեւացեալ է. փորը բոլորովին ծածկուած է եւ ներքին փորոտիքը ալ չի տեսնուիր, եւ քիչ մը որովայնի առաջին աւելցուքը կը հաւաքուի նոցա մէջ. ծանրութիւնը հիմա 120 տրամ եւ երկայնութիւնը վեց կամ եօթը մատնաչափ է, ոսկորները մեծ մասամբ կարծրացած են եւ երկրորդ ակռային յօդակապները կ'երեւնան առջինին տակը: Արգանդը հիմա այնքան մեծ է որ ալ չի կրնար կողքին վարի կողմը մնալ, այլ վեր փորին մէջ կը քաշուի, երբեմն այս գործողութիւնը աննշմարելի կերպով կամաց՝ բայց շատ անգամ ալ յանկարծ կը լինի. այս փոփոխութիւնը շատ անգամ անկարեւոր շփոթումներու տեղի կուտայ, թէեւ այս միջոցիս յղի կընկան զգացած անհանգստութիւնները բաւական նեղիչ են: Այս ան ժամանակն է երբ ամող կենդանիք կ'աճեն, սակայն մարդս ուրիշ փոփոխութիւններու կ'ենթակայանայ, եւ արգանդին մէջ առջինէն աւելի կը մնայ աւելի կատարելագործուելու համար:

Առջի չորս ամիսներէն աւելի արագ կերպով կատարելագործութիւնը տեղի կ'ունենայ վերջին հինգ ամիսներուն մէջ, կարմիր արեան կատարեալ շրջումը ներուն պատճառաւ:

Հինգերորդ «Գ» : Ամեն մասերը շատ մեծ եւ կատարեալ կը լինին, թոքերը կը մեծնան եւ աստիճանաւ մը ընդարձակելի կը լինին, մաշկը աւելի զօրաւոր է, եւ եղունգներուն դիրքը յայտնի, աղբը աւելի առատ եւ փորոտեաց ստորին մասը եղած է, երկայնութիւնը

ութնէն մինչեւ տասը մատնաչափ , եւ ծանրութիւնը երկու հարիւր յիսուն տրամ է :

Վեռերոց «Բ» : Եղունգները կը նշմարուին , մազերուն առաջին կազմութեան սրտճառաւ ալ գլուխը կը բրդոտի . քիչ մը ճարպ կը կազմուի , երկայնութիւնը տասն եւ երկու մատնաչափ եւ ծանրութիւնը իբր երեք հարիւր տրամ է , դեռ խնացական կարողութեանց նշաններ չի տեսնուիր :

Եօներոց «Բ» : Ամբողջ էակը շատ յառաջացած է , եղունգները ձեւացեալ եւ մազը կատարեալ է , արուին Ամորձիքները վար՝ եւ էգին ձուարարքը կողքին ծայրը կը հասնին , ոսկորները բաւական հաստատուն եւ ազբերը մեծ փորոտիքին մէջ են , երկայնութիւնը տասն եւ չորս մատնաչափ եւ ծանրութիւնը իբր չորս հարիւր տրամ է . դեռ խնացական կարողութիւնները չեն գործեր : Մնացեալ երկու ամիսները չափով եւ ծանրութեամբ աճելու կը գործածուի . նոր փոփոխութիւն մը չի տեսնուիր :

Իններոց «Բ» : Ամեն կարողութիւն զօրացած են , մորթը գոյն առած է եւ կը քրտնի . խնացական կարողութեանց նշաններ չի կան , բայց կենդանական կարողութիւնները զօրաւոր են եւ գործող , մանաւանդ ճաշակելիքը : Մանուկը հիմա ցաւերու , անօթիութեան , ջերմութեան , եւ ցուրտի ընդունակ է , եւ ալ կարող է աշխարհ դալու եւ ինքնիշխան գոյութիւն մը առնելու : (Տես Ա ձեւ : 11) :

Գ Լ Ո Ի Խ Ժ .

ՍԱՂՄՆԱԿԱՆ ՍՆՈՒՆԴ

Նոր էակին սնունդ եւ կամ իւր աճմանը նպաստող նիւթը առնելու եղանակին վրայ մեր ունեցած գիտութիւնը քիչ է :

Նոր էակին կազմութեան համար պահանջուած նիւթը առաջին տասն եւ հինգ կամ քսան օրուան մէջ մեծ մասամբ հաւկիթին դեղնուցէն կ'ընդունի որն որ մինչեւ երրորդ ամսուն վերջը չի կորսուիր . կարծուած է նաեւ թէ ան աղտային հեղուկը որոյ մէջ սաղմը կը լողայ , քիչ մը սնունդ կուտայ , ըստ որում այս հեղուկը սննդական է : Իսկ արդի բնագիտնեքը կը հաստատեն թէ սաղմը իւր սնունդը մօտը արիւնէն կ'ընդունի սաղմընկերին եւ պորտական լարին միջոցաւ : (Տես Ա ձեւ . 10) :

Սաղմին նոր ատենները միջին մաշկին դուրսի երեսը ծածկուած է շատ մը մանր ուռոյցներով , որոնք վերջը արեան երակներ կը լինին , ասոնք չորրորդ ամսոյ մէջ չափով եւ թուով կը բազմանան եւ մէկ սունկի մը կը նմանին որ կը կոչուի սաղմընկեր . ասիկայ գըրեթէ բոլորովին արեան երակներէ կը բաղկանայ , որոնց բաց ծարովը արգանդին ներքին շրջապատին արեան երակներով լեցուն մէկ կողմին կը կցուի , եւ մէկ կողմանէ ալ միանալով եւ երկննալով՝ խողովակ մը կը ձեւացնեն որ կը կոչուի պորտական լար , որն որ մանկան փոքր կը մտնէ պորտէն , եւ ասանկով հաղորդակցութիւն կը հաստատէ մօր եւ որդւոց մէջ :

Սաղմընկերին արեան անօթները թէ՛ պորտականք եւ թէ՛ սաղմնականք երկու տեսակ են . այսինքն՝ շնչերակներ եւ երակներ : Շնչերակները որոնք սրտին ձախ կողմէն գալով՝ դրութեան ամեն մասը սնուցանող նիւթերը պարունակող զուտ արիւնը կը տանին : Երակները չի զտուած արիւնը կը պարունակեն , եւ սրտին աջ կողմը կը տանին եւ անկից կը մղուին թոքին մէջ որ շնչառութեան միջոցաւ զտուի : Արիւնին անմաքուր մասերը՝ մարմինին տարբեր մասերը կը կազմեն : Արեան ընթացքը շնչերակներու միջոցաւ մօրը սրտին ձախ կողմէն կ'սկսի եւ կը հասնի արգանդին շնչերակներուն մէջ , ուսկից սաղմընկերին մէջ կ'անցնի , եւ անկից պոր-

տական լարին միջոցաւ մանուկին մարմնոյն մէջ կ'անցնի, եւ հոն շրջում ընելով՝ շնչերակաց մէջ աճման եւ կատարելագործութեան համար հարկ եղած նիւթը կը մատակարարէ, եւ ասով իւր գորութիւնը կորսնցնելով՝ երակներուն մէջ կ'անցնի, մայրական մարմնոյն նման: Այս երակներուն պորտական լարերուն եւ սաղմընկերին մէջ կ'անցնի եւ անկից մօրը սրտին աջ կողմը եւ յետոյ թոքը անցնելով՝ շնչառութեամբ կը դառուի: Ասկից յայտնի կը տեսնուի որ մանուկը իւր մօրը սիրտը, թոքը, եւ ստամոքսը կը գործածէ քանի որ արգանդին մէջ է, եւ որով իրենները գործածելու կարելութիւն չունենար:

Սաղմընկերին տրամագիծը վեց մատնաչափ է, իսկ հաստութիւնը մէկ եւ կէս մատնաչափ: Պորտական լարին երկայնութիւնը ընդհանրապէս տասն եւ ութէն մինչեւ քսան եւ չորս մատնաչափ կը լինի, իսկ տրամագիծը իբր կէս մատնաչափ, սակայն երբեմն մինչեւ հինգ ոտնաչափ երկայն կամ մինչեւ տասը կամ ութը մատնաչափ կարճ ալ եղած է:

Պորտական լարը, մէկ շնչերակէ եւ երկու երակներէ կը բաղկանայ, որոնք մէկգմէկու ոլորուած եւ վրանին ալրային խառնուրդ մը ունեցող ծածկոյթ մը ունին, որոյ երակներուն մէջ Ալարթընի մածուցիկ կոչուած հեղուկը կայ:

Ահաւասիկ այս է հիմակու հիմայ մեր բոլոր տեղեկութիւնը, մանկան սաղմնական սնունդին նկատմամբ, թէեւ մինչեւ այսօր դեռ Եւրոպիոյ ամենէն երեւելի ընագիները որոշ տեղեկութիւն մը չի կրցին գտնաւ այս կէտիս նկատմամբ:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ա .

ՍԱՂՄՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԻՈՐՈՒ-
ԹԻԻՆՔԸ

Ան գործարանը որով արիւնը երակներուն մէջ կը մզուի՝ սիրտն է, որն որ երկու որոշ մասերու բաժնուած է ամեն մէկը երկերկու խոռոչներով, որոնց վերինները, Բլթակ եւ վարինները խորք կը կոչուին եւ որոնք մէկզմէկու հետ հետաքրքրական կափարիչներով հաղորդակցութիւն ունին :

Պէտք է զիտնալ որ չափահասներուն անմաքուր արիւնը աջ բլթակին մէջ կը հոսի, եւ անկից կ'անցնի աջ խորքին մէջ, որն որ թոքային շնչերակի մը միջոցաւ թոքին կը խրկէ, ուր շնչառութեամբ զտուելով՝ ուրիշ թոքային երակներու միջոցաւ ձախ բլթակը կ'անցնի եւ անկից ձախ խորքը, ուսկից կը խրկուի մեծ նեարդին մէջ եւ անկից փոքրիկ շնչերակներու միջոցաւ բոլոր մարմնոյն մէջ :

Երկու կողման սիրտերը ուղղակի մէկզմէկու հետ հաղորդակցութիւն չեն ըներ, այլ զօրաւոր անջրպետ մը կայ մէջերնին, բայց սաղմին շնչերական արիւնը մօրմէն զաւրով երբ կ'անցնի սրտաական շնչերակէն՝ նախ լեարդին կ'երթայ, եւ անկից կը միանայ խոռոչաւոր երակներուն, աս ձամբով կ'առնուի ան աջ բլթակին մէջ՝ խոռոչաւոր երակին անմաքուր արեան հետ : Աջ բլթակէն կ'անցնի ձախ բլթակին ուղղակի անջրպետին մէջ գլտնուած ծակէ մը փոխանակ անուղղակի ընթացքով թոքէն հոն անցնելուն, ինչպէս որ իրողութիւնը այսպէս է չափահասներուն մէջ : Ձախ բլթակէն ձախ խորքը կ'անցնի եւ անկից կը տարածուի բոլոր մարմինին մէջ շնչերակներու միջոցաւ :

Մնանելէն ետքը երբ արիւնը կ'սկսի թոքերուն մէջէն անցնիլ, վերոյիշեալ անջրպետին ծակը կը գոցուի

ընդհանրապէս, իսկ թէ որ շի գոցուի՝ տղան անշուշտ
կը մեռնի, թէեւ լինի որ մէկ քանի տարիներ ալ ապրի :
Մանկան մարմնոյն մէջ արեան ըրած ամբողջ շրջա-
նը դեռ գաղտնիք մի է, եւ թէ եւ կ'երեւայ թէ նա
իւր բոլոր արիւնը մօրմէն կ'ընդունի, սակայն հաւա-
նական ալ սեպուած է թէ մաս մըն ալ ինքը կը գոյացնէ,
վասն զի այն կանանչի մօտ գոյն ունեցող նիւթը որ նոր
ծնած մանկան առաջին կղկղանքին մէջ կ'երեւայ՝ կը
կարծուի թէ մարսողութեամբ յառաջ եկած է :

Գ Լ Ո Ւ Խ Փ Բ .

ԱՐԳԱՆԴԵՆ ԴՈՒՐՍ ՅՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԲՆԱԿԱՆ ԴԵՊԻԲԵՐ

Երբ պատահի որ տաղմը արգանդէն դուրս կամ
Չուարարքին վրայ, կամ Փալօպեան տաշտին մէջ,
կամ փորին որ եւ իցէ կողմը, օրինակի համար փո-
րոտեաց մէջ տեղերը կը ձեւակերպի, ան տտենը ար-
գանդէն դուրս յղութիւն պատահեր է կ'ըսեմք, որոյ
ճշմարիտ պատճառը յանկարծական եւ ուժգին երկիւ-
ղով մը եւ կամ ուրիշ այլայլութեամբ Փալօպեան տաշ-
տին ստացած հակառակ ընթացքովը նոր յղացեալ հաւ-
կիթ մը ետ Չուարարքը տանիլն է*, եւ որովհետեւ ան-
հրաժեշտ արգանդ հարկ չէ հաւկիթը կատարելագործե-
լու, այլ որ եւ իցէ արեան երակ գտնուող տեղ մի ալ կրնայ
նոյն արդիւնաւորութիւնը ունենալ հաւկիթին վրայ, ուս-
տի հաւկիթը ուր որ իյնայ կամ գտնուի՝ վերոյիշեալ

* Պէտք է գիտնալ թէ շատ անգամ սերմնորդը իւր յառա-
ջընթաց բնաւորութեամբը արգանդէն անցնելով կերթայ հաւ-
կիթին կը հասնի որ դեռ Փալօպեան տաշտին վարերը հասած
է, բայց մտած չէ արգանդին մէջ :

պատճառով հոն կ'սկսի կատարելագործել, սակայն պէտք է յիշել թէ այս կերպով ամենեւին կատարեալ մարդկային էակ մը չի գոյանար :

Մեկուկէկո՝ Ձեզ յղուեի : 1804 ին Քաղղիոյ Վերնիւլ քաղաքին մէջ մէկ տղայ մը կտար Պիտըն անուն, որ ամենեւին տարրերութիւն չ'ունէր ուրիշ տղաքներէ . միայն թէ միշտ անհանգստութիւն կ'զգար ձախ կողմը որ փոքրիկ ուռեցք մը կը տեսնուէր, երբ տասներեք տարեկան եղաւ . ուռեցքը մեծցաւ եւ հիւանդութիւն մը պատճառելով՝ մեռաւ Պիտըն, որն որ անդամազննական կերպով քննուելով, նորա փորոտեաց մէջ՝ սաղմի մը ակուաները, ըղունգները, մազերը եւ ոսկորները գտնուեցաւ :

Կէրծ յղուեի : Երբ արգանդին մէջ շատ մը անձեւ նիւթեր կը գոյանան՝ կեղծ յղութիւն կը կոչուին, որ ամենեւին որ եւ իցէ կերպով յարարերութիւն չունի էական յղութեան հետ :

Մենդական աննկար սաղմը յղացեալ հաւկիթի մը անձեւ կատարելագործութիւնն է, եւ ընդհանրապէս անձեւ միսի կտոր մըն է հեղկալից ծածկոյթի մը մէջ, որոնք թէ որ մանրամասն կերպով քննուին . մէջերնին տաղմական շէնքի տարրներ կը գտնուին, ասոնցմէ ոմանք տեսակ մը պորտական լարով եւ սաղմընկերով միացած են մայրերնուն հետ, բայց ոմանք ալ ամենեւին հաղորդակցութիւն չունին : Այս տեսակ յղութեան արգասիքն են այն տեսակ տեսակ ծնունդները, որոնց համար շատ տարածայնութիւններ տեղի կ'ունենան, ըստ որում ասոնցմէ ոմանք կենդանեաց եւ ոմանք բուսականաց նմանելով՝ այնպէս կը կարծուի թէ կինը կենդանի մը կամ բոյս մը ծնած է :

Այլանորակ ծնունդներ : Ասոնք շատ տեսակ կը լինին, ոմանք բնականէ աւելի եւ ոմանք պակաս անդամներ կ'ունենան, օրինակի համար՝ երկու զլուխով, չորս ոտքով, երեք ձեռքով, անոտք, անձեռք եւայլն եւայլն :

տեսակներ կը գտնուին . այս իրողութեանց պատճառը
կատարելապէս հասկցուած չէ , ոմանք երեւակայու-
թեան վարկենա՛յան խանգարման , ոմանք յանկարծա-
կան ներդործութեան , եւ ոմանք ալ անկատար հաւ-
կիթներու յղութեան կուտան , այլք շատ ուրիշ պատ-
ճառներու , սակայն մեր մասնաւոր կարծիքը սա է թէ
այս տեսակ այլանդակ ծնունդները արական սերմնոր-
դին անկատարութեան եւ կամ թէ տկարութեան ար-
գասիքն է , ըստ որում սիեզերական օրէնք մի է թէ
ամեն արարած իւր սերմին կը պարտաւորի իւր ձեւա-
կերպութիւնը :

Գ Լ Ո Ւ Թ Ժ Գ .

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ ԵՒ ԿՐԿԻՆ ՅՂՈՒԹԻՒՆ*

Երկորեակները մի եւ նոյն ժամանակ ծնած եւ մի
եւ նոյն տարիքը ունեցող երկու էակներ են , որոնց
պատճառը երկու հակիթներու մի եւ նոյն ժամանակ
յղանալն է , ասոր պէս են նաեւս երեքորեակները եւ-
այլն . սակայն խնդիր է թէ արդեօք հնարաւոր է որ
յղութիւնը կրկին լինի , այսինքն՝ մէկզմէկու ետեւէ
հնարաւոր է որ դեռ առջի յղութիւնը չի կատարելագոր-
ծուած , դարձեալ յղութիւն տեղի ունենայ : Ասզմա-
րանները միարան կը հաստատեն թէ կրկին յղութիւնը
կարելի է . եւ Արիստոտել երկուտասան մանկանց մայր
մը կը յիշէ այսպէս , եւ ուրիշ երկու մանկանց մայր մը
կը յիշէ , որոյ մէկը էր՛ւանը կը նմանի եղեր եւ միւսը
սիրականին : Շատ օրինակներ եղած են որ կին մը կա-
տարեալ զաւակ մը ծնանելէն՝ երկու , երեք , չորս ,
եւ հինգ կամ վեց ամիս ետքը՝ ուրիշ զաւակ մի ալ
ծնած է . 1748 ապրիլի 30 ին Աթրասպուրկի մէջ կին մը
ժամը տասնին զաւակ մը ծնանելէն ետքը՝ նոյն տա-

բուժան սեպտեմբերի 16 ին ուրիշ կատարեալ զաւակ
մի ալ ծնած է . 1780 Յունուարի 20 ին Նիօնի մէջ կին
մը զաւակ մը ծնանելէն 5 ամիս եւ 18 օր վերջը դարձեալ
կատարեալ զաւակ մի ծնած է . 1827 ին Բէնին Սիլվանիա
յի Նրագիրը Իրլանտացի Տիկին մը կը յիշէ , որն որ տասն
եւ ութը ամսուան մէջ երեք անգամ տղայարերութեամբ
երկոտասան ողջ առողջ եւ կատարեալ զաւակներ ծնած
է . 1829 ին կին մը Անգղիայի մէջ վեց զաւակ մէկէն
ծնած է :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Դ .

ՏԵԻՈՂՈՒԹԻՒՆ ՅՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՆԿԱՆ ԱՊՐԵԼՈՒ ՄԻՋՈՅԸ

Ասոնք երկու մեծ եւ կարեւոր խնդիրներ են , ու
րոնք շարունակ վիճարանութեան տակ ինկած են :

Յղութեան տեւողութիւնը որոշուած եւ հաստա
տուած չէ , բայց ընդհանրապէս ինը ամիս եւ կամ ե
րեսուն եւ հինգէն մինչեւ քառասուն շաբաթ է : Անդ
րանիկները ընդհանրապէս իններորդ ամսոյ մէջ կը ծը
նին եւ տգիտութիւնը մեծ անիրաւութեամբ կը կասկա
ծի նոցա վրայ , վասն զի շատ մեծ կարելիութիւն
կայ որ ութերորդ ամիսէն ետքը մանուկը ծնի կապուեալ
օրինաւորութեամբ առանց ամենեւին անհաւատարմութեան
կասկածի մը տեղի տալու :

Նոր Եօրքի մէջ կին մը դատուեցաւ եւ արդար
գանուեցաւ , որն որ իւր էրկանը մահուանէն երեք հա
րիւր տասն եւ երեք օր վերջը զաւակ մը ծնաւ : Հա
րաւային Նոր Վալսի մէջ կին մը իւր էրկանը Անգղիա
երթալէն տասներկու ամիս վերջը զաւակ մը ծնաւ եւ
յանցաւոր դատուեցաւ : Աին մը որ իններորդ ամիսէն
վերջը չի ծնիր՝ շատ հաւանական է որ տասներորդ ա

միան ալ կ'անցնէ , վերջապէս մինչեւ այսօր եղած դի-
տողութիւնները դեռ չի կրցին յղութեան տեւողակա-
նութեան որոշ ժամանակ մը հաստատել . Հիփոկրատ ,
Արիստոտել , Կալէն , Բլինի , Ավիքէննա , Մօրիւսէօ ,
Բայօլան , Լա Մօթ , Գոֆման , Չենք , Հօլլըր , Պէր-
թին , Լիւթօթ , Բէթիթ , Լէվրէթ , Լուիզ , եւ Ասդրք
եւայլն եւայլն կը հաստատեն թէ յղութեան տեւողա-
կանութիւնը ընդհանրապէս ինը լուսնական ամիս է ,
սակայն տասը , տասն եւ մէկ , եւ տասն եւ երկու եւ
երրեմն ալ տասն եւ հինգ ամիս կրնայ տեւել :

Շըլէկը կին մը կը յիշէ որ երեք զաւակ ծնաներ է
ամեն մէկը տասն եւ երեք ամիս յղութեամբ , Թրէսի
ուրիշ կին մը կը յիշէ որ տասն եւ չորս ամիս յղու-
թեամբ զաւակ մի ծներ է , եւ Տուլինեակ Գաղղիացի
վիրարոյժը կը պատմէ թէ իւր կինը մէկ անգամ չորս
ու կէս ամիս յղութեամբ զաւակ մը ծնաներ է , եւ եր-
կու անգամ ալ տասն եւ երեք ամիս ու կէս յղու-
թեամբ , եւ դարձեալ մի անգամ ալ տասն եւ մէկ ա-
միս յղութեամբ :

Այն գաղափարները թէ տղայ մը եօթներորդ ամի-
սէն սուաջ թէ ծնանի կը մեռնի՝ բոլորովին սխալ է ,
վասն զի շատ անգամ եղած է որ կին մը վեց ամսուան
կամ հինգ ամսուան յղութեամբ տղայ մը ծնած է որ
շատ առողջ եւ զօրաւոր կեանք մը ունեցած է . Վան ,
Սուէթին Պօրթիւնօ Լիսէթ անուն մէկը կը յիշէ , որ
վեց ամիսէն սրակաս յղութեամբ ծնած է եղեր , եւ
ապրեր է եօթանասուն եւ մէկ տարի :

Յիրաւի թէ եւ հնարաւոր է որ եօթը ամիսէն սրա-
կաս ծնած տղայ մը ապրի , սակայն ընդհանուր հաշ-
ւով միշտ եօթը ամիսէն վերջը եղած տղաքը կ'ապրին ,
ուստի ամենեւին չեմք կրնար այնպիսի որոշ սկզբունք
մը ունենալ , որով կարող լինիմք հաստատելու թէ տը-
ղայ մը որ կը ծնի եօթը ամիսէն սրակաս եւ կամ ութը
ամիս յղութեամբ՝ անշուշտ սխալ մեռնի :

Ք Լ Ո Ւ Թ Փ Ե .

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԵՒ ԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

1 . Թէ ի՞նչպէս պէտք է արու գաւազի ունենալ : Սրու գաւազի ունենալու համար ամենէն հաւանական միջոցները ատնք են , նախ՝ հայրը մօրմէն գոնէ եօթը տարեկան մեծ լինելու է . երկրորդ՝ հօրը ջղային կազմութիւնը մօրը ջղային կազմութենէն աւելի լինելու է . երրորդ՝ զուգաւորութիւնը այն օրը ընելու է որ հնարաւոր եւ անտարակուսելի է յղութիւն տեղի ունենալը . չորրորդ՝ յղութիւն տեղի ունենալը անտարակուսելի եղած օրուան զուգաւորութեան միջոցին՝ մայրը գըրգուռելու չէ . հինգերորդ՝ վերի չորս կանոններով տեղի ունեցած յղութիւնէն մինչեւ երեք շաբաթ մայրը ամենեւին իւր ցանկական կիրքը զրգոելու եւ յագեցնելու չէ . վեցերորդ՝ մօրը երեւակայութիւնը շարունակ արու գաւազի վրայ դարձնելու զանազան միջոցներ բանեցնելու է , օրինակի համար՝ գեղեցիկ արու տղայոց պատկերներով , արձաններով , եւայլն , մօրը միտքը շարունակ արու գաւազի ունենալու վրայ դարձնելու է :

2 . Գեղեցիկ , Բարեբարոյ եւ աշխոյժ գաւազի ինչպէ՞ս ունենալու է : Հետեւեալներն ամենէն հաւանական կանոններն են՝ գեղեցիկ , բարեբարոյ եւ աշխոյժ գաւազի ունենալու : Հայր եւ մայր կատարեալ առողջ եւ հանդարտ ատեննին միաւորելու են . երկրորդ՝ երեկոյեան կերակուրէն վերջը երկու ժամի չափ քնանալու են եւ յետոյ միաւորելով՝ դարձեալ գոնէ եօթը ժամ հանգչելու են . երրորդ՝ գինավութեան միջոցին միաւորելու չեն . չորրորդ՝ յղութեան միջոցին մայրը ամենեւին որ եւ իցէ կրից շարժելու եւ կամ ծանր աշխատութիւն մը ընելու չէ . հինգերորդ՝ մօրը երեւակայութիւնը շարժելու է գեղեցիկ պատկերներու եւ նկարներու եւ արձաններու վրայ . վեցերորդ՝ յղութեան միջոցին մայրը ու-

րախ զուսարթ, բարեբարոյ, զործունեայ եւ ասողջ
վիճակ մը ունենալու է :

5. Թէ զաւակը որո՞ւ նմանելու է : Կամ հօրը կամ մօրը եւ
կամ երկուքին ալ : Տղայ մը հօրը նմանելու համար՝
մայրը հօրը վրայ աւելի սէր ունենալու է, մօրը նմանե-
լու համար՝ հայրը մօրը վրայ աւելի սէր ունենալու է,
իսկ երկուքին ալ նմանելու համար՝ հաւասարաբար մէկզ-
մէկ սիրելու են : Շատ տղաքներ կը ծնին որ ոչ հօրը կը
նմանին եւ ոչ մօրը եւ ոչ երկուքին ալ, ասոր պատճա-
ռը անհաւատարմութենէն աւելի երեւակայութիւնն է :

4. Թէ ի՞նչպէս գիտնալու է այնպիսի կին ճշ որ ի՞նչ երկանը շրայ
ճշտ - եր ունենայ եւ նորա հաւասարեմ խայ, եւ կամ երէկ ճարտ ճշ որ ճշտ
ինչանը շրայ - եր ունենայ եւ հաւասարեմ խայ : Կազմարանական
այնպիսի օրէնքներ կան՝ որոնցմով առանց ամենեւին սը-
խալելու կարելի է հաւատարիմ եւ իւր ամուսնոյն վրայ
չարունակ սէր ունեցողը, անհաւատարիմ եւ իւր կո-
ղակցոյն վրայ շարունակ սէր շունեցողը որոշել. սակայն
մենք զանազան պատճառներով չեմք կրնար յիշեալ օ-
րէնքները հոս բացատրել, ուստի կ'աղաչեմք մեր ե-
րիտասարդ ընթերցողաց որ ամուսնանալէ առաջ կամ
իրենք ուսանին կազմարանական գիտութիւնը եւ կամ
մենք անձամբ հրահանգ առնուն այս կէտիս վրայ. ին-
չու որ անհնարին դառն եւ դժնդակ է ամուսնանալէ
վերջը զ՛ջալը . . . բայց թող արդէն ամուսնացեալ
մարդ մը կամ կին մը ամենեւին չիգայ մեզմէ հասկնա-
լու իւր կողակցոյն հաւատարմութիւնը կամ անհա-
ւատարմութիւնը, ըստ որում՝ մենք բացէ՛ի բաց կը
մերժեմք նոցա այս կէտիս վրայ բան մը խօսելու : Ար-
դէն ամուսնացեալներուն համար մենք միայն մէկ բան
մը կրնամք ընել, այսինքն կրնամք այնպիսի հաւանական
կանոններ տալ՝ որով իրենց ընտանեկան երջանկութիւնը
չի եղծուիր, մէկզմէկու եւ իրարու հաւատարիմ կը
լինին :

3. Թէ ի՞նչ այնպիսի ճշտներ որո՞ւն է իւրեւի շինի անհաւասարեմ

կազմէն յը իւր ճամբէն եւ զարձակելու, եւ նորա ընթացիկան սերը արծար-
ծելու: Պէտք է գիտնալ թէ անհաւատարիմ լինիլը, եւ
ընտանեկան սէր չունենալը տեսակ մը բարոյական հի-
ւանդութիւն է, որոյ դարման ընելը շատ դժուար չէ.
սակայն որովհետեւ ամեն կազմուածք մէկ չէ, եւ ո-
րովհետեւ այս կէտիս մէջ ամեն մէկ զատ կազմութիւն
զատ դարմանի կարօտ է, հետեւաբար չեմք կրնար
հոս ընդարձակորէն բացատրել նոյն դարմանները, զա-
նոնք գործադրելու միջոցները եւայլն. եւ ուստի այս
մասին մէջ ալ պատրաստ եմք անձամբ ծառայելու ա-
մեն անոնց որ կը խնդրեն մեր ծառայութիւնը:

6. Թէ ինչպէ՞ս կարելի է յղ-Ռի-նը անվասն գ անցնել: Յղի կին
մը ուրիշ որ եւ իցէ կինէ մը ամենեւին տարբերութիւն
չունի առողջութեան կողմանէ, բայց զգայաբար աւելի
զգայուն լինելուն շատ ենթակայ է հիւանդութեանց,
ուստի յղի կին մը սկստք է որ առանց յիմարական
չափազանցութիւններու եւ փափկասիրութիւններու,
նախ՝ միշտ քաղցրաբանութեամբ գործածուի. երկ-
րորդ՝ յանկարծական դէպքերէ զգուշանալու է. եր-
րորդ՝ կերուխումի մէջ առողջապահական օրէնքներով
վարուելու է, գրգռիչ արեան անմաքրութիւն եւ ջը-
ղերու թոյլութիւն պատճառող ուտելիքներէ եւ խմե-
լիքներէ հեռու պահելու է. չորրորդ՝ հագուստները
միշտ թեթեւ, բրդեղէն եւ լայն լինելու են. հինգե-
րորդ՝ ոտքի վրայ առանց հոգնելու աշխատելու է. վե-
ցերորդ՝ այնքան քնանալու է որքանով որ գոհ կը լի-
լի. եօթներորդ՝ ամենեւին բամպակեղէն անկողնոյ մէջ
պառկելու չէ, այլ բրդեղէն. ութերորդ՝ նեղ կոշիկ
հագնելու չէ, նմանապէս գործածելու չէ ինչ որ մարմ-
նոյն որ եւ իցէ մէկ կողմը կը սեղմեն:

7. Թէ ցանկական զգացմունքը մեղք է: Ցանկական զգաց-
մունքը մենք է ըսողը, Ամենագէտ Արարչին եւ բնու-
թեան օրէնքին դէմ կը մեղանչէ, այլ սակայն ցանկա-
կան զգացմունքը օրինաւորաբար չի գործադրող մի

ալ միահաւասար կերպով յանցաւոր է, ինչպէս որ կերպակուր ուտելը օրինաւոր է եւ անհրաժեշտ. իսկ որկրամոլութիւնը եւ կամ ասոր հակառակ տկարանալու շափ անօթի մնալը յանցանք է եւ ասպօրինաւոր. նոյնքան ալ ցանկութիւնը անասնձ թողուլը եւ կամ զայն բոլորովին երեսէ, ձգելը յանցանք է եւ ասպօրինաւոր. ըստ որում ցանկութեան մոլի լինելով կենաց ամենէն կարեւոր տարրը շուտով իր մսխուի, բնութիւնը կ'եղծուի, ծերութիւնը եւ մահը շուտ կը հասնի. եւ ասոր հակառակ ցանկութիւնը բոլորովին կոտրելու աշխատիլը Արարչին մարդուս շնորհած մէկ սլարգելը մերժել լինելէն 'ի դատ մարդկային սեռին անմանը դէմ թշնամութիւն ընել եւ Աստուծոյ այն մեծ պատուիրանքը կոտրել է որ կ'ըսէ « անեցէ՛ք ». ցանկութեան զգացմունքն ին կոտրող մարդիկ ամենէն աւելի տկար, ապուշ, բթամիտ եւ անալիտան կը լինին: Գանկութեան մոլի լինող մը եւ ցանկութեան անզգայ մը միահաւասար կերպով յանցաւոր են, թէ որ հիւանդութեան մը արդիւնք չի լինի իւրեանց այս ասպօրինաւոր կացութիւնը:

Տ. Թէ ցանկական կերպը ինչպէս օրինաւորաբար գործածելու է: Աղջիկ մը որ արբունքի կամ շափահասութեան հասած է, այսինքն՝ ամսական արեան հոսումը սկսած, եւ կանոնաւոր կերպով եօթը տարի շարունակած է, ծննդական գործարանները իրենց կատարելութեանը հասած են, եւ ընդհանուր կազմութիւնը իւր օրինաւոր կացութեան մէջ մտած է՝ պարտի ամուսնանալ այնպիսի մէկու մը հետ, որոյ վրայ մէկ բնական համակրութիւն մը կամ սէր մը կ'զգայ, եւ որոյ կազմութիւնը հաճելի է իւր տեսութեանը. այսպէս ալ երիտասարդ մը՝ որուն արբունքը սկսած, ընդհանուր կազմութիւնը կատարելագործուած եւ ծննդական գործարանները իրենց կատարելութեանը հասած են՝ պարտաւոր է ամուսնանալ այնպիսի աղջկան մը հետ՝ որոյ վրայ ին-

քը մասնաւոր համակրութիւն եւ սէր կ'զգայ, եւ որոյ կերպարանքը հաճելի է իրեն, միայն թէ՛ թէ՛ օրիորդք եւ թէ՛ երիտասարդք պարտին մեծ խոհեմութիւն եւ ըզգուշութիւն բանեցնել որ չը լինի թէ իւրեանց ցանկական կրից առաջնորդութեամբ ամուսնական ընտրութիւն ընեն, ըստ որում ցանկական զգացումը անօթութեան զգացման պէս կրնայ մարդս սխալեցնել: Յայտնի է շատերուն որ անօթի մարդ մը շատ անգամ ամենայն սիրով եւ ախորժանօք կ'ուտէ այնպիսի կերակուր մը որ վերջը կը զղջայ եւ կը զգուի անկից. ասանկ ալ թէ որ մէկը իւր ցանկական կրից առաջնորդութեանը եթէ միայն ապաւինի՝ հարկաւ պիտի զղջայ իւր ընտրութեանը, եւ սխալի զգուի անկից որոյ համար վայրկեան մը առաջ իւր կեանքը անգամ տալու պատրաստ էր. ուստի աղջիկ մը կամ՝ երիտասարդ մը որ ամուսնանալու աստիճանին հասած է՝ պարտաւոր է իրեն այնպիսի կենակից մը ընտրել որոյ վրայ իւր հոգւոյն աւելի փափուկ զգացմամբը համակրութիւն կ'զգայ եւ սէր կ'ունենայ:

Մի միայն ամուսնական կենաց մէջ կարելի է ցանկական զգացումնքը օրինաւորաբար յագեցնել, վասն զի աշխարհիս հազարաւոր տարիներու փորձառութեամբը այս միջոցը միայն գտնուած է ցանկական զգացումնքը առանց վտանգաւոր ընելու յագեցընել. իսկ ասկից ՚ի զատ ուրիշ ամեն միջոց ՄԻՇՏ եւ ԱՆՇՈՒՇՏ վտանգաւոր է եւ ապօրինաւոր: Մարդս ո՛ր կրօնքի կ'ուզէ թո՛ղ ծառայէ, կ'ուզէ Քրիստոնեայ լինի, կ'ուզէ Մահմէտական, կ'ուզէ Հրէայ, կ'ուզէ Արաւսլաշտ, աշխարհիս ամեն կողմը ամեն տեղ եւ ամեն կրօնքի մէջ ամուսնութիւնը միայն օրինաւոր ճանչցուած է ցանկական կիրքը յագեցնելու համար, եւ ասկից դուրս ամեն ուրիշ միջոց թէ՛ կրօնապետներուն, թէ՛ իմաստասիրաց, թէ՛ քաղաքականութիւններուն եւ ալէզարդ փորձառութեան առջեւ միշտ ապօրինա-

ւոր սեպուած է եւ վտանգաւոր . ասոր կը միաբանին
արդի բոլոր կազմարանները , անդամազինները , բժիշկ-
ները եւ բնազինները :

9 . Թէ ամուսնութեան մէջ ցանկական զգացմանքը ինչպէ՞ս օրինա-
բար Գործածելու է : Յանկական զգացմունքը ամուսնա-
կան կենաց մէջ օրինաւորաբար յազեցնելու եւ ցաւա-
լից հետեւանքներու պատճառ չի տալու համար , նախ՝
երկու անհատներն ալ առողջ լինելու են , եւ մէկզմէկ
փոխադարձ սիրող . երկրորդ՝ ամեն մարդ իւր կազ-
մութեան ներածին չափ այս զգացման յազենումն
տալու է , ըստ սրում ինչպէս որ չափազանց կերակուր
ուտելով առողջութիւնը կը մնասի , նոյնպէս ալ ստէպ
եւ չափազանց մերձաւորութեամբ մարդուս ուղեղը
կ'այլայլի եւ հետեւաբար ընդհանուր ջղային դրութիւ-
նը կ'եղծուի , եւ շատ անգամ ալ մահառիթ հիւանդու-
թիւններ յառաջ կուգայ : Մենք թէեւ կ'ուզէինք որ
մարդիկ այս կէտիս մէջ բնութեան ձայնին հետեւէին ,
սակայն որովհետեւ արդէն ընդհանրապէս մարդիկ բը-
նութենէ հեռացեալ են , կը սլարտաւորիմք հետեւեալ
կանոնները տալ որոնցմով կարելի է անվտանգ մնալ
չափազանց ցանկութենէն . առաջին՝ կին մը կամ էրիկ
մարդ մը որ իւր բժիշկէն վկայեալ է իբր առաջին կար-
գի առողջ մէկը՝ կրնայ շարաթը երկու անգամ մեր-
ձաւորութիւն ընել . երկրորդ կարգի առողջ կազմու-
թիւն ունեցող մը շարաթը մի անգամ . երրորդ կար-
գինը տասն օրը մի անգամ . չորրորդ կարգինը տասն
եւ հինգ օրը մի անգամ . հինգերորդը՝ ամիսը մի անգամ .
վեցերորդը՝ երեք ամիսը մի անգամ . իսկ հիւանդ կամ
վատառողջ մէկը ամենեւին մերձաւորութիւն ընելու չէ ,
միայն թէ՛ եթէ իրեն վատառողջութիւնը մերձաւորու-
թեան տեղի չունենալէն պատճառած լինի՝ անատենը
պարտաւոր է բժիշկի խորհուրդով շարժիլ այս կէտիս
մէջ .

10 . Թէ ամուսնութեան մեք-ծելի է : Պէտք է գիտնալ որ

ամուլ սեպուած կանանց կամ էրիկ մարդոց հարիւրին իննսունը ամուլ չեն . այլ որ եւ իցէ հիւանդութեամբ մը կամ պատճառաւ մը իրենց ծննդական գործարանաց մէկը կամ մէկ քանին եղծուած է . եւ հետեւաբար թէ որ անդամազննութեան հմուտ բժշկի մը խնամքովը դարմանուին՝ անշուշտ կը բժշկուին եւ զաւակ կ'ունենան . տարիներով զաւակ չունեցող կանայք ամենեւին յուսահատելու պատճառ չունին , ըստ որում կան դարմաններ որոնցմով հնարաւոր է յղութեան տեղի ունենալը :



11 . Թէ շարունակ Ռոսի զաւակ բերողները կրնան ամուլ զաւակ ծնել : Աս ալ տեսակ մը ցաւալի հիւանդութիւն է , որ շատ կանայք ենթակայ են , սակայն ուրախ եմ յիշելու որ այս հիւանդութիւնն ալ կարելի է բժշկիլ , եւ ամենեւին պատճառ չիկայ յուսահատելու :

12 . Թէ ծննդական գործարանաց վերաբերեալ հիւանդութիւնները կամ պակասաւորութիւնները դարձանելու համար ինչպէ՞ս բժշկի ընթացեալ է : Յիրաւի այս ամենէն մեծ խնդիրն է լուծելու , եւ շատ ալ դժուարին , ինչու որ թէ որ մէկը առանց բժիշկ ընտրելու կարողութիւնը ունենալու՝ ամենէն առաջ իր դէմը ելլողին յանձնէ ինքզինքը , անշուշտ ամենամեծ հաւանականութիւն կայ որ չէ թէ միայն չի պիտի առողջանայ այլ նաեւս աւելի հիւանդ պիտի լինի . ուստի հարկ է ինձ հոս յիշել թէ ան որ ծննդական գործանաց վերաբերեալ որ եւ իցէ պակասութիւն մը կամ հիւանդութիւն մը կամ ախտաւորութիւն մը ունի , թո՛ղ նախ իւր հիւանդութեան բնութիւնը եւ պատճառները ուսանի այս կէտիս վրայ հմտութիւն ունեցող անձէ մը , եւ յետոյ յանձնէ ինքզինքը այն բժիշկին , որոյ համար որ կրնայ երաշխաւորել յիշեալ ծննդական գործարանաց կազմութեանը եւ բնութեանը վրայ տեղեկութիւն ունեցողը , բայց թէ որ այս անհնար լինի թո՛ղ այնպիսի բժիշկի մը դարմաններն ընդունի որ բժշկական դեղերէն աւելի ուրիշ արտաքին , բարոյա-

յական եւ առողջապահական միջոցներու կը դիմէ . ինչու որ պէտք է գիտնալ թէ բնութիւնը այս տեսակ հիւանդութեանց մեծապէս կը նպաստէ . եւ գրեթէ ամենեւին կարօտութիւն չի թողուր հանքային դեղերու :

Մեր այս աշխատասիրութիւնը առայժմ կը վերջացնեմք , յուսալով որ թէ որ նա հարկ եղած ընդունելութիւնը գտնէ դարձեալ պատեհութիւն ունենամք աւելի ընդարձակ , աւելի պատկերազարդ մի ալ հրատարակել յօգուտ ամեն անոնց՝ որոնք կամ ամուսնացեալ են եւ կամ թէ պիտի ամուսնանան . որքան տարբեր պիտի լինէր մարդկային սեռին կացութիւնը թէ որ նա յարգէր ինչ որ երկինք իրեն շնորհած է , եւ ճշմարիտ սարկեչտութեան համեմատ ուսանէր այն ամեն օրէնքները՝ որոնց ինքն հպատակ է . այն օրէնքները որոնց վրայ այսօր տեղեկութիւն չունենալով եղկելի կացութեան մը մէջ ինկած է , ուր թէ որ շարունակէ մնալ՝ անտարակուսելի է իւր կործանումը . այս ըսածս թէ որ ճշմարիտ չէ՝ թող խօսի աշխարհ ինչ որ ունի ըսելու :

ՎԵՐՁ



ՄԱՆԿԱՏԱԾՈՒԹԻՒՆ

ՈՐ Է

ԲՆԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԻՄԸՑԱԿԱՆ

ՀՐԱՀԱՆԳ

ԽՆԱԾԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՆԿԱՆՑ

ԱՇԽԱՏԱՍԻՐ ԵՎ

ՍԵՐՈՎԲԷ ՎԻՉԵՆԵԱՆ

1844

ԱՐՈՒԵՍՏ ԵՐԿԱՅՆՈՒԿԵՑՈՒԹԵԱՆ

ՈՐ Է

ԱՌՈՂՋ ԵՐԿԱՅՆ ՈՒ ԵՐՋԱՆԻԿ ԱՊՐԵԼՈՒ ՈՒՍՈՒՄԸ

ՇԱՐԱԴՐԵՑ

ԱՆԴՐԷԱՍ ՓՈՓՈՎԻՉ ՀԱՅԱՋԳԻ ԲԺԻՇԿԸ

1850

Այս երկու ընտիր եւ օգտակար աշխատասիրու-
թիւնները ով որ շունի, թող աճասարէ ժամ մը ա-
ռաջ հատ մը ունենալ եւ ունեցողները թէ որ կը սի-
րեն իրենց ընկերները՝ թող համոզեն զանոնք որ մէյ-
մէկ օրինակ յիշեալ գիրքերէն ունենան, եւ վերջա-
պէս ով որ կը սիրէ իւր անձը իւր ընտանիքը իւր զաւ-
կըները եւ իւր ազգը՝ փոխանակ ունայն գթօսանքնե-
րով իւր ժամանակը անցնելու, թող կարգայ այս գիր-
քերը, վստահ լինելով որ շուտով պիտի շատ մը երա-
նութիւններ վայելէ թէ որ նոցա տուած հրահանգնե-
րովը շարժի :

ԳԵՐԵԶՄԱՆՔ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ

ԿԱՄ

ՏՌՓԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ

ԵՒՐՈՊԻՈՅ ԱՐԴԻ ԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԵՄԱՏ

ԱՐՄԵՆԱԿ ՀԱՅԿՈՒՆԻ


Մեր այս փոքրիկ տետրակին գտած ընդունելու թիւերը կը պարտաւորէ զմեզ՝ շնորհակալութիւննիս յայտնել ընդհանուր Ազգիս :

Ով որ կ'ուզէ ծախու առնուլ, ամեն Հայ գրաված առներուն քով կրնայ գտնել :

ՀԵՂԻՆԱԿԻՆ ՈՒՐԻՇ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ


- 1 . Հիրսիլիա ողբերգութիւն
- 2 . Կատարին »
- 3 . Երնչակ »
- 4 . Արայ գեղեցիկ »
- 5 . Անճէլինա »
- 6 . Ողիմպիադա »
- 7 . Թուրֆանտա Տիկին
- 8 . Պղատուն 'ի Վոսբոր 2 տետրակ
- 9 . Բնական խնամառարութիւն մարց
- 10 . Եունկի չորս գիշերները
- 11 . Էլիզա
- 12 . Սիրահարաց բարեկամ

Պատկեր. Ա.





261 5



261 7






264 1




264 2



Горыч. ♀.



Պատկեր. Բ.




242 4






265



266








Tabl 8



262 9




262 10







2te 11



2te 12




261 13



h


261 14




II. 962. 9



U. 26L. 10




U. 26L. 11.






Pl. 261 12



У.Ш. № 1 ЗНАКОМСТВО ФРИЗЕРОВ
С.С.Р.А. ПУОЛИЧЕНА БИОЛИТЕВА *
7/11 1922
ИМЕНА. МЯСНИКОВА
ИЗДАТЕЛЬСТВО ИДЪ





854

55

2013

F-41

